# ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱԼ 'Ի Հ. ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԷ
ՍԻՒՐՄԷԼԵԱՆ
'Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ.

ՏՊԱԳՐԵԱԼ ՀՐԱՄԱՆԱՒ ԱՐՀԻԱՊԱՏԻՒ ՏԵԱՌՆ
ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱԳՈՆՑ
ԱԲԲԱՅԻ ԵՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ։



1818. ՌՄԿԷ.

'Ի ՎԷՆԷՏԻԿ

'Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Որք միանգամ 'ի նախնի դարս ժամանակաց նախանձախնդիր գտան քաղաքական բարեկարգութեան, նախ առաջին խնամ կալան գիտողութեանց արարչադիր կարգի փոփոխութեան աւուրց և ժամանակաց. որովք հարկ է վարիլ և կենցաղական իրողութեանց. զի ըստ առաւելութեան և նուազութեան աւուրց, ըստ պէսպիսութեան եղանակաց և բոլորելոյ տարւոյն, ուղիղ մարթասցին կանոնափակ օրինօք տիեզերակարգ շրջանացն՝ յերիւրել և զվիճակ քաղաքավար ընթացից առ 'ի պէտս մարդկային ընկերութեան: Այն իրի գրեթէ առ համօրէն ազինս՝ մի 'ի գլխաւոր ուսմանց համարեցաւ միշտ և Տումարական գիտութիւնն իբր պիտանի և միակ կարևոր կենցաղական գործոց. մինչև իմաստնոյն Սողոմոնի դասել զսա ընդ ձիրս ածատուր պարգևաց, որում անձամբ գոլով հաղորդակից յառատախնամ տեսչութենէն, շնորհապարտ մտօք խոստովանի զանձն ստացեալ զանվրէպ գիտութիւն սկզբան և միջնոյ և կատարածի ժամուց և ժամանակաց, փոփոխութեան շրջանաց և բոլորման տարւոյ. (Իմաստ. Է. 17.) զորովք յածի առաջիկայս գիտութիւն Տումարական: Զի սորա է գտանել զթիւ աւուրց ընթացից արեգական և լուսնի. բաշխել զնոսին 'ի շաբաթս, յամիսս և 'ի տօնս, որք լինին յընթացս տարւոյ. որպէս զի անվրէպ կանոնօք ամ ըստ ամէ կատարեսցին

ՀՍՍՀ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

շրջանք տօնական հանդիսից և այլոց կենցաղական գործառնութեանց :

Այս ուսումն թէպէտ և գտանի յազգի մերում 'ի վաղ ժամանակաց հետէ, սակայն գրաւոր աւանդութիւն կանոնաց սորա կարգաւորեալ օրինօք չերևի 'ի միջի, բաց 'ի հատուկտիր գրուածոց Պարզատումար անուանելոյ . յորս պակասին կարևոր և պիտանի հմտութիւնք, որպէս և բացայայտ հաշիւք : Որոյն սակս յօժարեցաք ընծայել զսա մերազգի Ուսումնասիրաց, դիւրացուցեալ զկանոնսն, և ամփոփեալ 'ի ճիշդ և 'ի կարճառօտ հաշիւս 'ի ձեռն զանազան աղիւսակաց, որ 'ի պէտս գիտոյ եօթներեկաց՝ վերադրաց, դրոյ տարւոյն, և այլոց կարևոր գիտելեաց, զորս սովորութիւն է կոչել Տարեկան բանալիս :

Յաւելաք 'ի վերջոյ և զպիտանի տեղեկութիւնս նորոյ Տումարին, որ Գրիգորեան անուանի . որով յայտնին և վրիպակք Ծռազատկին, հանդերձ այլ ևս ուղղելի մասամբք հին տումարին :

Ակն ունիմք՝ թէ պիտանի այս երկասիրութիւն՝ որ 'ի բազում ժամանակաց ցանկացեալն էր, և 'ի մէնջ մտադիւր կատարեալ այժմ, հաճոյական ընծայեսցի բանաւոր Ուսումնասիրաց . որոց քաղցր են օգտակար տեղեկութիւնք առ 'ի չափել ոչ սոսկ զժամանակաց շրջանս, այլ և զմարդկային կենաց 'ի քաղաքականս և յեկեղեցականս :



# ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

---

Ա. ՏՈՒՄԱՐ ԱՆՈՒՆՍ՝ Ի ՅՈՒՆԱԿԱՆԷՆ τομάριον, ընդհանրապէս իմացեալ լինի այն մատեան, յորում գրին բանք յիշատակաց ըստ տարեաց, ըստ ամսոց, և ըստ աւուրց. ուր գրին և անուանք իշխանաց, եկամուտք կալուածոց, և հաշիւք տուրևառից. որ ոչ բերէ ինչ ուսումն 'ի մէջ. այլ է յաւէտ գիրք յիշատակարանաց, կամ արձանագիր։ Յայս միտս (Ե. Եզր. Զ. 2.) * Եգիտ 'ի տունս Թագաւորաց ,, գրոց յիշատակարանացն... գլուխ մի գրոյ տումարի. ,, և զայս ինչ գրեալ էր 'ի գիրս յիշատակարանին ||։

Բայց տիրապէս տումար կոչի այն, որ ձևաւէ զպէսպէս փոփոխութեանց և զբաժանմանց քաղաքական ժամանակաց, զընթացից արեգական, և զշրջանաց լուսնի. ուր և պէսպէս աղիւսակօք և հաշուօք ցուցանի ծնունդ և լրումն լուսնի, ամսամուտք, և պատկերք տօնից, որ յատկապէս է ուսումն, կամ գիտութիւն տումարական։

Բ. Այս փոփոխութիւն կամ բաժանումն ժամանակաց ասացաւ քաղաքական, զի կախի 'ի կարգմանէ և 'ի սահմանելոյ մարդկան՝ ըստ սովորութեան իւրաքանչիւր քաղաքի և ազգի. վասն որոյ ըստ զանազան ազգաց, զանազան են և կարգաւորութիւնք տումարաց և տօնից. զանազան են և թուականք ամաց իւրաքանչիւր ազգաց, որք սկիզբն առնուն 'ի զանազան գլխոց։ Օրինակ՝ թուականն հռովմայեցւոց սկիզբն էառ 'ի շինութենէ քաղաքին Հռովմայ։ Թուականն յունաց սկիզբն առնու յետ մահուան մեծին աղեքսանդրի։ Նոյնպէս

և թուականն Հայոց սկսանի 'ի նորոգութէն տումարին ։ Այսն որոյ բաժանումն ժամանակաց, կամ հաշիւք ամաց գոլով ըստ սովորութեան իւրաքանչիւր ազգի՝ կամ քաղաքի, կոչեցաւ թուականն ։

Գ. Հռովմայեցիք զայս տումարագիր ըստ բարբառոյ իւրեանց կոչեն Կալէնտարիում. յորմէ և բառս Կաղանդ, որ նշանակէ Ամսամուտ, կամ առաջին օր ամսոյ. զի 'ի հնումն Հռովմայեցիք գրէին գլխագիր տառիւք 'ի սկիզբն իւրաքանչիւր ամսոց զայս բառ Կաղանդ, որ ծագեալ է 'ի լատին բայէ՝ Կալօ. որ նշանակէ՝ գոչել, մեծաձայն կարդալ. զի յառաջ քան զկարգել զցուցակս աւուրց 'ի Հռովմայեցիս՝ (որ եղև յաւուրս Կ. փլաբիոսի գործակալի յամին Հռովմայ 450.) մին 'ի պաշտօնէից քրմապետին հսկէր յերևոյթ նոր լուսնի. որ և ընդ տեսանելն զնորումն լուսնի, ազդ առնէր զոհարար քըրմապետին. և նա 'ի մատուցանել զզոհն՝ հրաւիրէր զժողովուրդն 'ի կապիտոլիոն, և անդ բարձր ձայնիւ հրատարակէր զթիւ կաղանդի աւուրն, այսինքն՝ զթիւ աւուր ամսամտին. և զայս առնէր յամենայն նուագի յամսամտւոս կաղանդի ։

Դ. Գործածութիւն տոմարագրի է 'ի վաղնջուց յոյժ, որպէս յայտ է 'ի բազում ազգս ։ Զառաջինն գիտեմք առ ժամանակօք Մովսէսի 'ի գործ ածեալ 'ի ը. գիրս. 1487 ամօք յառաջ քան զՔրիստոս. Հրաման տուեալ վասն կանխոյ ամսոյ յելն յեգիպտոսէ՝ առնել զտօն զատկի 'ի չորեքտասաներորդ աւուր լուսնի. այս է՝ 'ի լրման լուսնի առաջին ամսոյն ըստ ը. գրոց, որ է Նիսան ։ Յետ 50 աւուր պասեքին կատարէին զտօն պէնտէկոստէին ։ Այնպէս զառաջինն օր եօթներորդ ամսոյն կոչէին՝ տօն փողոյ. և զտասներորդ նորին ամսոյ՝ տօն քաւութեան. ըստ սյսմ և այլք, որք ցուցանեն զկարգ տոմարագրութեանց ։

Ե. Տոմարագիրն Հռովմայեցւոց սկիզբն էառ 'ի ժամանակէ անտի Հռոմուլոսի առաջին թագաւորի և հիմնադրի Հռովմ քաղաքի, 749 ամօք յառաջ քան զՔրիստոս, որ զառաջինն թէպէտ և անկատար, այլ յետ ժամանակաց նորոգեալ՝ եկն 'ի կատարելութիւն ։ Քանզի Հռոմուլոս՝ արդարև այր հմուտ պատերազմաց առաւել, քան աստեղաբաշխ, կարգեաց զմիջոց ժամանակի տար-

ւոյն 'ի տասն ամիս. զսկիզբն տարւոյն եւ սկսանել
'ի գարնայնոյ՝ յառաջին օրէ մարտի. կարծելով նորա՝
թէ արեգակն կատարէ զընթացս իւր ընդ ամենայն
եղանակս տարւոյն 'ի 304 աւուրս միայն:

Գ. Յետ նորա Նումա պոմպիլիոս նորոգեաց զառա-
ջինն, կարգելով զամս երկոտասան լուսնական ամ-
սովք: Նա զի այս եւս կրէր ընդդիմութիւնս ոչ սակաւ,
վասն գոլոյն ըստ լուսնական ընթացիցն փոփոխական
եւ անհաստատ, եկն Յուլիոս կայսրն՝ որ ձեռն էարկ
խորհրդով երեւելի աստղաբաշխից նորոգել զայն տու-
մար երկրորդ անգամ. կարգեաց՝ 'ի միում չորրորդ-
ամի առնել նահանջ. զառաջին երիս ամն կոչեաց հա-
սարակ ամ. որ բաղկանայր 365 աւուրբք. իսկ զչորրորդն
կոչեաց նահանջ. որ բաղկանայր 366 աւուրբք. եւ այս
վասն 6 ժամուց՝ որ յաւելանայր յիւրաքանչիւր ամին.
որ եւ 'ի չորրորդ ամին առնէր օր մի ամբողջ:

Դ. 'Ի սմանէ յառաջ եկին եւս կատարելագոյն եւ
ուղղագոյն Տոմարագիրք. առաջինն կոչեցեալ Յու-
լեան. երկրորդն՝ Գրիգորեան. եւ երրորդն Արդեան նորա-
ձեւալ: Յուլեանն է այն՝ որ զառաջինն սկիզբն արար
ըստ իւրաքանչիւր աւուրց եօթներեկաց կարգել զեօթ-
ներեակս, կամ զկիրակագիրս 'ի ձեռն առաջին եօթն
տառից այբուբենից, ըստ շրջանի արեգական. եւս ըդ-
գիտ ծննդեան եւ լրման լուսնի, մանաւանդ զզատկա-
կանին ունել 'ի ձեռն ոսկեգրի, կամ որ նոյն է 'ի
ձեռն իննեւտասներեկի:

Ե. Գրիգորեանն է այն՝ որ ոչ 'ի ձեռն իննեւտասնե-
րեկի, այլ 'ի ձեռն շրջանի վերադրաց գտանէ զծնունդ
եւ զլրումն լուսնի. եւ այսու վերադրօք՝ որ եղեւ 'ի տե-
ղի իննեւտասներեկի, իբր կատարեալ եւ ուղիղ կանոնօք
վարի 'ի տումարի աստ. զոր ունիմք ճառել 'ի ստորեւ:

Զ. Զայս գրիգորեան տումար՝ որ անծանօթ է ա-
րեւելեան ազգաց, յարեւմտեայց անտի ոչ ընկալան զա-
ռաջինն հիւսիսականքն, այսինքն՝ Անգղիացիք, Հո-
լանտացիք, Շվետք. եւ այլն:

Բայց յամին 1700 քննեալ եւ տեսեալ աստղաբաշ-
խական զննութեամբ, թէ խոտորին յոյժ 'ի ճշմարիտ ժա-
մանակէ հասարակածի գարնայնոյ. որով եւ սխալէին
'ի լրման զատկական լուսնի, նորոգեցին եւ նոքա զիւ-
րեանց տումարագիրս, որ կոչեցաւ Արդեան նորաձեւալ տու-

մար ։ Այս տոմար մասնաւորապէս կանոնաւորէ ճիշդ զհասարակածն, և զլրումն զատկական լուսնի, յորմէ կախի տօն զատկի, և այլ ամ̃ շարժական տօնք, ոչ 'ի ձեռն իննևտասներեկի կամ վերադրի, այլ 'ի ձեռն ճիշդ աստղաբաշխական հաշուի, ըստ աղիւսակի Ռուտոլֆինի ։ Ս̃ա որոյ յամին 1700 բարձին 11 օր 'ի փետրվար ամսոյն՝, յետ 18 աւուրն փետրվարի մտեալ 'ի մարտ. որով միաբանեցան ընդ Գրիգորեան տոմարին, առանց ինչ այլայլութե̃ եղանակաց տարւոյն ։

---

ժ. Ուսումն տոմարագրութե̃ սկզբնաբար յածի զժամանակօք, և զբաժանմամբ նորա. քանզի ժամանակն 'ի սկզբանէ անտի 'ի հին դարուց բաժանեցաւ 'ի բազում մասունս. այս է՝ 'ի տարի, յամիս, 'ի շաբաթ, յօր, 'ի ժամ և 'ի րոպէ. և ըստ աստղաբաշխից նոյն րոպէ դարձեալ բաժանի 'ի 60 մանրերկրորդս. և իւրաքանչիւր մանրերկրորդք 'ի 60 մանրերրորդս, և ևս 'ի մանր յոյժ. զորոց խօսեսցուք մի առ մի սակաւուք՝ որչափ ինչ կանոնաւորեն հմտագոյն տոմարագէտք, վ̃ լինելոյ նոցա կարևոր առ ուսումն տոմարագրական ։

## ՏԱՐԻ

ժա. Բաժանումն ժամանակի 'ի տարիս, և յամիս, և յաւուրս յառաջ գայ յընթացից երկնային լուսաւորաց. որպէս վկայէ ս̃բ գիրն. (Ծնն. ա. 14.) * Եղի-
,,ցին լուսաւորք 'ի հաստատութե̃ երկնից . . . և եղի-
,,ցին 'ի նշանս, և 'ի ժամանակս, և յաւուրս, և 'ի
,,տարիս ‖ ։ Տարին տիրապէս սահմանի յայն միջոց ժամանակի, յորում արեգակն անցանէ ընդ երկոտասան կենդանատեսակս զօդիակոսին իւրով յետադարձ շարժմամբն, այս է՝ յարևմտից դէպ յարևելս ։

Եւ բաժանի 'ի բնական և 'ի քաղաքական ։ Տարին բնական բովանդակէ ճշդիւ զայն ամենայն միջոց ժամանակի, յորս անցանէ արեգակն յընթանալն ընդ ծիր խաւարման՝ սկսեալ 'ի միոյ կէտէ մինչև 'ի դարձն 'ի նոյն կէտ ։

ժբ. Այս միջոց ժամանակի ոչ է ճիշդ մի և նոյն՝ 'ի

պատճառս անհաւասարութե շարժման արեգական. որ և 'ի վաղ ժամանակաց անտի 'ի հին քրմացն եգիպտացւոց քաջ զննեալ, տեսաւ այն 'ի տարբերութէ քանակութե խաղոյն ծախելոյ, զոր վառէին 'ի մեհենի առաջի արձանի արամազդայ չաստուածոյն ամմոնայ: Վասն զի ճշդութե՛ մեծաւ չափելով՝ ո՛րչափ հնար էր՝ զորքանութի խաղոյն ծախելոյ յիւրաքանչիւր տարւոջ, գտանէին երևելի տարբերութիս տարւոջէ 'ի տարի. յորմէ մակաբերէին՝ թէ ոչ ամ̃ ամք անվրէպ են հաւասար:

ժգ. Ապա առ ժամանակօք աստեղաբաշխից քննեալ ըստ ճիշտ հաշուի իւրեանց, գտաւ ճշմարիտ այս մեքենական փորձ քրմաց եգիպտացւոց: Վասն զի տևողութի արեգակնային տարւոյ քննեալ հարիւր երեսուն ամօք յառաջ քան զՔս 'ի ժամանակս Հիպպարքոսի և Պտղոմեայ, ոչ է նոյն ընդ այնմ, որ 'ի հաշիւ արկաւ յետոյ 850 ամօք զկնի յԱլբատենեայ: Նոյնպէս տարբեր գտաւ 'ի ժամանակս Ալփոնսոսի թագաւորի գատիլիայ 500 ամօք զկնի: Եւ այն ևս՝ որ 'ի վերջասան դարու յերևելի աստեղաբաշխից քննեալ ամենայն ճշդտութե՛ ոչ գտաւ համաձայն ընդ այնոսիկ՝ որք յառաջնոց անտի և 'ի հնոց չափեալ գտան:

ժդ. Եւ ըստ այսմ՝ տևողութի արեգակնային տարւոյն, զոր ունիմք 'ի գիտողութենէ Պտղոմեայ՝ է մեծ տևողութիւն քան զայլոյն. և այն՝ որ 'ի ժամանակս Ալբատենեայ, է փոքր տևողութի քան զամենեցուն: Իսկ Թագաւորին Ալփոնսոսի ըստ իմիք միջին 'ի մէջ երկոցունց. և այն՝ որ 'ի վերջասան դարու քննեալ, երևի մերձենալ առ մեծագոյն տևողութին. Թէպէտ այս ամենայն այլ և այլ տևողութիւնք տարւոյ արևուն՝ սակաւ ինչ բոպէիւք տարբերէին:

ժե. Վասն որոյ Կոպերնիկոս՝ որ էր 'ի վախճանի ժե դարուն, կշռադատեալ հաստատեաց՝ թէ այսչափ պէսպէս անհաւասարութեան պա՛րտ է ունել որոշ իմն շրջան. և թէ յետ որոշ շրջանի ժամանակի, անցանեն այն ամ̃ տարբերութիք ամաց, և դառնան առ առաջին վիճակ: Եւ այնպէս 'ի ձեռն տարժանաւոր հաշուից եգիտ շրջանաւ իբր 1716 ամաց՝ միջին իմն ճանապարհ. որոշելով զմիջական տևողութի իմն 'ի մէջ մեծի և 'ի մէջ փոքու տարբերութե հաշուից. որպէս թէ այն իցէ հաստատուն, մշտնջենաւոր և անփոփոխ. և ըստ

այսմ տարին պարունակէ աւուրս 365 . ժամս . 5 . րոպէս 48' . 45'' . կամ իբր 49' : և այս հաշիւ միջոցի միոյ տարւոյ կոչեցաւ միջակային ժամանակ, և է ընկալեալ առ հասարակ յաստղաբաշխից, և հաստատեալ 'ի հեղինակէ գրիգորեան տումարի : Այս է սահման և տեւողութե բնական տարւոյ :

ժզ . Իսկ քաղաքական տարին արևու է 365 օր միայն . առանց զմնաս ածելոյ զժամս և զրոպէս . միայն յիւրաքանչիւր չորրորդ ամին ունի 366 օր . որ կոչի նահանջ :

Աւստի տարին բաժանի ևս 'ի հասարակ և 'ի նահանջ :

Հասարակ տարին է, որ ունի յինքեան 365 օր : Իսկ նահանջ տարին ունի 366 օր . կամ՝ որ ունի զմի օր աւելի քան զհասարակ տարին . այսպէս է ամն արեգակնային :

## Ամ լուսնական :

ժէ . Գոյ ևս ամ լուսնական՝ կանոնաւորեալ ըստ շարժման լուսնի, որ երկոտասան լուսնական ամսովք պարագայեալ, կոչի ամ լուսնական . առեալ լինի երիւք օրինակօք : Ամ լուսնական աստղաբաշխական : Ամ լուսնական քաղաքական, կամ որ նոյն է հասարակ . և Ամ լուսնական վերադրեալ կամ նահանջ :

ժը . Աստղաբաշխական ամն լուսնական պարունակէ յինքեան 354 օր . 8 ժամ . 48 րոպէ նախնական, և 38 րոպէ երկրորդական : Հասարակ կամ քաղաքական ամն լուսնական պարունակէ միայն 354 օր, առանց զմնաս ածելոյ զժամս և զրոպէս : Վերադրեալ կամ նահանջ ամն լուսնական պարունակէ յինքեան զերեքտասան ամիս լուսնի . վասն որոյ և ունի իբր 384 օր :

## Ամք հռովմայեցւոց :

ժթ . Ամն հռովմայեցւոց կարգեալ 'ի Հռոմուլոսէ՝ սկիզբն էառ 749 ամօք յառաջ քան զՔՍ . սահմանելով զմիջոց տարւոյն 'ի տասն ամիսս . զսկիզբն տարւոյն եդ 'ի գարնանային ժամանակէ : Առաջին ամիսն՝ մարտ . ապա՝ ապրիլ . մայիս . յունիս, գուինտիլիս այսինքն՝ հինգերորդ . սեքստիլիս, որ է վեցերորդ՝ սեպտեմբեր, եօթներորդ . հոկտեմբեր, ութերորդ . նոյեմ-

բեր , նոյեմբեր , դեկտեմբեր , [illegible] ։ Զորից ամսոյն այսինքն՝ մարտի մայիսի , քուինտիլեի , և հոկտեմբերի եդ աւուրս 31 · մնացեալ վեց ամսոց 30 աւուրս · որով համ աւուրք տասն ամսոցն լինէին 304 · կարծելով թէ 'ի նոյնչափ աւուրս կատարէ արեգակն զընթացս իւր ընդ համ եղանակս տարւոյն · ըստ վկայելոյ Ովիդիոսի · (տարեգ. գիրք. ա ։) * Յորժամ Հռոմուլոս կարգ եդ ժամանակի , կարծէր՝ թէ ամի ունէր զամիսս տասն ‖ ։ Այլ ըստ այսմ 50 աւուրբք պակաս լինէր քան զճշմարիտ ամի լուսնական , և 61 աւուրբք պակաս քան զամի արեգակնային ։ Այլ անդէն վաղվաղակի յայտնի ծանեաւ զնուազութիւն աւուրց՝ իւրոյ սահմանեալ տարւոյն · ուստի կամելով դնել զայն 'ի կարգի , վճռեաց զի համ աւուրք՝ որք առաւելուն քան զտասն ամիսս , դիցին 'ի կարգի առանց ինչ անուան ամսոյ իբր Աւելեաց 'ի վերայ այլոց · որ և եղև այնպէս յիւրում ժամանակի ։

Ժ. Այլ առ տէրութեան Նումայի Պոմպիլիոսի յաջորդի Հռոմուլոսի , որ տեղեակ ևս էր յիրս ինչ աստղաբաշխութեան , եղև առաջին նորոգութիւն տոմարագրի Հռովմայեցւոց ։ Սա տեղեկացեալ սովորութեան յունաց և եգիպտացւոց՝ կարգեաց յայնժամ զամի լուսնական · և փոխանակ 354 աւուրցն , զոր յոյնք և եգիպտացիք տային իւրեանց հասարակ լուսնական տարւոյն , սա ետ իւրումն տարւոյ 355 · և 'ի վերայ տասն ամսոց՝ որ 'ի Հռոմուլոսէ կարգեալ , յաւել զայլ երկուս նոր ամիսս , զառաջինն կոչելով Յունուար , և զերկրորդն՝ Փետրուար ։ Կամեցաւ ևս՝ զի յունուար ամիսն , զոր եդ յարևադարձն ձմերայնոյ , եղիցի առաջին ամիս տարւոյ 'ի տեղի մարտի ամսոյ՝ որ առաջին էր կարգեալ 'ի Հռոմուլոսէ 'ի հասարակածն գարնայնոյ ։ Այս եղև առաջին նորոգութիւն Հռովմայեցւոց տումարագրի ։

ԺԱ. Բայց և սա բազմօք կրէր ընդդիմութիւնս առ Հռովմայեցիս անդ , զի ամի այն գոլով լուսնական և փոփոխական , տօնք զոհից նոցա գային անկանէին յայնպիսի եղանակս տարւոյն , որ ընդ հակառակս ելանէր ըստ սահմանելոյ նոցա զառաջինն · մինչև զտօնսն՝ զորս պարտ էին կատարել յաւուրս գարնայնոյ , լինէր կատարել յաւուրս աշնայնոյ , և զայլս 'ի ժամանակս ձմերայնոյ , վասն փոփոխական գոլոյ լուսնական ամսոցն՝ նկատմամբ ընթացից արեգական ։

իբ. Եւ այս փոփոխութիւն այնչափ եանց ըստ չափն, մինչեւ Յուլիոսի կայսեր, եւ մեծի քրմապետին ստիպել 'ի նորոգել երկրորդ անգամ զտումարագիրս իւրեանց. որոց վասն եւ բերել կայսրն յԱղեքսանդրեայ 'ի Հռովմ զաստղաբաշխն Սոսիկլինոս, որ երեւելի եւ հռչակաւորն էր 'ի ժամանակին յայնմիկ առ եգիպտացիս. որ եւ յետ բազում քննութեանց 'ի վերայ այսր նիւթոյ հրամանաւ կայսերն, եցոյց թէ կարգադրութիւն ժամանակաց 'ի տումարագիրս չէ հնար առնուլ զանշարժ եւ զանփոփոխ հաստատութիւն, եթէ ոչ տիրապէս կարգեսցի այն ըստ տարեկան ընթացից արեգական, հակառակ գործածութեան առաջնոյ, որ ըստ փոփոխական ընթացից լուսնի:

իգ. Յայնմ ժամանակի իբր հաւաստի իմն էր առ աստեղաբաշխս, թէ տեւողութիւն տարւոյն ըստ ընթացից արեգական որոշակի էր աւուրս 365. եւ ժամս 6. ոչ աւելի եւ ոչ նուազ: Վասն որոյ կարգեալ սահմանեաց Յուլիոս կայսրն յիւրում տումարագրի զամն ըստ ընթացից արեգական 365 աւուրց, եւ եթող զվեց ժամս առանց հաշուելոյ. որ 'ի չորրորդ ամին առնէր 24 ժամ, որով առաւելեալ օր մի ամբողջ, ասաց առնել նահանջ. եւ այնպէս զերիս ամս կոչէր հասարակ ամ, իսկ զչորրորդն նահանջ. որ ունէր աւուրս 366. յաւելլով օր մի 'ի փետրուար ամիսն:

իդ.

| Ամսոց հռովմայեցւոց: | | |
|---|---|---|
| Յունուար. | 31 | 31 |
| Փետրուար. | 28 | 59 |
| Մարտ. | 31 | 90 |
| Ապրիլ. | 30 | 120 |
| Մայիս. | 31 | 151 |
| Յունիս. | 30 | 181 |
| Յուլիս. | 31 | 212 |
| Օգոստոս. | 31 | 243 |
| Սեպտեմբեր. | 30 | 273 |
| Հոկտեմբեր. | 31 | 304 |
| Նոյեմբեր. | 30 | 334 |
| Դեկտեմբեր. | 31 | 365 |

'Ի սմա տեսանի ոչ միայն որքանութիւն աւուրց ամսոց, այլ եւ գումար ամենայն ամսոց աւուրց:

Ամիսք գրեալք աստէն են հասարակ ամին. վասն զի 'ի նահանջ ամին փետրուարն ունի 29 օր. եւ գումար աւուրցն 366:

ԻԵ. Նորոգութիւն տումարագրիս այս եղեւ 46 ամօք յառաջ քան զՔրիստոս. գոլով անցեալ իբր 650 ամ յետ նորոգութեան Նումայի Պոմպիլիոսի: Ուստի դժուարին իմն թուէր բնաւորութեան հռովմայեցւոց սովորելոց յերկար ժամանակաց անտի ընդ ամս լուսնականս, առնել լաւութք այսպիսի փոփոխութեան: Վասն որոյ եւ Յուլիոս կայսրն ոչ կամեցաւ առնել փոփոխութիւն ինչ ոչ կարգի, եւ ոչ անուան ամսոց կարգելոց յառաջնոց անտի. այլեւ ոչ կամեցաւ սկիզբն առնել տարւոյն ճիշտ յաւուր արեւադարձի ձմերայնոյ, այլ խորհրդով իմն ընտրեաց զսկիզբն տարւոյն առնել 'ի ծննդեան նոր լուսնի, որ անմիջապէս զհետ գայր. որ եւ դիպաւ յայնժամ յետ ութ աւուր նոյն արեւադարձի. եւ այնպէս ամն Յուլեան միշտ զնոյն սկզբնաւորութիւն աւուրն պահեաց մինչեւ ցայժմ. որ է առաջին օր Յունվարի՝ ութ կամ ինն աւուրբ զկնի արեւադարձի այծեղջեր, եղեալ համդէպ առաջին աւուրն յունվարի թիւ 1 շրջանի իննեւտասներեկի:

ԻԶ. Այս որոշումն արեգակնային տարւոյ ընկալեալ եղեւ առ հասարակ յայնմ ժամանակէ եւ այսր գրեթէ յամենայն ազգաց, եւս եւ 'ի քրիստոնէից, հռչակեալ յանուն Յուլիոսի՝ Յուլեան տումար: Նաեւ առ 'ի պատիւ անուան Յուլիոսի, Մարկոս Անտոնիոս հիւպատոս կարգեաց, զի ամիսն Քուինտիլէ, այսինքն հինգերորդ. յորում ծնեալ էր Յուլիոս կայսրն, կոչեսցի յանուն կայսերն՝ Յուլիս: Որպէս եւ ամիսն Սեքստիլէ, որ է վեցերորդն, կոչեցաւ յանուն Օգոստոսի կայսերն՝ Օգոստոս. եւ մինչեւ ցայսօր ժամանակի նոյնն անուամբք վարին ամիսք հռովմայեցւոց:

Ըստ յունաց:

ԻԷ. Յոյնք 'ի հնումն կարգեցին զամս իւրեանց՝ ոչ միայն հայելով 'ի շարժումն լուսնի, այլ եւ յընթացս արեւուն. եւ կարծելով՝ թէ զուգընթացական շարժումն լուսնի կատարի ճիշդ 'ի 30 աւուրս, կացուցին զամս իւրեանց յերկոտասան լուսնական ամիսս, ուստի եւ յաւուրս 360: Բայց փութով տեսեալ զսխալանս իւրեանց, բարձին զ6 օր, առ 'ի վերածել զամն լուսնական յաւուրս 354. եւ զի այս ամ լուսնական նուազ

է քան զարեգակնայինն մետասան աւուրբք , պատշաճ վարկան 'ի միաբանել զանհաւասարութիւն երկուց լուսաւորացս , կարգել յետ երկուց ամաց զնահանջ ամիս մի 22 աւուրբք , զոր կոչէին ἐμβολιμαῖος , այս է՝ նահանջ կամ միջանկեալ ամիս ։

ԻԷ . Յետ ժամանակաց ինչ տեսեալ ես՝ թէ 6 ժամն՝ որ առաւելուլ քան զ365 աւուրս տարւոյն , ( զոր 'ի հաշիւ դնել չէր նոցա ինչ փոյթ , ) 'ի վախճան չորրորդ ամին 'ի մի գումարեալ՝ յաւելանայր օր մի ամբողջ . վ̅ այնորիկ ստիպեցան փոփոխել զկարգ նահանջ ամսոյն իւրեանց , և դնել 'ի վերջն չորրորդ ամին . այնպէս զի յառաջին երիս ամսն թողուին միայն 354 աւուրս երկոտասան լուսնական ամսոց՝ ըստ անուամբ Հասարակ ամաց , և 'ի չորրորդ ամին դնէին 399 աւուրս՝ յաւելմամբ միոյ ամսոյ և կիսոյ , այսինքն 45 աւուրբք . հաշուելով չորիցս զմետասան աւուրս , ( որովք առաւելուլ ամն արեգակնային քան զամն լուսնական . ) և զմի օր՝ վասն 6 ժամուց կրկնելոց չորիցս 'ի չորրորդ ամին . և այնպէս ամք երկուց լուսաւորացս հաւասար ընթանային ։

ԻԸ . Վասն երևելի և յիշատակաց արժանի կացուցանելոյ զայս նահանջ , հանդիսացուցին զհուշակաւոր տօնն Ողիմպիաթայ խաղուն 'ի ժամանակս Իփիտոնի . յորմէ սկիզբն էառ հուշակեալն յոյժ 'ի պատմագիրս հաշիւ Թուականի ողիմպիաթին 772 ամօք յառաջ քան զՔ̅ս̅ , որոյ իւրաքանչիւրն փակէր յինքն զքառեակ ամս ։

Բայց և այնպէս յետ ժամանակաց քաջ ծանեան , թէ այն միջոց չորից ամաց ոչ բառնայր զամենայն անհաւասարութիւն՝ որ 'ի մէջ շրջանաց երկուց լուսաւորացս՝ արեգական և լուսնի ։ Վասն որոյ ստիպեցան կրկնել զայն և կարգել զշրջան՝ ութ ամաց . և այս ևս անբաւական գոլով՝ մուծին 'ի վախճանի այլ ևս մետասան ամս ։

ԻԹ . Այս շրջան մետասան ամաց ևս՝ անբաւական եղև 'ի բառնալ զանհաւասարութիւն ընթացից արեգական և լուսնի . մինչև Աթենացւոց իսկ մնալ 'ի տարակուսի և 'ի շփոթս ։ Յայնժամ մին 'ի նոցանէ Մեթոն անուն նորա , հմուտ և տեղեակ յոյժ յաստեղագիտութեան ,'ի լոյս էած զշրջան 19 ամաց , ցուցանելով՝ թէ ա̅մ փոփոխ ընթացք երկուց լուսաւորացս 'ի միջո-

ցի իննևտասն ամաց, գային և միանգամայն 'ի նոյն կէտ, յորում 'ի սկզբան անդ էին ։ Եւ այս յայտնի ցուցանի այսու, զի բազմապատկելով զմի տարեկան ընթացս արևու, որ է 365 օր, և 6 ժամ՝ թուով 19 ամաց, արտադրեալն լինի 6939 օր. և 18 ժամ ։ Սոյնպէս բազմապատկեալ զմիջական ընթացս լուսնի միոյ ամսոյ, որ է 29 օր. 12 ժամ. 44'. 3". թուովս 235. (որ է գումար ընթացից լուսնոյ կատարելոյ 'ի միջոցի 19 ամաց.) արտադրեալն լինի 6939 օր. 16 ժամ. 31'. 45" ։ Որով յայտնի երևի, թէ 'ի միջոցի իննևտասն ամաց արևուն՝ լինի շրջան լուսնի 235 անգամ. և բոլոր տարբերութիւն ոչ է աւելի քան զմի ժամ և կէս յաւարտիլ իննևտասն ամաց. զայսմանէ 'ի սորին բաց ճիշտ հաշուի ժամանակիս ճառեսցուք ։

լա. Այս շրջան 19 ամաց գտեալ 'ի Մետոնէ 430 ամօք յառաջ քան զՔն, առ հասարակ կոչեցաւ Իննևտասաներեակ. և եղև ընկալեալ յաթենացւոց անտի այնչափ գովութեամբ և հաճութեամբ, մինչև կամիլ նոցա՝ զի գրեսցի այն Ոսկեդիր գլխագրովք, և դիցի 'ի Հրապարակի քաղաքին. յորմէ հրատարակեալ հռչակեցաւ անուանս Ոսկէթիւ ։

լբ. Գործածութիւն իննևտասներեակ շրջանիս հասարակ եղև ոչ միայն 'ի յունաստան, այլ և 'ի մէջ հրէից. որք 'ի հաշիւս տոմարականս զայն վարէին 'ի կանոնաւորել զամս իւրեանց. և ապա 'ի մէջ հռովմայեցւոց, ևս և 'ի մէջ քրիստոնէից. որպէս յայտնապէս տեսանի 'ի տոմարագիրս նոցա առ հասարակ ։

## Ամ հայոց ։

լգ. Ամ թուականութեան հայոց 'ի նախկին ժամանակաց թուի սկիզբն առեալ 'ի թագաւորել Պարոյրոյ առաջին թագաւորի հայոց, յորժամ միաբանեալ ընդ Վարբակայ Մարի, և ընդ Բեղեսեայ Նաբոնասարայ՝ բարձին զթագաւորութիւն ասորեստանի, և թագիւ պսակեցան ինքեանք ։ Յորում ժամանակի ընդ անուամբ Նաբոնասարայ կարգեցաւ թուական բաբելացւոց 743 ամօք յառաջ քան զՔն ։ (Պետաւիոս 'ի գիրս ուամ". ժամա". գիրք. է. գլ. 13.)

լդ. 'Ի ժամանակաց անտի Ամն հայոց էր արեգակ-



579

ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

նոյն. այս է՝ կանոնաւորեալ ըստ շարժման արեգական. որպէս էին և ամք բաբելոնացւոց, մարաց, պարսից և եգիպտացւոց (*). բայց ոչ ճիշտ և հաստատուն ըստ Յուլեան տումարի. որ յամենայն չորրորդ ամն յաւելուր օր մի վն 6 ժամուց. զի 'ի նախկին դարս անգ կարծէին, թէ ամն արեգական ունէր միայն 365 աւուրս. առանց միտ դնելոյ վեց ժամուցն ամենեւին:

Զաւուրս տարւոյն բաժանեցին յերկոտասան ամիս. իւրաքանչիւր ամսոյ տալով 30 աւուրս. և յետ երկոտասան ամսոյ՝ որ առնէր 360 աւուրս, եդին Աւելեաց 5. օր միայն. որով ամն տոմարական լինէր 365 օր. առանց առնելոյ երբէք նահանջ: Աւստի ամենայն ամք ըստ տոմարին հայոց են հասարակք և ոչ երբէք նահանջք:

լէ.

| Ամիսք հայոց. | Աւուրք ամսոց. | Գումարք աւուրց. |
|---|---|---|
| Նաւասարդ. | 30 | 30 |
| Հոռի. | 30 | 60 |
| Սահմի. | 30 | 90 |
| Տրէ. | 30 | 120 |
| Քաղոց. | 30 | 150 |
| Արաց. | 30 | 180 |
| Մեհեկան. | 30 | 210 |
| Արեգ. | 30 | 240 |
| Ահեկան. | 30 | 270 |
| Մարերի. | 30 | 300 |
| Մարգաց. | 30 | 330 |
| Հրոտից. | 30 | 360 |
| Աւելեաց. | 5 | 365 |

Աստէն 'ի կարգի հայկական ամսոցս տեսանիցին՝ ոչ միայն որքանութիք աւուրց իւրաքանչիւրոցն. ըսկսեալ 'ի Նաւասարդէ, որ է առաջին ամիս և տարեմուտ ըստ տոմարիս հայոց. այլ և գումարք աւուրց տարւոյ միոյ, մինչև յաւելեացն իսկ, որ [illegible] 5, ևս և 'ի նահանջ ամին:

Բայց քանզի տոմարն հռովմայեցւոց և յունաց յիւրաքանչիւր չորրորդ ամն առնէ նահանջ, և յայնժամ ամ նոցա ունի աւուրս 366. վասն այնորիկ ամն հայոց (ըստ տոմարին) յիւրաքանչիւր չորրորդ ամին աւուրբ միով խախտի և սակաւի քան զհռովմայեցւոյն:

Զոր օրինակ. Նաւասարդն՝ որ է առաջին ամիս

(*) Ըստ այսմ օրինակի էն ամենեքին ամք Բաբելոնացւոց, Մարաց, Պարսից և Եգիպտացւոց. որպէս վկայէ Պետաւիոս 'ի գիրս ուսմ''. ժամն''. գիրք. է. գլ. 13: Կուլիելմոս Պէվէրէճիօ. ժամանակագ''. գիրք. 1. գլ. ժ: Պլինիէլ. պատմ''. տօմ''. գիրք. բ. գլ. 2:

Հայոց, եթէ յամին 1808 դայր և անկանէր 'ի 31 օգոստոսի ըստ Հռովմայեցւոց, յետ չորից ամաց անցանելոյ՝ 'ի նահանջ ամին 1812, դայ և անկանի 'ի 30 օգոստոսի. և յետ չորից ամաց՝ 1816 ին, դայ 'ի 29. օգոստոսի. և այսպէս հետ զհետէ յամենայն չորրորդ ամս՝ մի մի աւուրբ յառաջ սկսանի. մինչև յետ 120 ամաց անցանելոյ՝ ամսով միով յառաջ սկսանի, և դայ անկանի 'Նաւասարդն 'ի 31 յուլիսի. և այսպէս գնալով յառաջ՝ յետ 1460 ամի անցանելոյ, դառնայ 'Նաւասարդն 'ի նոյն օր, յորում էր զառաջինն. այսինքն՝ 'ի 31 օգոստոսի. և յայնժամ թուականն Հայոց առաւելու և լինի 1461. իսկ յունացն և Հռովմայեցւոցն մնայ 1460: Վասն զի աւուրք միոյ ամբողջ տարւոյ՝ որ է 365, բազմնապատկեալ 4 թուով ամաց, յորս պակասի ամն մի մի աւուրբ՝ վասն 'ի բաց թողլոյ 6 ժամուցն. արտադրեալն լինի 1460. ուստի և յանցանել այսչափ ամաց, յառաջացեալ առաւելու թուականն Հայոց միով ամաւ քան զՅուլեանն:

ԼԶ. Գիտել պարտ է, զի 'ի նահանջ ամին 'ի մարտի առաջին աւուրն սկսանի յառաջ խաղալ թիւ մի յետադարձ շարժմանց. իսկ 'ի յունվարի և 'ի փետրվարի 'ի միւս ամին՝ որ յաջորդէ նահանջին:

ԼԷ. 'Ի հին տոմարագիրս Հայոց գտնի այսպէս: *Յո-
„բում ամի զթուականն Հայոց եդին. (այսինքն՝ Նոր
„թուականն՝ որ յամի Տն 553.) 'Նաւասարդն, որ
„տարւոյ գլուխ եղաւ Հայոց, և սկիզբն թուականին՝
„ըստ Հռովմայեցւոց ամսոյն 'ի յուլիս ամսոյ 'ի ԺԱ ե-
„դեալ է: Եւ յայտնութիւն 'ի յարաց ամսոյ Է էր. և
„առաջին ամ էր յետ նահանջին... յամէն չորս տարի
„թիւ Ա (այսինքն 1.) յառաջ շարժի յայտնութիւն‖:
Եւ զկնի ասէ. * 'Ի ՉԽԸ ամն եկն յայտնութիւն, և ե-
„մուտ 'ի Նաւասարդ‖: Այսինքն՝ օր յայտնութեանն
եկն 'ի Նաւասարդի 1:

Ահա 'ի բանից աստի տոմարագրին Հայոց՝ յայտնապէս ցուցանի ստուգութիւն ասացելոցս: Զի յառաջին ամի թուականիս Հայոց ամենեքին միաբան դնեն. թէ 'Նաւասարդն դայր 'ի յուլիս ամսոյ ԺԱ: Եւ թէ՝ յետ անցանելոյ ՉԽԸ ամաց թուականի Հայոց. այսինքն 748 թուին Հայոց, դայր և անկանէր 'Նաւասարդն 'ի յայտնութիւն Տն, որ է 'ի յունվարի 6: Վեր և գտնի անդ բա-

ցուցաւ պատճառն, թէ (յամէն չորս տարի թիւ ա՟ յառաջ շարժի յայտնութին.) այսինքն՝ յիւրաքանչիւր չորրորդ ամին օր մի յառաջ սկսանի ըստ տոմարիս մերոյ:

Գիտեմք զայլ ևս օրինակս ՚ի գրոց: Արեգ ամիս Հայոց՝ որ նախ ՚ի ժամանակս Թարգմանչաց համեմատէր մարտի ամսոյն. որպէս գնի ՚ի գիրս Եւսեբեայ (ժա՟. 2:) * Ամսոյն Ադարայ՝ որ է հայերէն Արեգ‖: Ըստ Հրէից Ադար ամսոյն անկանէր յայնժամ ՚ի փետրվարի կամ ՚ի մարտի: Իսկ Շնորհալին ՚ի վերջին թուղթ առ Իմմանուէլ գնէ: * Գրեցաւ ՚ի թուա-
,,կանութեան Հայոց ոձթ յամսեան Հայոց Արեգ. և
,,հռովմէացւոց Նոյեմբեր‖:

Դարձեալ վասն Ահեկանի ամսոյն գնէ սարկաւագ վարդապետն ՚ի մեկն՛՛ տումարին: * Յառաջին ամի
,,թուականին Հաստարակածն յԱհկի ժդ՟. և լրումն
,,զատկի Մարերի է‖: Իսկ սակայն ՚ի յիշատակարան Ը՟. Ճառնտ՛՛. գնի: * ՚Ի թուին քսի 1343. Հայոց չղբ՟
,,յամսեանն Հայոց յԱհկի Ժ օրն. և յամսեան Հռո-
,,ովմ՛՛. սեպտեմբերի ա՟ օր‖:

՚Ի յիշատակարան ժա՟. մաշտոցի: * ՚Ի թուականու-
,,թեան Հայոց վեցհարիւր եօթանասուն ՚ի յամսեանն մեհեկի, որ է օգոստոս‖: Իսկ սակայն Մեհեկին երբեմն գայ յամսեանն փետրվարի:

Յիշատակարան մեկն՛՛. սաղմոսի վարդան վարդապետի: * ռծթ. օգոստոսի ժե. Մարերի 3‖: Իսկ սակայն Մարերին երբեմն գայ ՚ի մայիսի, և երբեմն յապրիլի, որպէս ՚ի վերոյ եդաք՝ լրումն զատկի Մարերի է:

ԼԸ. Օրինակ յառաջաշարժութեան ամաց՝ յետադարձ գնացիւք ամսոյն. սկսեալ յամի տն 553. յորում ժամանակի եղաւ Թուականն Հայոց ։ (*)

| Ամք տն. | Թուական հայոց. | Նաւասարդի. 1. | Ամք տն. | Թուական հայոց. | Նաւասարդի. 1. |
|---|---|---|---|---|---|
| 553 | ա. | ՚ի յուլի. 11 | 672 | ճի. | ՚ի յունի. 11 |
| Ի նահանջ ամս տն։ | | | 676 | ճիդ. | ՚ի յունի. 10 |
| 556 | դ. | ՚ի յուլի. 10 | 680 | ճիը. | ՚ի յունի. 9 |
| 560 | ը. | ՚ի յուլի. 9 | 684 | ճլբ. | ՚ի յունի. 8 |
| 564 | ժբ. | ՚ի յուլի. 8 | 688 | ճլզ. | ՚ի յունի. 7 |
| 568 | ժզ. | ՚ի յուլի. 7 | 692 | ճխ. | ՚ի յունի. 6 |
| 572 | ի. | ՚ի յուլի. 6 | 696 | ճխդ. | ՚ի յունի. 5 |
| 576 | իդ. | ՚ի յուլի. 5 | 700 | ճխը. | ՚ի յունի. 4 |
| 580 | իը. | ՚ի յուլի. 4 | 704 | ճծբ. | ՚ի յունի. 3 |
| 584 | լբ. | ՚ի յուլի. 3 | 708 | ճծզ. | ՚ի յունի. 2 |
| 588 | լզ. | ՚ի յուլի. 2 | 712 | ճկ. | ՚ի յունի. 1 |
| 592 | խ. | ՚ի յուլի. 1 | 716 | ճկդ. | ՚ի մայիս. 31 |
| 596 | խդ. | ՚ի յունի. 30 | 720 | ճկը. | ՚ի մայիս. 30 |
| 600 | խը. | ՚ի յունի. 29 | 724 | ճհբ. | ՚ի մայիս. 29 |
| 604 | ծբ. | ՚ի յունի. 28 | 728 | ճհզ. | ՚ի մայիս. 28 |
| 608 | ծզ. | ՚ի յունի. 27 | 732 | ճձ. | ՚ի մայիս. 27 |
| 612 | կ. | ՚ի յունի. 26 | 736 | ճձդ. | ՚ի մայիս. 26 |
| 616 | կդ. | ՚ի յունի. 25 | 740 | ճձը. | ՚ի մայիս. 25 |
| 620 | կը. | ՚ի յունի. 24 | 744 | ճղբ. | ՚ի մայիս. 24 |
| 624 | հբ. | ՚ի յունի. 23 | 748 | ճղզ. | ՚ի մայիս. 23 |
| 628 | հզ. | ՚ի յունի. 22 | 752 | մ. | ՚ի մայիս. 22 |
| 632 | ձ. | ՚ի յունի. 21 | 756 | մդ. | ՚ի մայիս. 21 |
| 636 | ձդ. | ՚ի յունի. 20 | 760 | մը. | ՚ի մայիս. 20 |
| 640 | ձը. | ՚ի յունի. 19 | 764 | մժբ. | ՚ի մայիս. 19 |
| 644 | ղբ. | ՚ի յունի. 18 | 768 | մժզ. | ՚ի մայիս. 18 |
| 648 | ղզ. | ՚ի յունի. 17 | 772 | մի. | ՚ի մայիս. 17 |
| 652 | ճ. | ՚ի յունի. 16 | 776 | միդ. | ՚ի մայիս. 16 |
| 656 | ճդ. | ՚ի յունի. 15 | 780 | միը. | ՚ի մայիս. 15 |
| 660 | ճը. | ՚ի յունի. 14 | 784 | մլբ. | ՚ի մայիս. 14 |
| 664 | ճժբ. | ՚ի յունի. 13 | 788 | մլզ. | ՚ի մայիս. 13 |
| 668 | ճժզ. | ՚ի յունի. 12 | 792 | մխ. | ՚ի մայիս. 12 |

(*) Այլ զի այժմ ազգն մեր նահանջաւոր համարել և զամս նախնի տօմարին իւրոյ, դնէ զսկիզբն Թուականին հայոց յամի տն 552, վսյ և մեք զայսմ վարեմք յընթացս մատենիս, զի մի՛ լիցի ումեք շփոթիլ՚ի հաշիւս նր։

| Ամի Տն. | Թուական Հայոց. | Նաւասարդի. 1. | Ամի Տն. | Թուական Հայոց. | Նաւասարդի. 1. |
|---|---|---|---|---|---|
| 796 | մխդ. | 'ի մայիս. 11 | 940 | յձը. | յապրլի. 5 |
| 800 | մխը. | 'ի մայիս. 10 | 944 | յղբ. | յապրլի. 4 |
| 804 | մծբ. | 'ի մայիս. 9 | 948 | յղզ. | յապրլի. 3 |
| 808 | մծզ. | 'ի մայիս. 8 | 952 | ն. | յապրլի. 2 |
| 812 | մկ. | 'ի մայիս. 7 | 956 | նդ. | յապրլի. 1 |
| 816 | մկդ. | 'ի մայիս. 6 | 960 | նը. | 'ի մարտ. 31 |
| 820 | մկը. | 'ի մայիս. 5 | 964 | նժբ. | 'ի մարտ. 30 |
| 824 | մհբ. | 'ի մայիս. 4 | 968 | նժզ. | 'ի մարտ. 29 |
| 828 | մհզ. | 'ի մայիս. 3 | 972 | նի. | 'ի մարտ. 28 |
| 832 | մձ. | 'ի մայիս. 2 | 976 | նիդ. | 'ի մարտ. 27 |
| 836 | մձդ. | 'ի մայիս. 1 | 980 | նիը. | 'ի մարտ. 26 |
| 840 | մձը. | յապրլի. 30 | 984 | նլբ. | 'ի մարտ. 25 |
| 844 | մղբ. | յապրլի. 29 | 988 | նլզ. | 'ի մարտ. 24 |
| 848 | մղզ. | յապրլի. 28 | 992 | նխ. | 'ի մարտ. 23 |
| 852 | յ. | յապրլի. 27 | 996 | նխդ. | 'ի մարտ. 22 |
| 856 | յդ. | յապրլի. 26 | 1000 | նխը. | 'ի մարտ. 21 |
| 860 | յը. | յապրլի. 25 | 1004 | նծբ. | 'ի մարտ. 20 |
| 864 | յժբ. | յապրլի. 24 | 1008 | նծզ. | 'ի մարտ. 19 |
| 868 | յժզ. | յապրլի. 23 | 1012 | նկ. | 'ի մարտ. 18 |
| 872 | յի. | յապրլի. 22 | 1016 | նկդ. | 'ի մարտ. 17 |
| 876 | յիդ. | յապրլի. 21 | 1020 | նկը. | 'ի մարտ. 16 |
| 880 | յիը. | յապրլի. 20 | 1024 | նհբ. | 'ի մարտ. 15 |
| 884 | յլբ. | յապրլի. 19 | 1028 | նհզ. | 'ի մարտ. 14 |
| 888 | յլզ. | յապրլի. 18 | 1032 | նձ. | 'ի մարտ. 13 |
| 892 | յխ. | յապրլի. 17 | 1036 | նձդ. | 'ի մարտ. 12 |
| 896 | յխդ. | յապրլի. 16 | 1040 | նձը. | 'ի մարտ. 11 |
| 900 | յխը. | յապրլի. 15 | 1044 | նղբ. | 'ի մարտ. 10 |
| 904 | յծբ. | յապրլի. 14 | 1048 | նղզ. | 'ի մարտ. 9 |
| 908 | յծզ. | յապրլի. 13 | 1052 | շ. | 'ի մարտ. 8 |
| 912 | յկ. | յապրլի. 12 | 1056 | շդ. | 'ի մարտ. 7 |
| 916 | յկդ. | յապրլի. 11 | 1060 | շը. | 'ի մարտ. 6 |
| 920 | յկը. | յապրլի. 10 | 1064 | շժբ. | 'ի մարտ. 5 |
| 924 | յհբ. | յապրլի. 9 | 1068 | շժզ. | 'ի մարտ. 4 |
| 928 | յհզ. | յապրլի. 8 | 1072 | շի. | 'ի մարտ. 3 |
| 932 | յձ. | յապրլի. 7 | 1076 | շիդ. | 'ի մարտ. 2 |
| 936 | յձդ. | յապրլի. 6 | 1080 | շիը. | 'ի մարտ. 1 |

| Ամ. Տն. | Թուական' Հայոց. | Նաւասարդի. 1. |
|---|---|---|
| 1084 | շլբ. | 'ի փետր. 29 |
| 1088 | շլզ. | 'ի փետր. 28 |
| 1092 | շխ. | 'ի փետր. 27 |
| 1096 | շխդ. | 'ի փետր. 26 |
| 1100 | շխը. | 'ի փետր. 25 |
| 1104 | շծբ. | 'ի փետր. 24 |
| 1108 | շծզ. | 'ի փետր. 23 |
| 1112 | շկ. | 'ի փետր. 22 |
| 1116 | շկդ. | 'ի փետր. 21 |
| 1120 | շկը. | 'ի փետր. 20 |
| 1124 | շհբ. | 'ի փետր. 19 |
| 1128 | շհզ. | 'ի փետր. 18 |
| 1132 | շձ. | 'ի փետր. 17 |
| 1136 | շձդ. | 'ի փետր. 16 |
| 1140 | շձը. | 'ի փետր. 15 |
| 1144 | շղբ. | 'ի փետր. 14 |
| 1148 | շղզ. | 'ի փետր. 13 |
| 1152 | ո. | 'ի փետր. 12 |
| 1156 | ոդ. | 'ի փետր. 11 |
| 1160 | ոը. | 'ի փետր. 10 |
| 1164 | ոժբ. | 'ի փետր. 9 |
| 1168 | ոժզ. | 'ի փետր. 8 |
| 1172 | ոի. | 'ի փետր. 7 |
| 1176 | ոիդ. | 'ի փետր. 6 |
| 1180 | ոիը. | 'ի փետր. 5 |
| 1184 | ոլբ. | 'ի փետր. 4 |
| 1188 | ոլզ. | 'ի փետր. 3 |
| 1192 | ոխ. | 'ի փետր. 2 |
| 1196 | ոխդ. | 'ի փետր. 1 |
| 1200 | ոխը. | 'ի յունւ. 31 |
| 1204 | ոծբ. | 'ի յունւ. 30 |
| 1208 | ոծզ. | 'ի յունւ. 29 |
| 1212 | ոկ. | 'ի յունւ. 28 |
| 1216 | ոկդ. | 'ի յունւ. 27 |
| 1220 | ոկը. | 'ի յունւ. 26 |
| 1224 | ոհբ. | 'ի յունւ. 25 |

| Ամ. Տն. | Թուական' Հայոց. | Նաւասարդի. 1. |
|---|---|---|
| 1228 | ոհզ. | 'ի յունւ. 24 |
| 1232 | ոձ. | 'ի յունւ. 23 |
| 1236 | ոձդ. | 'ի յունւ. 22 |
| 1240 | ոձը. | 'ի յունւ. 21 |
| 1244 | ողբ. | 'ի յունւ. 20 |
| 1248 | ողզ. | 'ի յունւ. 19 |
| 1252 | չ. | 'ի յունւ. 18 |
| 1256 | չդ. | 'ի յունւ. 17 |
| 1260 | չը. | 'ի յունւ. 16 |
| 1264 | չժբ. | 'ի յունւ. 15 |
| 1268 | չժզ. | 'ի յունւ. 14 |
| 1272 | չի. | 'ի յունւ. 13 |
| 1276 | չիդ. | 'ի յունւ. 12 |
| 1280 | չիը. | 'ի յունւ. 11 |
| 1284 | չլբ. | 'ի յունւ. 10 |
| 1288 | չլզ. | 'ի յունւ. 9 |
| 1292 | չխ. | 'ի յունւ. 8 |
| 1296 | չխդ. | 'ի յունւ. 7 |
| 1300 | չխը. | 'ի յունւ. 6 |
| 1304 | չծբ. | 'ի յունւ. 5 |
| 1308 | չծզ. | 'ի յունւ. 4 |
| 1312 | չկ. | 'ի յունւ. 3 |
| 1316 | չկդ. | 'ի յունւ. 2 |
| 1320 | չկը. | 'ի յունւ. 1 |
| | չկթ. | 'ի դեկտ. 31 |
| Ամ. Տ. Ա. յաւելցաւ 'ի Թուական' Հայոց։ | | |
| 1324 | չհգ. | 'ի դեկտ. 30 |
| 1328 | չհէ. | 'ի դեկտ. 29 |
| 1332 | չձա. | 'ի դեկտ. 28 |
| 1336 | չձե. | 'ի դեկտ. 27 |
| 1340 | չձթ. | 'ի դեկտ. 26 |
| 1344 | չղգ. | 'ի դեկտ. 25 |
| 1348 | չղէ. | 'ի դեկտ. 24 |
| 1352 | պա. | 'ի դեկտ. 23 |
| 1356 | պե. | 'ի դեկտ. 22 |
| 1360 | պթ. | 'ի դեկտ. 21 |

| Ամ. Տն. | Թուական հայոց. | Նաւասարդի. 1. | Ամ. Տն. | Թուական հայոց. | Նաւասարդի. 1. |
|---|---|---|---|---|---|
| 1364 | պժգ. | 'ի դեկտ. 20 | 1508 | ջծէ. | 'ի նոյեմ. 14 |
| 1368 | պժէ. | 'ի դեկտ. 19 | 1512 | ջկա. | 'ի նոյեմ. 13 |
| 1372 | պիա. | 'ի դեկտ. 18 | 1516 | ջկե. | 'ի նոյեմ. 12 |
| 1376 | պիե. | 'ի դեկտ. 17 | 1520 | ջկթ. | 'ի նոյեմ. 11 |
| 1380 | պիթ. | 'ի դեկտ. 16 | 1524 | ջհգ. | 'ի նոյեմ. 10 |
| 1384 | պլգ. | 'ի դեկտ. 15 | 1528 | ջհէ. | 'ի նոյեմ. 9 |
| 1388 | պլէ. | 'ի դեկտ. 14 | 1532 | ջձա. | 'ի նոյեմ. 8 |
| 1392 | պխա. | 'ի դեկտ. 13 | 1536 | ջձե. | 'ի նոյեմ. 7 |
| 1396 | պխե. | 'ի դեկտ. 12 | 1540 | ջձթ. | 'ի նոյեմ. 6 |
| 1400 | պխթ. | 'ի դեկտ. 11 | 1544 | ջղգ. | 'ի նոյեմ. 5 |
| 1404 | պծգ. | 'ի դեկտ. 10 | 1548 | ջղէ. | 'ի նոյեմ. 4 |
| 1408 | պծէ. | 'ի դեկտ. 9 | 1552 | ռա. | 'ի նոյեմ. 3 |
| 1412 | պկա. | 'ի դեկտ. 8 | 1556 | ռե. | 'ի նոյեմ. 2 |
| 1416 | պկե. | 'ի դեկտ. 7 | 1560 | ռթ. | 'ի նոյեմ. 1 |
| 1420 | պկթ. | 'ի դեկտ. 6 | 1564 | ռժգ. | 'ի հոկտ. 31 |
| 1424 | պհգ. | 'ի դեկտ. 5 | 1568 | ռժէ. | 'ի հոկտ. 30 |
| 1428 | պհէ. | 'ի դեկտ. 4 | 1572 | ռիա. | 'ի հոկտ. 29 |
| 1432 | պձա. | 'ի դեկտ. 3 | 1576 | ռիե. | 'ի հոկտ. 28 |
| 1436 | պձե. | 'ի դեկտ. 2 | 1580 | ռիթ. | 'ի հոկտ. 27 |
| 1440 | պձթ. | 'ի դեկտ. 1 | 1584 | ռլգ. | 'ի հոկտ. 26 |
| 1444 | պղգ. | 'ի նոյեմ. 30 | 1588 | ռլէ. | 'ի հոկտ. 25 |
| 1448 | պղէ. | 'ի նոյեմ. 29 | 1592 | ռխա. | 'ի հոկտ. 24 |
| 1452 | ջա. | 'ի նոյեմ. 28 | 1596 | ռխե. | 'ի հոկտ. 23 |
| 1456 | ջե. | 'ի նոյեմ. 27 | 1600 | ռխթ. | 'ի հոկտ. 22 |
| 1460 | ջթ. | 'ի նոյեմ. 26 | 1604 | ռծգ. | 'ի հոկտ. 21 |
| 1464 | ջժգ. | 'ի նոյեմ. 25 | 1608 | ռծէ. | 'ի հոկտ. 20 |
| 1468 | ջժէ. | 'ի նոյեմ. 24 | 1612 | ռկա. | 'ի հոկտ. 19 |
| 1472 | ջիա. | 'ի նոյեմ. 23 | 1616 | ռկե. | 'ի հոկտ. 18 |
| 1476 | ջիե. | 'ի նոյեմ. 22 | 1620 | ռկթ. | 'ի հոկտ. 17 |
| 1480 | ջիթ. | 'ի նոյեմ. 21 | 1624 | ռհգ. | 'ի հոկտ. 16 |
| 1484 | ջլգ. | 'ի նոյեմ. 20 | 1628 | ռհէ. | 'ի հոկտ. 15 |
| 1488 | ջլէ. | 'ի նոյեմ. 19 | 1632 | ռձա. | 'ի հոկտ. 14 |
| 1492 | ջխա. | 'ի նոյեմ. 18 | 1636 | ռձե. | 'ի հոկտ. 13 |
| 1496 | ջխե. | 'ի նոյեմ. 17 | 1640 | ռձթ. | 'ի հոկտ. 12 |
| 1500 | ջխթ. | 'ի նոյեմ. 16 | 1644 | ռղգ. | 'ի հոկտ. 11 |
| 1504 | ջծգ. | 'ի նոյեմ. 15 | 1648 | ռղէ. | 'ի հոկտ. 10 |

| Ամ. Տն. | Թուական հայոց. | Նաւասարդ. 1 |
|---|---|---|
| 1652 | ռճա. | 'ի հոկտ. 9 |
| 1656 | ռճե. | 'ի հոկտ. 8 |
| 1660 | ռճթ. | 'ի հոկտ. 7 |
| 1664 | ռճժգ. | 'ի հոկտ. 6 |
| 1668 | ռճժէ. | 'ի հոկտ. 5 |
| 1672 | ռճիա. | 'ի հոկտ. 4 |
| 1676 | ռճիե. | 'ի հոկտ. 3 |
| 1680 | ռճիթ. | 'ի հոկտ. 2 |
| 1684 | ռճլգ. | 'ի հոկտ. 1 |
| 1688 | ռճլէ. | 'ի սեպտ. 30 |
| 1692 | ռճխա. | 'ի սեպտ. 29 |
| 1696 | ռճխե. | 'ի սեպտ. 28 |
| 1700 | ռճխթ. | 'ի սեպտ. 27 |
| 1704 | ռճծգ. | 'ի սեպտ. 26 |
| 1708 | ռճծէ. | 'ի սեպտ. 25 |
| 1712 | ռճկա. | 'ի սեպտ. 24 |
| 1716 | ռճկե. | 'ի սեպտ. 23 |
| 1720 | ռճկթ. | 'ի սեպտ. 22 |
| 1724 | ռճհգ. | 'ի սեպտ. 21 |
| 1728 | ռճհէ. | 'ի սեպտ. 20 |
| 1732 | ռճձա. | 'ի սեպտ. 19 |
| 1736 | ռճձե. | 'ի սեպտ. 18 |
| 1740 | ռճձթ. | 'ի սեպտ. 17 |
| 1744 | ռճղգ. | 'ի սեպտ. 16 |
| 1748 | ռճղէ. | 'ի սեպտ. 15 |
| 1752 | ռմա. | 'ի սեպտ. 14 |
| 1756 | ռմե. | 'ի սեպտ. 13 |
| 1760 | ռմթ. | 'ի սեպտ. 12 |
| 1764 | ռմժգ. | 'ի սեպտ. 11 |
| 1788 | ռմժէ. | 'ի սեպտ. 10 |
| 1772 | ռմիա. | 'ի սեպտ. 9 |
| 1476 | ռմիե. | 'ի սեպտ. 8 |
| 1780 | ռմիթ. | 'ի սեպտ. 7 |
| 1784 | ռմլգ. | 'ի սեպտ. 6 |
| 1788 | ռմլէ. | 'ի սեպտ. 5 |
| 1792 | ռմխա. | 'ի սեպտ. 4 |
| 1796 | ռմխե. | 'ի սեպտ. 3 |
| 1800 | ռմխթ. | 'ի սեպտ. 2 |
| 1804 | ռմծգ. | 'ի սեպտ. 1 |
| 1808 | ռմծէ. | յօգոստ. 31 |
| 1812 | ռմկա. | յօգոստ. 30 |
| 1816 | ռմկե. | յօգոստ. 29 |
| 1820 | ռմկթ. | յօգոստ. 28 |
| 1824 | ռմհգ. | յօգոստ. 27 |
| 1818 | ռմհէ. | յօգոստ. 26 |
| 1832 | ռմձա. | յօգոստ. 25 |
| 1836 | ռմձե. | յօգոստ. 24 |
| 1840 | ռմձթ. | յօգոստ. 23 |
| 1844 | ռմղգ. | յօգոստ. 22 |
| 1848 | ռմղէ. | յօգոստ. 21 |
| 1852 | ռյա. | յօգոստ. 20 |
| 1856 | ռյե. | յօգոստ. 19 |
| 1860 | ռյթ. | յօգոստ. 18 |
| 1864 | ռյժգ. | յօգոստ. 17 |
| 1868 | ռյժէ. | յօգոստ. 16 |
| 1872 | ռյիա. | յօգոստ. 15 |
| 1876 | ռյիե. | յօգոստ. 14 |
| 1880 | ռյիթ. | յօգոստ. 13 |
| 1884 | ռյլգ. | յօգոստ. 12 |
| 1888 | ռյլէ. | յօգոստ. 11 |
| 1892 | ռյխա. | յօգոստ. 10 |
| 1896 | ռյխե. | յօգոստ. 9 |
| 1900 | ռյխթ. | յօգոստ. 8 |
| 1904 | ռյծգ. | յօգոստ. 7 |
| 1908 | ռյծէ. | յօգոստ. 6 |
| 1912 | ռյկա. | յօգոստ. 5 |
| 1916 | ռյկե. | յօգոստ. 4 |
| 1920 | ռյկթ. | յօգոստ. 3 |
| 1924 | ռյհգ. | յօգոստ. 2 |
| 1928 | ռյհէ. | յօգոստ. 1 |
| 1932 | ռյձա. | 'ի յուլի. 31 |
| 1936 | ռյձե. | 'ի յուլի. 30 |

| Ամ. Տե-ռն. | Թուական հայոց. | Նաւասար-դի. ա. | Ամ. Տե-ռն. | Թուական հայոց. | Նաւասար-դի. ա. |
|---|---|---|---|---|---|
| 1940 | ռյձթ. | 'ի յուլի. 29 | 1976 | ռնիե. | 'ի յուլի. 20 |
| 1944 | ռյղգ. | 'ի յուլի. 28 | 1980 | ռնիթ. | 'ի յուլի. 19 |
| 1948 | ռյղէ. | 'ի յուլի. 27 | 1984 | ռնլգ. | 'ի յուլի. 18 |
| 1952 | ռնա. | 'ի յուլի. 26 | 1988 | ռնլէ. | 'ի յուլի. 17 |
| 1956 | ռնե. | 'ի յուլի. 25 | 1992 | ռնխա. | 'ի յուլի. 16 |
| 1960 | ռնթ. | 'ի յուլի. 24 | 1996 | ռնխե. | 'ի յուլի. 15 |
| 1964 | ռնժգ. | 'ի յուլի. 23 | 2000 | ռնխթ. | 'ի յուլի. 14 |
| 1968 | ռնժէ. | 'ի յուլի. 22 | 2004 | ռնծգ. | 'ի յուլի. 13 |
| 1972 | ռնիա. | 'ի յուլի. 21 | 2008 | ռնծէ. | 'ի յուլի. 12 |

ԼԹ. Ասացաք ըստ Տոմարիս մերոյ. քանզի ըստ Յայսմաւուրաց հաստատ և անխախտ գնան ամիսք և ամք ընդ հռովմայեցւոց. իբր զի յիւրաքանչիւր չորրորդ ամի առնի նահանջ ըստ յայսմաւուրաց, յաւելլով 6 աւուրս (յաւելեացն). սկսեալ շուրջ 1200 Թուէին քի. և այնպէս Նաւասարդն միշտ անխախտ մնայ 'ի 11 օգոստոսի: Նաւ այս վասն կարգաւորութե տօնից այնպէս հարկ էր առնել. որպէս զի աւուրք տօնից որք հաստատ և անշարժ կացցեն 'ի գիրս յայսմաւուրաց՝ ըստ Թուոյ աւուրց և անուանց ամսոց, յորս կարգեցան. ապա թէ ոչ՝ վեր 'ի վայր լինէին տօնք և աւուրք կիւրակէից՝ անհամեմատ ընդ աւուրց ամսոյն հռովմայեցւոց: Այսր աղագաւ յօրացուցի մերում կրկին դնէին անուանք հայոց ամսոց. մի՝ ըստ յայսմաւուրաց՝ որ անխախտ է ընդ ամսոց հռովմայեցւոց. և երկրորդ՝ ըստ Տոմարիս մերոյ շարժական 'ի միջոցի չորից ամաց, որպէս ասացաւ:

Խ. Նոր Թուական հայոց կարգեցաւ 'ի նորոգութե տոմարիս մերոյ առ ժամանակօք Մովսէսի կաթողիկոսի երկրորդի. յորում Թուականն քի էր 551. ուստի առաջին ամ հայոց Թուականին սկիզբն առնու 'ի 552 Թուականէն քի: Վասն որոյ եթէ կամիցիս հաշուել զԹուականն հայոց թէ քանի՞ իցէ. բարձ 'ի Թուականէն քի ամն 551. և մնացեալն որչափ և գտցի, այնչափ է հայոց Թուականն: Որպէս յամի տն 1817 կամիս գտանել զԹուականն հայոց, բարձ անտի 551 ամ, և մնացեալն 1266 է Թուական հայոց: Ապա եթէ 'ի

ձեռն Թուականի հայոց ծանուցելոյ կամիցիս գիտել զԹուականն քո. յաւել՛ի վերայ հայոց Թուականին ամս 551. որոյ գումարն ցուցցէ քեզ զամն քո. զոր օրինակ՝ 'ի Թուին հայոց 1266. կամիցիս գիտել զԹուականն քո, յաւել՛ի նա ամս 551. գումարն լինի 1817. որ է ամ Տն:

Օնորդութեան տոմարիս մերոյ խօսեսցուք՝ յորժամ բոն լցի զշրջանն մեծ 532 ամաց (ՇԼԲ:)

## Ամ Արաբացւոց և Հագարացւոց:

խա. Ամ սոցա է ամն լուսնական, որ պարագայի երկոտասան շրջանօք լուսնի. և այնպէս դասակարգեն՝ զի մի զկնի միոյ փոփոխակի ունիցին աւուրս 30 և 29. որք միանգամայն առնեն յամին՝ 354 աւուրս, այնպէս զի մի ամն լուսնական 11 աւուրբք նուազ է քան զարեգականն: Յորմէ զհետ գայ՝ Թէ Մուհարրէմ ամիս նոցա, որ է տարեմուտ և առաջին ամիս նոցին տարւոյ, միշտ է փոփոխական և Թափառական յամ եղանակս տարւոյն, ոչ ամսոյն սկզբունք, և ոչ ամսոյն գլուխք ունին զորոշեալ ժամանակ՝ համեմատութեան ամսոց և ամաց արեգական, 11 աւուրբք յառաջելով քան զնորայն. որով 'ի միջոցի երից ամաց՝ իբր ամսով միով յառաջէ: Իսկ 'ի միջոցի 33 ամաց՝ ամ մի առաւելու քան զամն Յուլեան. այսինքն՝ քան զԹուականն քո. ուստի տոմարն Յուլեան հաշուէ ամս 33: Արաբացիք և Հագարացիք հաշուեն 34:

## Ամ Հրէից:

խբ. Թուականն հրէից սկիզբն առնու 'ի ստեղծմանէ աշխարհի. որ և ըստ հաշուի նոցա է այժմ (յամի Տն 1818) 5578. սկսեալ 'ի նախընթաց ամէ յամսեանն սեպտեմբերի: Յորմէ յայտ է՝ թէ տարեգլուխ նոցա միշտ յառաջագոյն է քան զմերն իբր երիւք ամսովք:

խգ. Ամ նոցա է լուսնական, և է կրկին՝ Աստղաբաշխական, և Քաղաքական: Աստղաբաշխական ամն նոցա՝ բաց յամբողջ աւուրց 'ի հաշիւ արկանէ նաև ըզժամս և զրոպէս, խրթին իմն հաշուօք՝ առ 'ի գիտ

իւրեանց տարեգլխոյն. որ 'ի գործածութիւն քաղաքական տարւոյ չէ դիւրըմբռնելի. ուստի և զանց առնի գնել 'ի տոմարագրի աստ:

Իսկ քաղաքական լուսնական ամն Հրէից՝ ըստ հասարակ կարգի ունի 12 լուսնական ամիսս. յոր 'ի հաշիւ մտանեն միայն ամբողջ աւուրք, առանց ժամուց և բոպէից. և այն 12 լուսնական ամիսք մի զմիոյ զկնի ունին փոփոխակի աւուրս՝ 30. և 29. 'ի լնանալ երկոտասան ամսոյն լինին աւուրք 354. մետասան աւուրբք պակաս քան զամն արեգական: Բայց առ 'ի միաբանել զամն լուսնական ընդ արեգական՝ զյաւելեալ մետասան աւուրս տարւոյն 'ի մի գումարեալ յերկուս կամ յերիս ամն միանգամ, առնեն 13 լուսնական ամիսս. և զայն ամ կոչեն Նահանջ. որ ունի աւուրս 384:

խնդ. Եւ զայս այսպէս առնեն, զի մի հեռասցին հետ զհետէ 'ի հասարակածէ գարնայնոյ, յորում պարտին կատարել զտօն պասեքի՝ 'ի չորեքտասան լուսնի Նիսան ամսոյ: Այլ և 'ի գտանել զտարեմուտ Թիշրին ամսոյն յաշնանային հասարակածի. յորում ժամանակի ասեն լինել արարչութեան աշխարհի:

Իսկ անուանք ամսոց Հրէից ըստ կարգի իւրեանց, և ըստ թուոյ աւուրց իւրեանց՝ են այսոքիկ:

խնէ.

| Անուն հասարակ տարւոյ. | Աւուրք ամսոյ. | Գումար աւուրց |
|---|---|---|
| Թիշրի. | 30 | 30 |
| Խեշուան | 29 | 59 |
| Քասղև | 30 | 89 |
| Տեբեթ | 29 | 118 |
| Շեբաթ | 30 | 148 |
| Ադար | 29 | 177 |
| Նիսան | 30 | 207 |
| Իար | 29 | 236 |
| Սիվան | 30 | 266 |
| Թամուզ | 29 | 295 |
| Աբ | 30 | 325 |
| Իլուլ | 29 | 354 |

| Անուն նահանջ տարւոյ. | Աւուրք ամսոյ. | Գումար աւուրց |
|---|---|---|
| Թիշրի. | 30 | 30 |
| Խեշուան | 29 | 59 |
| Քասղև | 30 | 89 |
| Տեբեթ | 29 | 118 |
| Շեբաթ | 30 | 148 |
| Ադար | 30 | 178 |
| Վէադար | 29 | 207 |
| Նիսան | 30 | 237 |
| Իար | 29 | 266 |
| Սիվան | 30 | 296 |
| Թամուզ | 29 | 325 |
| Աբ | 30 | 355 |
| Իլուլ | 29 | 384 |

ԽԴ. Յեկեղեցական հաշիւս հրէից ըստ Սբ. գրոց, Նիսանն է առաջին ամիս տարւոյն։ Իսկ յաստղաբաշխականն և 'ի քաղաքականս՝ առաջինն է Թշրին։ Անուանք ամսոց այսոցիկ են քաղդէարէն. յայտ անտի է, զի 'ի Սբ. գիրս յառաջ քան զգերութիւն բաբելացւոց ոչ ուրեք յիշատակին անուանք ամսոց այսոցիկ, բայց եթէ 'ի գիրս Նէեմեայ, Եզրայ, Եսթերայ, Դանիէլի, և Զաքարեայ, որք գրեալ են յետ գերութեանն բաբելացւոց։

Գումար հասարակ տարւոյն հրէից՝ որպէս տեսանի յօրինակի անդ համդէպ Իլուլ ամսոյն, են աւուրք 354. իսկ գումար նահանջ տարւոյն են աւուրք 384։ Սակայն է երբեմն՝ զի թէ հասարակ ամն նոցա, և թէ նահանջ ամն աւուրբ միով պակասին, և կոչին Թէրատ ամք. զի Քասղեւ ամիսն՝ որ ըստ կարգին ունի 30 աւուրս, 'ի թերատ ամին ունի 29. ուստի աւուրք հասարակ ամին լինին յայնժամ 353. իսկ 'ի նահանջ ամին լինին 383։ Եւ է երբեմն ևս, զի աւուրբ միով առաւելուն, և կոչին Շէատր ամք, թէ հասարակ ամն, և թէ նահանջն. զի Խեսուան ամիսն՝ որ ըստ կարգին ունի 29 աւուրս, 'ի լիաւոր ամին ունի 30. և յայնժամ աւուրք հասարակ ամին լինին 355, իսկ 'ի նահանջ ամին լինին 385. որք կոչին լիաւոր ամք։

ԽԵ. Իսկ թէ որ լուսնական ամն հրէից իցէ նահանջ, և որն հասարակ, գտանի 'ի ձեռն ինննեւտասներեկի նոցա, (որ է 19 ամ,) յորս եօթն ամք են նահանջք միշտ. այսինքն՝ 3. 6. 8. 11. 14. 17. 19. եօթանեքին սոքա ունին լուսնական ամիսս 13. յորս յաւելեալ լինի Վէադար ամիսն։ Իսկ մնացեալ երկոտասան ինննեւտասներեակքն են հասարակք, ունելով երկոտասան լուսնական ամիսս միայն, առանց Վէադար ամսեան։

ԽԶ. Բայց առ 'ի գիտել, թէ որ թուական հրէից իցէ նահանջ, և որն հասարակ, պարտ է գտանել նախ զինննեւտասներեակն ըստ հրէից. և տեսանել՝ թէ քանիերորդ ամ է այն ինննեւտասներեկին։ Իսկ ինննեւտասներեակն գտանի 'ի ձեռն թուականի նոցա. զի 'ի բաժանել անդ զամս թուականին նոցա թուովս 19. յաւելեալն ցուցանէ զթիւ ամաց ինննեւտասներեկին։ Զոր

օրինակ՝ յայսմ ամի Հրէից՝ որ է 5578, բաժանեալ Թուովս 19, յաւելանայ 8. որով ցուցանի թէ ութերորդ ամ է իննևտասներեկին, որ և է նահանջ։ Պատճառ կանոնիս է, զի յառաջին ամին Հրէից իննևտասներեակն էր 1։ Իսկ թէ զի՞նչ իցէ իննևտասներեակն ցուցցի 'ի ստորև. (ղէ. ղը։)

## Ամ Գրիգորեան։

խԹ. Երևելի և հռչակաւոր է այժմ յարևմուտս ամ գրիգորեան. որ ոչ այլ ինչ է, բայց եթէ ամն Յուլեան ուղղեալ 'ի Գրիգորէ ԺԳ պապէ՝ յայսմ միայն, զի Յուլեանն ըստ հասարակ կարգի ամաց՝ ոչ միայն յամենայն չորրորդ ամս առնէ նահանջ, այլ նաև յիւրաքանչիւր հարիւրերորդ ամին առնէ նոյնպէս նահանջ։ Իսկ նոր ամն գրիգորեան ուղղեալ՝ յերիս հարիւրերորդ ամս ոչ առնէ նահանջ, այլ միայն 'ի չորրորդն թողու առնել։ Եւ այս վասն փոքրիկ սխալանաց 11 րոպէից՝ պակասելոյ յամէ, որ յանցանել ժամանակաց լինի երևելի յոյժ. իբր զի 'ի միջոցի 400 ամաց՝ պակասին երեք աւուրք. և միայն օր մի մնայ վասն միոյ հարիւրերորդ ամի առնելոյ նահանջ։ Զայսմանէ դարձեալ խօսեսցուք, յորժամ բան լիցի յաղագս տարբերութեան հին և նոր տոմարի։

## ԱՄԻՍ

Ծ. Ի բաժանմունս ժամանակաց երևելի է և անուանի Ամս։ Գործածութիւն ամսոյ, որ է իբր միջոց ժամանակաց 30 աւուրց՝ յառաջ եկն նախ 'ի դիտողութենէ ընթացից լուսնի, և 'ի պէսպէս փոփոխութեանց նորա 'ի լուսնալն և 'ի նուազելն. է երբեմն՝ զի ծածկի 'ի տեսութենէ, և է երբեմն, զի երևի բոլորաձև և պայծառ. և դարձեալ առ սակաւ սակաւ նուազի և ծածկի յաչաց՝ եկեալ ուղղակի ընդ արեգակամբ։ Այս փոփոխութիւն լուսնի՝ որ ըստ երևութին լինի առ մեզ, էառ զայլ և այլ անուն. զի 'ի գալ նորա ընդ արեգակամբ, և 'ի ծածկիլ յաչաց մերոց, կոչի ծնունդ կամ նորածին լուսնի։ Իսկ 'ի հեռանալ նորա փոքր փոքր յարեգակնէ, և յաճելն ըստ կիսոյն լուսով, կոչի առաջին քառորդ.

Ապա 'ի լինել յանդիմանակաց արեւուն, եւ լինել բոլորակաձեւ լցեալ լուսով, կոչի՝ ԼՐՈՒՄՆ լուսնի։ Եւ յետ այնորիկ 'ի պակասել լուսոյն ըստ կիսոյն, կոչի՝ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴ։ Իսկ ապա 'ի գնալն լուսնի դարձեալ ընդ արեգակամբ, եւ 'ի ծածկիլն յաչաց, կոչի ԾՆՈՒՆԴ. եւ այս միջոց ժամանակին, որ 'ի միոյ ծննդենէ մինչեւ 'ի միւս ծնունդ, կոչի՝ ԱՄԻՍ ԼՈՒՍՆԱԿԱՆ։

ծա. Իսկ միջոց ժամանակին, որ 'ի միոյ ծննդենէ լուսնի մինչեւ 'ի միւս ծնունդ, ըստ հաշուի աստեղաբաշխից՝ են աւուրք 29. ժամք 12. րոպէ 44'. զի նոյնչափ են միջական ժամանակք ՍԻՆՈԴԻՔԱԿԱՆ շարժման լուսնի։

Իսկ սոսկ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ շարժումն լուսնի, որով 'ի միոյ կիտէ ինչ աստիճանի զոդիակոսին, զոր օրինակ՝ յառաջին աստիճանէ խոյին հեռացեալ, դառնայ անդրէն 'ի նոյն կէտ աստիճանին՝ առանց զուգընթաց լինելոյ ընդ արեւուն, կատարէ աւուրս 27. ժամս 7. րոպէս 43'։ Եւ ըստ այսմ պարբերական շարժումն լուսնի պակասի քան զամիսն զուգընթացական 2 աւուրբ, 5 ժամաւ, եւ րոպէիւ միով։

ծբ. Պատճառն է՝ զի արեգակն իւրով յատուկ շարժմամբն յառաջացեալ գնայ յարեւելս կոյս 'ի միջոցի պարբերական շարժման լուսնի, 27 աստիճանս. առ որ ընթանալ եւ զուգընթաց լինել լուսնի՝ հարկ է կատարել այլ եւս աւուրս 2. եւ ժամս 5։

ծգ. Լուսնական ամիսն բաժանի դարձեալ յաստղաբաշխական, եւ 'ի քաղաքական։ Աստղաբաշխականն է այն միջոց ժամանակի, յորում ճիշդ չափմամբ չափին ընթացք լուսնի ըստ աւուրց, ըստ ժամուց, եւ ըստ րոպէից. որպէս 'ի վերոյ եդաւ։ Իսկ քաղաքականն է այն՝ որ ունի զմիջոց ժամանակի ամբողջ աւուրբք, առանց հաշուելոյ զժամս, կամ զրոպէս յաւելեալս։ Եւ ըստ այսմ քաղաքական ամիսք լուսնին սահմանին մի զկնի միոյ փոփոխակի ունել աւուրս 30 եւ 29։ Որով երկու քաղաքական ամիսք լուսնի՝ հաւասար գան երկուց աստղաբաշխական լուսնական ամսոց. ոչ հայեցեալ 'ի րոպէս, որք առաւելուն կամ նուազին։

ծդ. Առաջին լուսնական ամիս տարւոյն յեւրոպիա սովորաբար սկսանի 'ի ծննդենէ լուսնի Յունվար ամսոյ։ Բայց կաթուղիկէ եկեղեցի ընդ ամենայն աշ-

խարհ սկսանի 'ի ծննդեան Զատկական լուսնի. որոյ լրումն լինի անմիջապէս յետ գարնանային հաւասարակածի, կամ 'ի նմին աւուր հաւասարակածի. այս է՝ 'ի մարտի 21։

ծե. Իսկ առաջին ամիսն Հրէից սկսանի 'ի ծննդեան լուսնի Թշրին ամսոյն առ աշնանային հաւասարակածաւ։ Թէպէտ ըստ ս. գրոց՝ առաջինն յամիսս է Նիսանն՝ առ գարնանային հաւասարակածաւ։

ծզ. Բայց 'ի լուսնական ամսոյ երևելի է և արեգակնային ամիսն. որ է այն միջոց ժամանակի՝ յորում արեգակն յընթացս իւր կատարէ զ30 աստիճանս միոյ կենդանակերպի զոդիակոսին, և անցանէ յայլ։ Այս միջոց (հայեցեալ ընդ ճշմարիտ շարժումն արեգական՝) է անհաւասար. որովհետև արեգակն յամէ յանցանելն ընդ հիւսիսային կենդանակերպս՝ քան ընդ հարաւայինս։ Բայց զմտաւ ածեալ՝ թէ արեգակն ընդ բոլոր ամն կատարէ զընթացս իւր ընդ երկոտասան կենդանակերպս 'ի 365 աւուրս. 5 ժամս, և 48'. 45'' րոպէս. յայնժամ միջական չափ միոյ ամսոյ ըստ աստղաբաշխից առեալ լինի 30 օր. 10 ժամ. 29'. 4''. րոպէ։

ծէ. Արեգակնային ամիսն ևս բաժանի յաստղաբաշխական և 'ի քաղաքական։ Աստղաբաշխականն է այն միջոց ժամանակի, յորում ճիշտ չափիւն ընթացք արեգական՝ ըստ աւուրց, ըստ ժամուց, և ըստ րոպէից. որպէս եդաւ 'ի վերոյ։ Քաղաքականն ունի զմիջոց ժամանակի ամբողջ աւուրբք, առանց հաշուելոյ զժամս և զրոպէս յաւելեալս։ Իսկ ըստ այսմ քաղաքական ամիսք հայոց՝ թէ ըստ տոմարին և թէ ըստ Յայսմաւուրաց՝ հաւասարապէս ունին աւուրս 30. և 5 աւուրք՝ որք յաւելման՝ դնին յաւելեացն. միայն 'ի նահանջ ամին ըստ Յայսմաւուրաց դնին յաւելեացն 6։

ծը. Իսկ ամիսք հռովմայեցւոց՝ են որք ունին աւուրս 30. և են՝ որք ունին 31. բաց 'ի միոյ ամսոյ՝ որ յերիս հասարակ ամս ունի աւուրս 28. իսկ 'ի չորրորդ ամին ունի 29։ Այս եղանակ քաղաքական արեգակնային ամսոց մուծաւ 'ի Յուլիոսէ կայսերէ. վասն որոյ և կոչի Յուլեան։

## Շաբաթ, կամ Եօթնեակ։

ԾԹ. Շաբաթ կամ եօթնեակ անուամբ իմանամք զբաժանումն ժամանակին յեօթն աւուրս, սկսեալ 'ի միաշաբաթուն մինչեւ 'ի շաբաթ, որք են աւուրք եօթն։ Զսկիզբն այսր բաժանման ոմանք համարին ծագել 'ի չորից քառորդաց լուսնի. որք գոլով հեռի 'ի միմեանց իբր եօթն աւուրբք, պատճառս ետուն այսպիսի բաժանման։

Այլք համարին՝ թէ գործածութիւն եօթներորդաց կամ շաբաթուց 'ի մէջ արեւելեան ազգաց հեթանոսաց ծագեալ իցէ յաւանդութենէ անտի արարչագործութեան. զոր կալան միշտ հաստատուն ընդ այլոց աւանդութեանց. մանաւանդ զի այս գործածութիւն 'ի վաղուց անտի 'ի նախահարց գոյր առ եբրայեցիս. հրամայեալ առ յԱյ 'ի սկզբանէ աշխարհի, զվեց օր գործել, եւ յաւուրն եօթներորդի շաբաթ, այսինքն՝ հանգիստ։ (Բ. օրին. Ե. 13։) Յեբրայեցւոց անտի իցեն առեալ եւ այլք յարեւելեան ազգաց հեթանոսք. որք 'ի գիրս իւրեանց ցուցանեն նշանս յարգութեան պատուելոյ զօրն եօթներորդ իբրեւ ս̄րբ օր եւ օր հանգստեան. որպէս Հեսիոդոս, Հոմերոս, Կալիմաքոս, եւ այլք։ Զիարդ եւ իցէ՝ հաւաստի իմն է, թէ գործածութիւն աւուրց եօթանց է հին եւ վաղեմի յոյժ. թէպէտ եւ արեւմտեան ազգք ոչ սովորեցան յայնմ, բայց եթէ յետ դարձի նոցա 'ի քրիստոնէութիւն. զի յառաջ քան զայն հռովմայեցիք հաշուէին զաւուրս՝ ոչ եօթն եօթն, այլ ինն ինն. որպէս եւ նախնի յոյնք տասն տասն հաշուէին. բաժանելով զիւրաքանչիւր ամիս յերիս մասունս։

Կ. Զաւուրս եօթներորդաց կամ շաբաթուց Եբրայք անուանէին ըստ կարգի յաջորդութեան իւրեանց՝ սկսեալ յառաջին օրէ շաբաթուն։ Յետ շաբաթուն անմիջապէս զառաջին օրն կոչէին միաշաբաթ. զերկրորդն կոչէին երկուշաբաթի. ըստ այսմ զերրորդն զչորրորդն, եւ զհինգերորդն՝ բաց 'ի վեցերորդէ՝ զոր ըստ յունաց կոչէին Պարասկեւի. որ է ասել՝ օր պատրաստութեան շաբաթու, ըստ Հայոց՝ ուրբաթ. առեալ յարաբացի կամ յասորի լեզուէ, յանուանէ ըռուպաթ։

ԿԱ. Զայս օրինակ սովորեցան քրիստոնեայք արեւ-

լեան ազգաց անուանել զաւուրս եօթներորդաց . բաց յօրէ միաշաբաթուն, որ 'ի պատիւ յարութեան տն կոչեցաւ Կիւրակէ . այսինքն՝ օր տէրունի . յառաքելոց անտի սկիզբն առեալ : (Յայտն . յոհ . ա . 10 :) * Եղէ ,, յիս հոգի 'ի կիւրակէի աւուր ‖ : Այն օրս կարգեցաւ յեկեղեցւոյ ՚որ պահել և հրաժարել 'ի ծառայական գործոց՝ փոխանակ շաբաթուն հրէից :

կբ . Հին հեթանոսք կոչէին զաւուրս եօթներորդաց անուամբ եօթն մոլորակաց . զորս մինչև ցայսօր առ հասարակ քրիստոնեայք արևմտեան ազգաց 'ի գործ ածեն . կոչելով զառաջին օրն, այսինքն՝ զԿիւրակէն՝ օր արևու . զերկրորդ օրն Լունէտի, այսինքն՝ օր լուսնի . զերրորդն Մառթէտի, այս է՝ օր հրատի . զչորրորդն՝ Մերքուտի, այսինքն՝ օր փայլածուի . զհինգերորդն՝ Ճիօվէտի, այսինքն՝ օր լուսնթագի . զվեցերորդն Վէնէրտի, այսինքն՝ օր արուսեկի, զեօթներորդն՝ Սապաթօ, որ է շաբաթ :

կգ . Բայց եկեղեցին լատինաց վարի անուամբ (Ֆէրիա) այսինքն՝ շաբաթու, զառաջին օրն՝ որ է կիւրակէ, կոչէ (տոմէնիգա) այսինքն՝ օր տէրունի, կամ օր տն . որ է թարգմանութի յունական բառին (կիրակէ) . զերկրորդն կոչէ՝ երկուշաբաթի, ևն . մինչև ցօր շաբաթուն : Պատճառն՝ որոյ վասն եկեղեցին լատինաց այսպէս կոչէ զաւուրս եօթներորդաց՝ է այն, զի նախկին հաւատացեալքն 'ի մեծէն Կոստանդիանոսէ սկսեալ 'ի վկայութի մեծի ուրախութեն, որով տօնէին զտօն զատկի յարութեն քնի, սովոր էին տօնել զեօթն օր ամբողջ, հրաժարելով յամ ծառայական գործոց յաւուրսն յայնոսիկ . զորս և կոչէին [illegible] . Նշանակելով զառաջին օր տօնին՝ կիւրակէ . զերկրորդ օրն՝ երկուշաբաթի ևն, մինչև ցշաբաթ : Յայսմանէ սովորութե եղև առ լատինս կոչել զայլ աւուրս եօթներորդաց հասարակ անուամբ Ֆէրիա, այսինքն՝ օր տօնական, կամ տօն . թէպէտ և լինեն աւուրք գործոյ :

## ՕՐ

կդ . Բաժանումն ժամանակին 'ի յօր՝ յառաջ եկն յերևելի փոփոխութե լուսոյ և խաւարի, կամ տուընջեան և գիշերոյ յաջորդելոյ զհետ միմեանց . և է միջոց 24

ժամուց՝ յորում արեգակն ծագեալ յարևելից պատի զերկրաւ, և դառնայ անդրէն 'ի նոյն կէտ՝ յորմէ հեռացաւն ։ Եւ այս միջոց 24 ժամուց, կամ միոյ աւուրն բաժանի յերկուս. այսինքն՝ 'ի տիւ և 'ի գիշեր ։

Տիւն է լուսաւոր միջոց աւուրն, որ տևէ սկսեալ 'ի ծագմանէ արևուն մինչև 'ի մուտս նորա ։ Իսկ գիշերն է խաւարային մութն՝ որ տևէ յետ մտանելոյ արևուն մինչև 'ի ծագել նորա վերստին յարևելից ։

ԿԵ. Օրն բաժանի 'ի բնական և 'ի քաղաքական ։ Բնական օրն է ամբողջ շրջան ինն արևու շուրջ զերկրաւ. այլ ըստ չափու տունջեան և գիշերոյ անհաւասար ։ Վասն զի յարևադարձէ ձմերայնոյ մինչ 'ի յարևադարձն ամառայնոյ օր ըստ օրէ երկայնի տիւն. իսկ ընդհակառակն յարևադարձէ ամառայնոյ մինչ յարևադարձն ձմերայնոյ պակասի տիւն. այնպէս զի 'ի մտանել արևուն 'ի Խեցգետինն, առ մեզ լինի տիւն երկայն, և գիշերն կարճ. իսկ 'ի մտանելն յԱյծեղջիւր տիւն կարճանայ, և գիշերն երկայնի ։

Իսկ տիւ և գիշեր յայնժամ հաւասարին, յորժամ արեգակն լինի 'ի կէտ հաւասարածի. այս է՝ 'ի մտանելն արևու 'ի Խոյն, և 'ի Կշիռն ։

ԿԶ. Քաղաքական օրն է՝ որ ունի զայն չափ ժամանակի, յորում արեգակն 'ի միջոցի 24 ժամուց 'ի միոյ կիտէ ելեալ՝ դառնայ անդրէն 'ի նոյն կէտ. զոր օրինակ՝ 'ի միոյ միջօրէական կիտէ ելեալ՝ դառնայ 'ի նոյն միջօրէական կէտ. կամ 'ի միոյ ծագմանէ արևու, մինչ 'ի միւս ծագումն ։

ԿԷ. Սկիզբն քաղաքական աւուր է կէտն՝ կամ բոպէն, յորմէ սկսանի օրն. և յոր աւարտի նախընթաց օրն ։ Բայց ըստ այլ և այլ ազգաց՝ այլ և այլ է սկիզբն աւուրց. Հին բաբելոնացիք և ասորիք, ըստ վկայելոյ Պլինիոսի (գիրք. Բ. գլ. 77.) և այլ արևելեան ազգք. որպէս նաև այժմեան յոյնք զսկիզբն աւուրց սկսանէին 'ի ծագմանէ արևուն ։ Իսկ հին աթենացիք ըստ վկայելոյ Պլինիոսի. հայք, հրէայք, և այլք հարաւային կողման ազգք զսկիզբն աւուր հաշուէին 'ի մտիցն արևու ։ Այլք ևս՝ որպէս արաբացիք և այժմեան աստեղաբաշխք սկսանէին 'ի ժամէ կամ 'ի կիտէ միջօրեայ գծին ։ Իսկ այլք՝ որպէս եգիպտացիք, հին հռովմայեցիք՝ ընդ այժմեան անգղիացիս, գաղղիացիս,

սպանիացիս, գերմանացիս, սկսանին 'ի կիսէ կէս գիշերոյն։ Այնպէս՝ Կանոնք եկեղեցւոյ յօրինադրութիւն պաշտամանց, պահոց, և հսկմանց սկսանին 'ի կէս գիշերոյ 'ի կէս գիշեր։

## Ժ Ա Մ

լը. Վերջին բաժանումն ժամանակին յածի ընդ անուամբ ժամու, որ է չափ կամ մասն բնական աւուր հաւասարապէս բաժանելոյ 'ի 24 բաժինս. կամ է տևողութիւն քսաներորդ չորրորդ մասին միոյ աւուրն։ Այս բաժանումն է վաղեմի յոյժ 'ի մէջ արևելեան ազգաց. բազումք 'ի հեղինակաց հաստատեն, թէ Տրիսմէկիստոս եղև առաջինն, որ եմուծ զբաժանումն աւուր 'ի ժամս 24։

Իսկ առ հռովմայեցիս և առ մեծագոյն մասն արևմտեան ազգաց ոչ յիշատակի բաժանումն աւուր 'ի ժամս յառաջ քան զպատերազմ Կարքեդոնի. այլ մինչև ցայն ժամանակ հաշուէին զտիւն 'ի ծագմանէ արևուն մինչև 'ի մուտս նորա։

լթ. Իսկ զերկոտասան ժամս տունջեան բաժանէին 'ի քառեակ մասունս, յորոց իւրաքանչիւրն պարունակէր զերիս ժամս. զորս և կոչէին՝ Առաջին ժամ. Երրորդ ժամ. Վեցերորդ ժամ. և Իններորդ ժամ։ Առաջին ժամն պարունակէր զերկոտասանն առաւօտուն, զառաջինն, և զերկրորդն։ Երրորդ ժամն պարունակէր զերրորդն, զչորրորդն, և զհինգերորդն։ Վեցերորդ ժամն պարունակէր զվեցերորդն, զեօթներորդն, և զութերորդն։ Իններորդ ժամն պարունակէր զիններորդն, զտասներորդն, և զմետասաներորդն։ Նոյնպէս և զերկոտասան ժամս գիշերոյն բաժանէին 'ի քառեակ մասունս. զորս և կոչէին՝ առաջին պահ. երրորդ պահ. վեցերորդ պահ. և իններորդ պահ. որոց իւրաքանչիւրն պարունակէր զերիս ժամս, ըստ օրինակի տունջեան ժամուցն։

Խ. Միջոց ժամանակի միոյ ժամուն այնչափ տևէ՝ ցորչափ տևէ արեգակն օրական շարժմամբ 'ի 15 աստիճանս միոյ կենդանատեսակի զոդիակոսի. կամ յորժամ արեգակն հնդետասան աստիճանաւ 'ի վեր բարձրանայ քան զհորիզոնն։ Զի յիւրաքանչիւր կենդանա-

տեսակս յամէ արեգակն իբր երկուս ժամս, և այնպէս յերկոտասան կենդանատեսակսն կատարէ զընթացս իւր 'ի 24 ժամու:

Հա. Եղանակ հաշուելոյ զժամս աւուրն է այլ և այլ՝ ըստ զանազան ազգաց: Ըստ աստեղաբաշխից յում միջօրէի հաշուի 24 ժամ: Գաղղիացիք և մեծագոյն մասն եւրոպիոյ զժամս աւուրն բաժանեն յերկուս մասունս. այս է՝ յերկոտասան ժամս առաւօտեան, և յերկոտասան ժամս երեկոյեան: Առ թուեն զայս օրինակ. 'ի կէս գիշերոյն սկսեալ մինչև 'ի միջօրէն տունջեան, որ է երկոտասան ժամ, կոչի՝ առաւօտեան: Իսկ 'ի միջօրէէ սկսեալ մինչև 'ի մէջ գիշերոյն՝ այլ ևս երկոտասան ժամ, կոչի՝ երեկոյեան:

Հբ. Նախնին իտալացիք, որպէս և ազգն մեր ըզժամս աւուրն սկսանէին հաշուել 'ի մտից արևու մինչև 'ի յաջորդ մուտս, ուր աւարտի 24 ժամ: Վասն որոյ յօրացուցի մերում հաշիւք ժամուց և բոպէից՝ սկսանին յերեկոյէ յերեկոյ յետ մտից արևու անմիջապէս: Զոր օրինակ՝ յամի տն 1816 'ի մարտի 17. դնի ծնունդ զատկական լուսնի ժամ. 5. ր. 5. իմացեալ լինի 5 ժամն գիշերոյն՝ հաշուեալ յառաջ քան զլուսանալ 17 աւուր մարտի: Սոյնպէս 'ի նմին ամի 1816. 'ի 31 մարտի՝ դնի յօրացուցի աւագ լրումն լուսնի՝ ժամ. 14. ր. 14. իմանի ժամն առաւօտեան յետ ծագման արևուն 'ի 31 մարտի. որով յայտնի տեսանի՝ թէ յերեկոյէ յետ մտից արևու սկսեալ է հաշուիլ առաջին ժամն 'ի 31 աւուրն մարտի. որ յառաւօտուն յետ ծագման արևու հաշուի ժամ 14:

Հգ. Բայց միայն 'ի խաւարման լուսնի այլազգ դնի յօրացուցի. զի յորում աւուր դիպի ճիշտ լրումն լուսնի և խաւարումն, ոչ 'ի նմին աւուրն, այլ 'ի նախընթաց աւուրն դնի յօրացուցի յաւելմամբ բառիցս 'ի հետևեալ գիշերի: Զոր օրինակ՝ յամի տն 1822. 'ի 21 յուլիսի դնի խաւարումն լուսնի 'ի հետևեալ գիշերի. ժամ 7. ր. 3. և սակայն ճիշտ լրումն և խաւարումն դիպի 'ի չորեքտասանմն լուսնի 'ի 22. յուլիսի: Այլ 'ի 21 յուլիսի 'ի հետևեալ գիշերի դնելով, իմացեալ լինի հետևեալ գիշերն յետ 22 յուլիսի անմիջապէս զկնի մտից արևու. որ է սկիզբն 22 աւուր յուլիսի. ուստի

յառաջն 'ի հետևեալ գիշերի, նոյն քան է ասել՝ 'ի գիշերին, որ հետևի 'ի 22 յուլիսի ժամ 7. յառաջ քան զլուսանալն:

Զայս այսպէս եդաք յօրացուցի, զի մի՛ սխալմամբ կամ անմտադրութե՛ զանց արասցեն բազումք 'ի դիտել զխաւարումն. կարծելով թէ յետ առաւօտուն հասանելոյ՝ սկսանի օր 22 յուլիսի. կամ թէ 'ի գիշերին՝ որ յետ 22 յուլիսի ունի հանդիպիլ խաւարումն լուսնի, որ է սխալ. որովհետև ժամք աւուրն ըստ օրացուցին սկսանին յետ մտիցն արևու. որպէս ասացաւ 'ի վերոյ:

Սակայն թէ 'ի խաւարման լուսնի ևեթ հարկ է դնել 'ի հետևեալ գիշերի. և ոչ 'ի խաւարման արեգական. զի 'ի ցերեկի 'ի լոյս տունջեան հանդիպի խաւարումն արևու. զոր չէ՛ հնար այլազգ իմանալ վասն ժամուցն յայտնի ցուցանելոյ զօրն:

## ՐՈՊԷ

հդ. Ժամն ըստ աստղաբաշխից բաժանի յայլ փոքրագոյն մասն, որ կոչի րոպէ և վայրկեան, կամ մանրամասն: Րոպէն ոչ այլ ինչ է՝ բայց եթէ վաթսներորդ մասն միոյ ժամու. վասն զի մի ժամն բաժանի 'ի 60 հաւասար րոպէս: Այն սակս 'ի 60 թիւս բաժանեն զժամն, որպէս զի դիւրութե՛ և առանց յաւելուածոյ կոտորակաց բաժանեսցի 'ի բազում հաւասար մասունս. զի կէս նորին է 30. երիր մասն նորին է 20. չորիր մասն նորին է 15. հինգերորդ մասն նորին է 12. վեցերորդ մասն նորին է 10:

հե. Եթէ իւրաքանչիւր վաթսներորդ մասն բաժանեսցի դարձեալ յայլ 60 հաւասար մասունս, կոչի մանրերկրորդ, կամ երկրորդական րոպէ: Նոյնպէս եթէ այս մանրերկրորդս բաժանեսցի դարձեալ 'ի 60 հաւասար մասունս՝ կոչի մանրերրորդ կամ երրորդական րոպէ. և այսպէս հետ զհետէ 'ի բազում մանր մասունս և ևս:

# ՇՐՋԱՆ ԱՐԵԳԱԿԱՆ

## ԵՒ ԵՕԹՆԵՐԵԿԱՑ

ՀԶ. Շրջան արեգական է բոլորումն 28 ամաց՝ հնարեալ առ հեշտեաւ ճանաչելոյ զԿիրակագիրս կամ զԵօթներեակս. որ սկսանի 'ի միոյ և աւարտի 'ի 28։ Այս միջոց 28 ամաց կոչի շրջան արեգական, ո՛չ նկատմամբ ընթացից արեւուն, որ ո՛չինչ գործէ յայսմ, այլ վասն կիւրակէից, զոր 'ի հնումն կոչէին օր արեգական։ Վասն զի կիրակագիրն է այն՝ որ սկզբնաբար խնդրի յայսմ շրջանի։ Ուստի 'ի տոմարագիրս բացատրի անուամբ Կիրակագրի, կամ Եօթներեկաց. ըստ հին տոմարաց կոչի և Շաբաթագիր, որք յայտ առնեն զպատկերս աւուրց շաբաթու բոլոր ամին։

ՀԷ. Եւ առ այս կացուցան եօթն առաջին տառք այբուբենից. Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. ըստ թուոյ աւուրց եօթնեկին, որք յաջորդեն միմեանց ամ ըստ ամէ մինչեւ 'ի լրումն շրջանին՝ այլ և այլ կարգաւ, և ո՛չ միօրինակ. և 'ի սկսանիլ երկրորդի շրջանին, դարձեալ սկսանին նոյնին կարգաւ յաջորդել, որպէս և յառաջնումն։ Քանզի այս եօթնեքին տառք՝ որք կացուցան 'ի ցուցանել զեօթն աւուրս եօթնեկին, գրաւելով իւրաքանչիւրումն զմի օր, ո՛չ անխախտ և անփոփոխ զնոյն աւուրս ցուցանեն ամ ըստ ամէ 'ի նմին շրջանին, այլ փոփոխին և խախտին ամ ըստ ամէ յայսմ ամի զայս ինչ օր ցուցանեն, և 'ի միւսում զայլ։ Պատճառ սորին յառաջ գայ 'ի բնական կարգէ թուոյ աւուրց ամացն, որպէս տեսցի արդ։

ՀԸ. Հասարակ ամն ունելով 365 աւուրս՝ առնէ 52 եօթնեակս, և օր մի յաւելանայ. իսկ 'ի նահանջ ամին՝ որ ունի 366 աւուրս, յաւելանան երկու աւուրք. այս յաւելեալ աւուրք փոփոխեն զկարգ եօթներեկացն մինչեւ 'ի 28 ամ շրջանին։ Զո՛ր օրինակ՝ յառաջնում ամի՝ եթէ մի յեօթներեակ տառիցն, օրինակ իմն՝ Է. եղեալ յառաջին աւուր յունվարի 'ի ցուցանել զօր կիւրակէի՝ որ դիպէր յայնմ աւուր, կարգաւ ընթանալով

յառաջ մինչև ցլրումն ամին, նոյն եօթներեակ Է՝ գայ հանդէպ և վերջնում աւուր դեկտեմբերի. որ դիպէր նոյնպէս կիրակէ 'ի հասարակ ամին: Յորմէ պհեստ գայ թէ 'ի յաջորդ ամին առաջին օրն յունվարի՝ որոյ հանդէպ գտանի նոյն տառն Է, լինի երկուշաբաթի. իսկ որ կիւրակէին յայնմ ամի փոխադրի 'ի 7 յունվարի, որոյ հանդէպ գայ եօթներեակ տառն՝ Ա. որ և կիրակագիր այսմ տարւոյ: Նա զոր օրինակ՝ սոյն տառս Ա գտանի նաև 'ի 30 դեկտեմբերի, պհեստ գայ թէ 'ի 30 դեկտեմբերի է նոյնպէս կիրակէ. իսկ 31 օրն լինի երկուշաբաթի. և այնպէս 'ի 1 յունվարի յերրորդ ամին լինի երեքշաբաթի. որոյ հանդէպ է տառս Է. և ըստ այսմ փոփոխին յաջորդաբար. (Ձևէ):

հլթ. Իսկ 'ի նահանջ ամին՝ քանզի յաւելանայ օր մի 'ի փետրվար ամսեան, և լինի 29 օր. կրկին լինին յայնժամ եօթներեակք կամ կիրակագիրք 'ի միում ամի անդ. որոց մին յառաջին օրէ յունվարի առէ մինչև 'ի փետրվարի 28. իսկ միւսն մինչև 'ի վերջ տարւոյն: Ահա այս է գլխաւոր պատճառ փոփոխութեան և այլայլութեան կարգի եօթներեկաց մինչ 'ի 28 ամ շրջանին. զի 'ի նահանջ ամսն երկու եօթներեակք զուգընթաց գոլով, որք դիպլին եօթնիցս այլ և այլ կարգաւ, այլայլին կարգք նոցա՝ մինչև լինել շրջանին արևու 28 ամաց. և ապա դառնալ 'ի նոյն կարգ առաջին: Իսկ եթէ չլինէր երբեք նահանջ, բաւական էր յայնժամ դառնալ շրջանին 'ի միջոցի եօթն ամաց միայն: Որպէս տեսցես յառաջիկայ աղիւսակդ շրջան արեգական 28 ամաց ընդ տառից եօթներեկաց:

Ճ.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 Ա | 2 Բ | 3 Գ | 4 Դ Ե | 5 Զ | 6 Է | 7 Ա |
| 8 Բ Գ | 9 Դ | 10 Ե | 11 Զ | 12 Է Ա | 13 Բ | 14 Գ |
| 15 Դ | 16 Ե Զ | 17 Է | 18 Ա | 19 Բ | 20 Գ Դ | 21 Ե |
| 22 Զ | 23 Է | 24 Ա Բ | 25 Գ | 26 Դ | 27 Ե | 28 Զ Է |

ճէ. Գիտել պարտ է, զի եօթներեակք յաջորդեն միմեանց ամ ըստ ամէ ըստ ուղիղ կարգի տառիցն. Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. զոր օրինակ՝ եթէ յայսմ ամի եօթներեակն՝ որ ցուցանէ զօր կիւրակէին իցէ Ա. յերկրորդում ամի լինի՝ Բ. յերրորդումն՝ Գ. 'ի չորրորդումն եթէ իցէ նահանջ՝ Դ. Ե: և այլն ըստ կարգի: Այլ 'ի ցուցանել զպատկերս աւուրց եօթնեկին 'ի նմին տարւոջ, յաջորդեն միմեանց յետադարձ կարգաւ. Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. զոր օրինակ՝ յորժամ եօթներեակն՝ Է. ցուցանէ զօր կիւրակէի, տառն՝ Զ ցուցանէ զերկուշաբաթի. տառն Ե զերեքշաբաթի և այլն. որպէս յայտնի ցուցանի 'ի գաւազանս եօթներեկաց դասաւորելոց ըստ աւուրց ամսոց տարւոյն 'ի ժամագիրքն մեր փոքր:

ճը. Բայց առ լատինս զօրէն հակառակ՝ յաջորդեն միմեանց ամ ըստ ամէ յետադարձ կարգաւ. իսկ ըստ աւուրց եօթնեկին 'ի նմին տարւոջ ուղիղ կարգաւ: Այսմ չիք պատճառ ինչ. բայց եթէ սովորութի իւրաքանչիւր ազգաց:

### Կանոն գտանելոյ զեօթներեակս:

ճթ. Դիւրին է գտանել զեօթներեակ տարւոյն, եթէ գիտիցես զեօթներեակ նախընթաց տարւոյն. զի որպէս ասացաւ, եօթներեակք յաջորդեն միմեանց ամ ըստ ամէ ըստ ուղիղ կարգի. զի թէ յառաջնում ամի է Ա, յերկրորդում է Բ. և այլն ըստ կարգի: Բայց է և այլ կանոն գտանելոյ հաշուիւ ամաց թուականի, և 28 շրջանի՝ այսպէս:

ճժ. Առ զթուականն Հայոց, և 5 բարձ անտի. զմնացեալն բաժանեա թուովս 28. և որ ինչ յաւելանայ՝ այն է թիւ շրջանի արեգական: Եթէ ոչ ինչ յաւելանայ, թիւ շրջանին է 28, և կիրակագիրն ԶԷ: (Թիւ քանորդին ոչ ինչ օգտէ առ այս, այլ ցուցանէ միայն զքանիօնութի շրջանի արեւուն անցելոյ 'ի սկզբանէ թուականիս Հայոց մինչև ցայն ամն, զոր խնդրեիր): Զոր օրինակ՝ եթէ 'ի թուականիս Հայոց 1267. կամիս գտանել զեօթներեակն, բարձ անտի 5. և զմնա

ցեալ 1262․ բաժանեա՛ թուովս 28․ և առանց հայելոյ ՚ի քանորդն 45, որ ցուցանէ զքանիօնութիւն բոլորման շրջանին յետ Հայոց թուականին, մնացեալն 2՝ որ յաւելու ՚ի բաժանմանէ, է թիւ շրջանի արեգական ՚ի թուին Հայոց 1267, զոր խնդրէիր․ ընդ որով եօթներեակն կամ կիրակագիր նոյն տարւոյն է Բ ։

ձե․ Կամ այլազգ ։ Յետ ՚ի բաց բառնալոյ ՚ի թուականէն զ5․ հա՛ն ՚ի բաց և զամբողջ շրջանսն մեծ՝ որ է 532 ամ․ քանիցս անգամ և պարունակի ՚ի նմա․ և ապա զմնացեալն բաժանեա՛ թուովն 28․ և զյաւելեալն արա՛ նոյնպէս որպէս և աստ ։

ձզ․ Եթէ կամիս գտանել ՚ի ձեռն թուականի ծննդեան տն մերոյ, արա՛ այսպէս ։ ՚Ի թուականն քնի յաւե՛լ 4․ և զգումարն բաժանեա՛ թուովս 28․ յաւելեալն ՚ի բաժանմանէ անտի՝ է թիւ շրջանի այնմ ամի ։ Զո՛ր օրինակ՝ յամի տն 1818․ յաւե՛լ զ4․ և զ1822 բաժանեա՛ թուովս 28․ և յետ բաժանմանն յաւելանայ 2․ որ է թիւ շրջանի արեգական յամի տն 1818․ ընդ որով կիրակագիրն կամ եօթներեակն է՝ Բ ։

ձէ․ Յորժամ զոյգ է եօթներեակն՝ յայնժամ նահանջ է տարին․ և դու զառաջինն ՚ի գո՛րծ ած ՚ի յունվարի և ՚ի փետրվարի, և զերկրորդն ՚ի մարտէ սկսեալ մինչև ՚ի վերջ տարւոյն ։ Զո՛ր օրինակ՝ յորժամ ԴԳ է եօթներեակն․ ՚ի յունվարի և ՚ի փետրվարի կա՛լ զԴ․ իսկ յորժամ ՚ի մարտն մտանես զԳ ։

ձը․ Պատճառ կանոնիս բառնալոյ զ5 ՚ի թուականէս Հայոց՝ է այն, զի յառաջին ամի թուականիս Հայոց՝ ըստ կարգի խորանաց եօթներեկաց էր 24 ամ շրջանին․ և եօթներեակն էր ԱԲ․ զի նահանջ էր ամն․ և յետ 5 ամաց ՚ի վեցերորդ թուականիս է սկիզբն շրջանիս, այսինքն՝ 1․ և կիրակագիրն Ա։ Վասն այնորիկ 5 ՚ի բաց հանեալ լինի ՚ի թուականէս ։

Իսկ յամի փրկչին մերոյ սկիզբն շրջանիս ենթադրի լինել չորս ամօք յառաջ քան զծնանիլն քնի․ իբր զի յառաջին ամի տն մերոյ յետ նահանջ ամին էր 5 երորդ ամ շրջանին․ վասն այնորիկ 4 ամ յաւելեալ լինի ՚ի թուականն քնի, որպէս զի ամբողջասցի շրջանն 28 ամաց ՚ի գտանել զսկիզբն նորա 1 ։ Իսկ պատճառ հանելոյ ՚ի բաց զշրջանսն մեծ 532 ամաց՝ այս է, զի յիւրաքանչիւր ՚ի նոսա պարունակին ամբողջ շրջանք արե-

գական 19 անգամ առանց յաւելանալոյ․ զի 19 անգամ 28՝ է 532, որ է շրջանն մեծ ։

### Գիւտ եօթներեկաց՝ աղիւսակաւ, որ զկնի ։

ԾԹ․ Հնար է գտանել զեօթներեակս կամ զկիրակագիրս զի՛նչ և իցէ տարւոյ 'ի միջոցի չորից դարուցս՝ այսինքն 1800․ 1900․ 2000 և 2100․ 'ի ձեռն հետևեալ աղիւսակիս, որ պարունակէ զհինգ գաւազանս։ Յառաջին գաւազանին նշանակին Թուականք տարւոյ 'ի միոյ մինչև 'ի 99 'ի չորս կարգս զետեղեալք, որ են միաւոր և տասնաւոր մասունք միոյ դարու ։ 'Ի միւս չորս գաւազանս են շրջանք եօթներեկաց՝ կարգեալք ըստ այնմ օրինակի, որպէս զի ցուցցեն թէ ո՞ր իցէ կիրակագիրն իւրաքանչիւր տարւոյ՝ 'ի չորս դարս անդ նշանակեալս 'ի վերուստ ։

### Գործածութիւն աղիւսակի ։

Կ․ Որ 'ի գիւտ եօթներեկաց 'ի ձեռն աղիւսակիս՝ զի՛նչ և իցէ առաջարկեալ տարւոյ 'ի միջոցի դարուց նշանակելոց 'ի վերուստ, բաւական է հայել՝ թէ յո՞ր գաւազան շրջանի եօթներեկաց նշանակեալ կայ դարն առաջարկեալ տարւոյն, և յառաջին գաւազանն՝ յորում պարունակին 99 թիւք՝ գտանել 'ի նմա զհամեմատ թիւն խնդրեալ տարւոյն․ որով իսկոյն տեսանի համդէպ նոյն թուոյն եօթներեակն տարւոյն 'ի ներքոյ դարուն նշանակելոյ 'ի վերուստ ։

Որ օրինակ․ եթէ կամիս գտանել, թէ ո՞ր է եօթներեակն յամի Տն 1818․ գիտ նախ զդարն 1800, որ նշանակեալ կայ 'ի վերայ միոյ 'ի չորից շրջանաց եօթներեկաց․ և զթիւն 18 գտցես յառաջին գաւազանի՝ յառաջին կարգի ։ Զայս դիտեալ՝ բաւական է քեզ գալ 'ի ծանօթութիւն եօթներեկի որ համդէպ թուոյն 18 'ի ներքոյ գաւազանի դարուն 1800, այն է տառն՝ Բ․ ըստ այսմ օրինակի յայլ զի՛նչ և իցէ ամս գտանես զեօթներեակս․ ցորչափ անփոփոխ մնայ հին տոմարն ։

ղա. Աղիւսակ եօթներեկաց ըստ տումարին հայոց.

| Թուահամարք դարուց: | | | | 1800 | 1900 | 2000 | 2100 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 0 | 28 | 56 | 84 | ԷԱ | ԶԷ | ԵԶ | ԴԵ |
| 1 | 29 | 57 | 85 | Բ | Ա | Է | Զ |
| 2 | 30 | 58 | 86 | Գ | Բ | Ա | Է |
| 3 | 31 | 59 | 87 | Դ | Գ | Բ | Ա |
| 4 | 32 | 60 | 88 | ԵԶ | ԴԵ | ԳԴ | ԲԳ |
| 5 | 33 | 61 | 89 | Է | Զ | Ե | Դ |
| 6 | 34 | 62 | 90 | Ա | Է | Զ | Ե |
| 7 | 35 | 63 | 91 | Բ | Ա | Է | Զ |
| 8 | 36 | 64 | 92 | ԳԴ | ԲԳ | ԱԲ | ԷԱ |
| 9 | 37 | 65 | 93 | Ե | Դ | Գ | Բ |
| 10 | 38 | 66 | 94 | Զ | Ե | Դ | Գ |
| 11 | 39 | 67 | 95 | Է | Զ | Ե | Դ |
| 12 | 40 | 68 | 96 | ԱԲ | ԷԱ | ԶԷ | ԵԶ |
| 13 | 41 | 69 | 97 | Գ | Բ | Ա | Է |
| 14 | 42 | 70 | 98 | Դ | Գ | Բ | Ա |
| 15 | 43 | 71 | 99 | Ե | Դ | Գ | Բ |
| 16 | 44 | 72 | | ԶԷ | ԵԶ | ԴԵ | ԳԴ |
| 17 | 45 | 73 | | Ա | Է | Զ | Ե |
| 18 | 46 | 74 | | Բ | Ա | Է | Զ |
| 19 | 47 | 75 | | Գ | Բ | Ա | Է |
| 20 | 48 | 76 | | ԴԵ | ԳԴ | ԲԳ | ԱԲ |
| 21 | 49 | 77 | | Զ | Ե | Դ | Գ |
| 22 | 50 | 78 | | Է | Զ | Ե | Դ |
| 23 | 51 | 79 | | Ա | Է | Զ | Ե |
| 24 | 52 | 80 | | ԲԳ | ԱԲ | ԷԱ | ԶԷ |
| 25 | 53 | 81 | | Դ | Գ | Բ | Ա |
| 26 | 54 | 82 | | Ե | Դ | Գ | Բ |
| 27 | 55 | 83 | | Զ | Ե | Դ | Գ |

Տանիր՝ զի յաղիւսակի աստ 'ի կարգի Նուահամարաց դարուց՝ դնի օ զրօ մի, որ ցուցանէ զեօթներեակս դարադլխոց, որպէս և Թուահամարք 28. 56. և 84. որք ըստ հին տոմարին էն միշտ նահանջք. վասն որոյ և ունին զկրկին եօթներեակս:

## Եօթներեակ ըստ տոմարին Յունաց:

ղէ. Եթէ կամիս գտանել զեօթներեակս ըստ տումարին Յունաց, արա այսպէս: Առ զԹուականն քո, զորոյ զեօթներեակն խնդրես գտանել. բարձ անտի 8. և զմնացեալն բաժանեա 28 Թուով արեգական շրջանին. և որ ինչ յաւելանայ՝ այն է եօթներեակն Յունաց:

Որպէս օրինակ, յամի Տն 1820. խնդրես գտանել զեօթներեակն Յունաց, բարձ անտի 8. և զմնացեալ 1812 բաժանեա Թուովս 28. յետ բաժանմանն մնայ յաւելուած 20. և ահա այն է Թիւ եօթներեկի տարւոյն 1820 Թուականին: Որ և զոյգ գոլով Գ.Դ. ընդ 20 Թուով շրջանի արեգականն (ծ), ցուցանի՝ Թէ այն ամ դիպի նահանջ:

## Եօթներեակ ըստ նոր տոմարին:

ղը. Յաւելուք ևս ըստ նոր տումարին վարեն զառաջին եօթն տառս այբուբենից իւրեանց 'ի նշան եօթներեկաց. այլ յաջորդութի նոցա ամ ըստ ամէ լինի յետադաս կարգաւ. իբր զի՝ եթէ յայսմ ամի եօթներեակն է Գ. 'ի գալ ամին յաջորդէ Բ. ապա Ա, և այլն: (ծզ):

'Ի գիւտ եօթներեկաց իւրեանց, բաց 'ի վարելոյ հաշուին՝ որ երկար իմն է, ունին և զաղիւսակ՝ ըստ օրինակին՝ զոր եդաք 'ի վերոյ. այլ փոքր ինչ այլազգ քան զայն. Թէպէտ և եղանակ գտանելոյ է նոյն ամենայնիւ: Որպէս օրինակ՝ յամի Տն 1819 գիտ նախ զդարն 1800 'ի վերոյ եդեալ. և զԹիւն 19 գտցես յառաջին գաւազանի Թուահամարաց դարուց: Որ այս գտեալ՝ բաւական է քեզ գալ 'ի Համաչումն եօթներեկի՝ որ հանդէպ Թուոյն 19 ընդ գաւազանաւ դարուն 1800. այն է տառն Գ:

## ԴԷ. Աշխատակ եօթներեկայ ըստ նոր տումարին.

| Թուականք տարւոյ: | | | | 1700 2100 2500 | 1800 2200 2600 | 1900 2300 2700 | 2000 2400 2800 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 0 | | | | Գ | Ե | Է | |
| 0 | 28 | 56 | 84 | ԴԳ | ԶԵ | ԱԷ | ԲԱ |
| 1 | 29 | 57 | 85 | Բ | Դ | Զ | Է |
| 2 | 30 | 58 | 86 | Ա | Գ | Ե | Զ |
| 3 | 31 | 59 | 87 | Է | Բ | Դ | Ե |
| 4 | 32 | 60 | 88 | ԶԵ | ԱԷ | ԳԲ | ԴԳ |
| 5 | 33 | 61 | 89 | Դ | Զ | Ա | Բ |
| 6 | 34 | 62 | 90 | Գ | Ե | Է | Ա |
| 7 | 35 | 63 | 91 | Բ | Դ | Զ | Է |
| 8 | 36 | 64 | 92 | ԱԷ | ԳԲ | ԵԴ | ԶԵ |
| 9 | 37 | 65 | 93 | Զ | Ա | Գ | Դ |
| 10 | 38 | 66 | 94 | Ե | Է | Բ | Գ |
| 11 | 39 | 67 | 95 | Դ | Զ | Ա | Բ |
| 12 | 40 | 68 | 96 | ԳԲ | ԵԴ | ԷԶ | ԱԷ |
| 13 | 41 | 69 | 97 | Ա | Գ | Ե | Զ |
| 14 | 42 | 70 | 98 | Է | Բ | Դ | Ե |
| 15 | 43 | 71 | 99 | Զ | Ա | Գ | Դ |
| 16 | 44 | 72 | | ԵԴ | ԷԶ | ԲԱ | ԳԲ |
| 17 | 45 | 73 | | Գ | Ե | Է | Ա |
| 18 | 46 | 74 | | Բ | Դ | Զ | Է |
| 19 | 47 | 75 | | Ա | Գ | Ե | Զ |
| 20 | 48 | 76 | | ԷԶ | ԲԱ | ԴԳ | ԵԴ |
| 21 | 49 | 77 | | Ե | Է | Բ | Գ |
| 22 | 50 | 78 | | Դ | Զ | Ա | Բ |
| 23 | 51 | 79 | | Գ | Ե | Է | Ա |
| 24 | 52 | 80 | | ԲԱ | ԴԳ | ԶԵ | ԷԶ |
| 25 | 53 | 81 | | Է | Բ | Դ | Ե |
| 26 | 54 | 82 | | Զ | Ա | Գ | Դ |
| 27 | 55 | 83 | | Ե | Է | Բ | Գ |

լե․ Նամե՛ր, զի յաղիւսակի աստ եօթներեկաց լու-
տինաց ըստ նոր տումարին՝ եղեալ են յառաջին կար-
գի թուահամարոց դարուց՝ երկուս չբօ․ որք ցուցա-
նեն միայն զեօթներեակս դարագլխոց ։ Առաջին չբօն
եղեալ միայնակ ցուցանէ զեօթներեակս երից դա-
րագլխոց, որք յետ նորոգութեան տումարին են ամք հա-
սարակք, և ոչ նահանջք․ իսկ երկրորդ չբօն՝ ցուցանէ
զեօթներեակս այնց դարուց, որք ոչ են հասարակք,
այլ նահանջք․ զոր օրինակ են՝ 2000․ 2400․ 2800։
Զայսմանէ տես 'ի ստորև 'ի թիւն (մծթ)։

# ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐԵԱԿ
## ԿԱՄ ՈՍԿԵԳԻՐ։

լզ․ Յառաջին դարս քրիստոնէութեան բազմօք աշ-
խատ եղեն 'ի գտանել և 'ի սահմանել զշրջան իմն եր-
կուց լուսաւորացս՝ արեգական և լուսնի․ որպէս զի
հեշտեաւ մարթասցին 'ի նմին շրջանի կարգաւորել
զամս, զամիսս, և զաւուրս լուսնի՝ համեմատութք ա-
մաց, ամսոց և աւուրց արեգական․ այնպէս զի 'ի կա-
տարել շրջանին, վերստին դարձ լիցի այնու օրինակաւ,
և այնու կարգաւ, զոր հաստատեցին միանգամ։

Իբրև ձեռնամուխ եղեն 'ի պէսպէս շրջանս ամաց,
հուսկ յետոյ փորձիւ ուսան, թէ չիք այլ շրջան համա-
ռօտ և պիտանի առ այն՝ զոր խնդրէին․ բայց եթէ
շրջանն ինննևտասան ամաց գտեալ 'ի Մեթոնէ աթե-
նացւոյ․ այն է Շրջանն ինննևտասներեկաց․ որ կոչե-
ցաւ՝ Շրջան լուսնի, և Ոսկեգիր։

լէ․ Այս է շրջան իմն ինննևտասան թուոց, որ յաջոր-
դութք մի զկնի միոյ զհետ գան առանց ընդհատութեան,
ըստ բնական կարգի իւրեանց․ սկսեալ 'ի միոյ մինչև
յինննևտասն, ըստ այսմ օրինակի․ 1․ 2․ 3․ 4․ 5․ ևն․
մինչև 'ի վերջն 19․ որոց 'ի լրմանն՝ դառնան անդրէն
յառաջինն՝ 1․ անտի յերկրորդն 2․ և այնպէս շարու-
նակի անընդհատ շրջանն։

լը․ Այսու շրջանաւ ինննևտասան ամաց՝ դառնան
զուգընթացութիւնք երկուց լուսաւորացս 'ի նոյն գլուխ

և 'ի նոյն կէտ ըստ ամսոց, ըստ աւուրց և ըստ ժամուց։ Ո՛ր օրինակ՝ յառաջին ամի շրջանին՝ որ է 1. ենթադրեալ թէ ծնունդ լուսնի գայ 'ի 1 յունվարի, նոյնն յետ իննևտասն ամաց դարձեալ գայ 'ի նմին առաջին աւուր յունվարի, թէպէտ ո՛չ ճիշտ 'ի նմին ժամու և 'ի նոյն րոպէի։

ղթ. Իննևտասն ամ ասելով՝ իմանամք զամս արեգականն և ո՛չ լուսնի. (Է.) և են աւուրք 6939. ժամք 18. որք բաղկացուցանեն 228 ամիս արեգական. զի 12 անգամ 19՝ առնէ 228։ Եւ արդ՝ 'ի հաւասարութ̄ի շրջանին խնդրին նոյնչափ աւուրք և ժամք և 'ի կողմանէ լուսնի ըստ ամբողջ ամսոց նորա 'ի ծննդենէ 'ի ծնունդ, առ 'ի գալ դարձեալ 'ի նոյն կէտ ընդ արեգակամբ 'ի նմին ամսեան և 'ի նմին աւուր և ժամու. այլ առ այս պահանջին աւելի ամիսք լուսնի քան զարեգականն. իբր զի նուազ են աւուրք լուսնի ամսոյն քան զարեգական։

ճ. Արդ՝ 'ի թիւ աւուրցդ 6939. պարունակին ամիսք լուսնի 'ի ծննդենէ 'ի ծնունդ՝ 235. որք ըստ քաղաքական հաշուի՝ ունելով մի զկնի միոյ աւուրս 30, և 29. կամ՝ հաշուելով զիւրաքանչիւր ամիս լուսնի աւուրս 29. ժամս 12. րոպէս 44'. 3". ըստ միջական հաշուի. զորս բազմապատկեալ 235 լուսնի ամսովք. լինին աւուրք 6939. ժամք 16. րոպէ 31'. 45". ըստ ճիշտ հաշուի աստեղագիտաց։ Այս է բովանդակութ̄ի ընթացից լուսնի մինչ ցամս 19. որ և պակաս գտանի քան զընթացս արեգական 'ի շրջանի. 1 ժամու և 28'. 15". րոպէիւք։ Այնպէս զի՝ եթէ ծնունդ լուսնի լինէր յայսմ ամի 'ի 17 յունվարի, ժամ 18. յետ անցանելոյ շրջանի 19 ամաց, լինէր արդարև ծնունդ լուսնի 'ի նմին ամսեան, և 'ի նմին աւուրն, այսինքն՝ 'ի 17 յունվարի. բայց ո՛չ 'ի 18 ժամու. այլ իբր միով ժամու և կիսով յառաջ է։ Յորմէ յայտ է, թէ յետ լրանալոյ միոյ շրջանի 19 ամաց, և 'ի սկսանիլ երկրորդին, լուսինն և արեգակն ո՛չ դիպին միմեանց անվրէպ 'ի նոյն կէտ, յորում դիպան 'ի սկզբան նախընթաց շրջանին։

ճա. Վասն որոյ այս շրջան իննևտասներեկաց, որով նախնի տոմարագէտք յառաջին դարս վարէին 'ի

գտանել զծնունդ և զլրումն լուսնի, 'ի սկզբան անդ թէպէտ ըստ բաւականին անսխալ ցուցանէր. բայց յանցանել բազում դարուց 'ի յայտ եկին վրիպակք նորա, վասն տարբերութե՛ միոյ ժամու և կիսոյ, որ ընդ մէջ ընթացից երկուց լուսաւորացս: Զի 'ի միջոցի միոյ շրջանի 19 ամաց՝ մի ժամ և կէս յառաջէ ծնունդ լուսնի քան զընթացս արեգական: Ապա յառաւելուլ առ սակաւ սակաւ ընթացից արեգական, և 'ի պակասիլ լուսնոյն շրջանէ 'ի շրջան, յաւէտ ևս թիւրի հաշիւն գտանելոյ զծնունդ լուսնի. մինչև յանցանել 312 ամաց և կիսոյ, ամբողջ աւուրբ միով յառաջէ ծնունդ լուսնի, քան զոր ցուցանէ շրջանն իննևտասներեկաց. (մխէ):

ճբ. Վասն որոյ Գրիգոր երեքտասաներորդ պապն 'ի նորոգելն զհին տոմարն, փոխան իննևտասներեկի, եդ և կարգեաց զշրջանն վերադրաց. որով ուղիղ և ճիշտ լինի գտանել զծնունդ լուսնի, քան զոր 'ի ձեռն իննևտասներեկաց գտանէր ըստ հին տոմարին. զորմէ խօսեսցուք 'ի ստորև. (մխը):

ճգ. Թիւ ամաց իննևտասներեկի կոչի ևս Ոսկէգիր. զի 'ի հնումն առ աթենացիս նշանակեալ լինէր ամի ամի նոյն թիւ ոսկեգրով 'ի հրապարակի. զի ամենայն ոք տեսեալ՝ իմանայր զթիւ իննևտասներեկի տարւոյն. (լա):

Նոյնպէս և 'ի ժամանակս Նիկիոյ ոք ժողովոյն իբրև հաստատեցին զեղանակ կատարելոյ զտօն զատկին, կարգեցին 'ի տումարի զշրջանն իննևտասներեկի, և զթիւ շրջանի ամացն կոչեցին՝ Ոսկեգիր այս ինչ տարւոյ:

ճդ. Նա զառաջին թիւ իննևտասներեկի կամ ոսկեգրոյն ա. եդին հանդէպ 23 աւուր մարտի. զի 'ի նմին աւուր անկանէր ծնունդ զատկական լուսնի, մերձ առ հաւասարակածս գարնայնոյ. որպէս դիպաւ 'ի ժամանակի անդ Նիկիոյ ոք ժողովոյն: (*) Իսկ ըստ Յուլեան տոմարի 'ի գործ ածեալ յարևմտեան քրիստոնէից, յառաջ քան զնորոգութի տոմարագրին, ա ոսկեգիրն եդաւ հանդէպ առաջին աւուր յունվարի: Վասն զի սկիզբն այսր շրջանիս է ըստ կամաց և ըստ սովորութե

(*) Պետաւիոս յաղագս ուսման ժամանակի. գիրք Է. գլ. 12. յաղիւսակին:

ազգաց ։ Որպէս և մերում ազգի նոյնպէս սովորութի̃ եղև հանդէպ առաջին աւուր յունվարի դնել ո̃ թիւ իննևտասներեկի, կամ որ նոյն է՝ ոսկեգրոյն ։ Ըստ օ-րինակին՝ որ ցուցանի 'ի քանն՝ որ զշրջանէ Մերադրայ ։

Գիւտ իննևտասներեկաց ։

ճէ. Առ 'ի գտանել զիննևտասներեակ տարւոյն՝ այսպէս արա ։

Առ զթուականն Հայոց՝ զորոյ զիննևտասներեակն խնդրես գտանել. անտի 'ի բաց հան 1. և զմնացեալն բաժանեա թուովս 19. և որ ինչ յաւելցանայ՝ այն է իննևտասներեակ տարւոյն ։ Իսկ եթէ ո՛չ ինչ յաւելա-նայ, վերջին ամ է շրջանին, և իննևտասներեակն է 19 ։

Որ օրինակ՝ եթէ 'ի թուին Հայոց 1266. կամիս գտանել զիննևտասներեակն, 'ի բաց հան անտի 1. և զմնացեալն 1265, բաժանեա թուովս 19. յաւելեալ թիւն՝ որ մնայ 11, ցուցանէ զիննևտասներեակ թուին Հայոց 1266, լինել 11 ։

ճը. Կամ ըստ կանոնիս, յետ 'ի բաց բառնալոյ զթիւն 1 'ի թուականէն Հայոց, 'ի բաց հան և զշրջանն մեծ 532. միանգամ կամ երկիցս, յորս պարունակին ամբողջ շրջանք իննևտասներեկաց. և ապա զմնացեալն բաժանեա թուովս 19. որ դիւրին և համառօտ ևս է ։ Որպէս աստ 'ի նմին թուականի Հայոց 1266. 'ի բաց հանեալ զթիւն 1, և զշրջանն մեծ երկիցս. այսինքն՝ 1064. մնայ 201. զոր բաժանեալ 19 թուով, յաւելա-նայ նոյնպէս 11. որ է իննևտասներեակ նոյն տարւոյն ։

ճթ. Եթէ 'ի ձեռն թուականի ծննդեանն Ք̃ի կամի-ցիս գտանել զիննևտասներեակն, զնոյն շաւիղ կալ, զոր ինչ ասացաք 'ի վերոյ. այսինքն՝ 1 'ի բաց հան 'ի թուականէն Ք̃ի. և զմնացեալն բաժանեա թուովս 19. և որ ինչ յաւելցանայ՝ այն է իննևտասներեակ թիւ տարւոյն ։

Քանորդն 'ի բաժանմանն աստ ո՛չ ինչ օգտէ 'ի գիւտ իննևտասներեկի. այլ միայն ցուցանէ՝ թէ քանի շրջանն 19 ամեայ 'ի ժամանակէ անտի առաջին թուա-կանի Հայոց, ի՛նչափ շրջան առեալ է, ո՛րչափ է գու-մար քանորդին այնորիկ ։ Որպէս յառաջին օրինակին 1266 թիւն բաժանեալ 19 թուով շրջանին՝ քանորդն

լինի 66. ուստի 66 անգամ շրջան առեալ է իննևտասներեակն յառաջին ամէ Թուականին Հայոց :

Պատճառ 'ի բաց բառնալոյ զԹիւ 1 'ի Թուականէն՝ զորոյ խնդրես զիննևտասներեակն, է այն. զի յառաջնում ամի Թուականին Հայոց, որպէս և յառաջին ամի ծննդեան քի, վերջին ամ էր իննևտասներեակ շրջանին. այսինքն՝ 19. և 1 'ի բաց բառնի առ 'ի լրումն այնր շրջանի :

### Տաչւ կանոն յաղագս գիտելոյ իննևտասներեկաց :

ՃԸ. Իննևտասներեակն գտանի նաև 'ի ձեռն հետևեալ աղիւսակիս. ուր յառաջին կարգի անդ 'ի ձախմէ դնին Տ. մք ամն, կամ որ նոյն է Թուական Հայոց. կարգաւ սկսեալ 'ի միոյ մինչև 'ի 10. 'ի 10 էն մինչև 'ի 100 տասնաւորք. 'ի 100 է մինչև 'ի 1000 հարիւրաւորք. և 'ի 1000 է մինչև 'ի 10000 հազարաւորք. Յերկրորդ կարգի յաջմէ կողմանէ դնին Թիւք իննևտասներեկաց. յաջորդաբար յաւելլով մի 'ի վերայ նախընթացին մինչև 'ի 10. կամ բառնալով 19՝ և դնելով զմնացեալն. զոր օրինակ 'ի 20 Թուականէն բառնի գումար 19 շրջանի, և դնի 1. զի 'ի նոսին ոչ յաջորդեն ամք մի զկնի միոյ. (որպէս եղև սկսեալ 'ի միոյ մինչ 'ի 10.) այլ տասամբք կամ հարիւրովք ընդհատեալ դասն. որպէս երևի յաղիւսակի անդ :

### Գործածութիւն աղիւսակիս :

ՃԹ. 'Ի կամիլն գտանել զիննևտասներեակն տարւոյ ինչ, գիտ յաղիւսակի անդ 'ի ձախմէ զամն՝ զոր խնդրես. և հանդէպ նորա յաջմէ զիննևտասներեակն գտանես. յորմէ բարձեալ 1. է իննևտասներեակն նոյն տարւոյ : Իսկ եթէ ոչ գտցի անդ 'ի ձախմէ նշանակեալ ամն, զորոյ խնդրես զիննևտասներեակն, պարտ է յայնժամ գումարել 'ի միասին զիննևտասներեակս ամացն այնոցիկ, յորոց հաւաքի ամն առաջի եդեալ. և 'ի գումարէ անտի 'ի բաց հանեալ 1. այլ և 19, եթէ գտցի անդ. այն է իննևտասներեակն ամին՝ զոր խնդրես:

Որ օրինակ՝ եթէ կամիս գտանել զիննևտասներեակն ամի տն 1820. քանզի այս ամ ոչ գտանի յաղիւ-

տակի անդ միանգամայն, այլ բաժանաբար. այսինքն՝ 1000. 800. և 20. զնոցին իննևտասներեակս 'ի մի հաւաքեա. այսինքն՝ 12. 2. և 1. որք առնեն 15. և քանզի է նուազ քան զ19. 'ի բաց բարձ միայն զթիւ 1. և մնայ 14. և ահա այն է թիւն իննևտասներեկի 1820 թուականի տ՟ն։

ճժ. Իսկ եթէ խնդրեսցես զիննևտասներեակն 1269 թուականիս Հայոց, առ զիննևտասներեակս 1000. 200. 60. և 9. ամսոյն. որք են 12. 10. 3. 9. որոց 'ի մի գումարեալ՝ առնեն 34. յորմէ 'ի բաց բարձեալ 19. մնայ 15. և 1 ևս 'ի բաց հանեալ՝ մնայ 14։ Եւ ահա այս է թիւ իննևտասներեկի թուականին Հայոց 1269. որ է ամ տ՟ն 1820։

ճժա. Այն յայտ իսկ է, զի յորժամ գտանի իննևտասներեակն, կամ որ նոյն է՝ ոսկեգիրն միոյ ամի, դիւրին է այնուհետև մի միայն թուոյ յաւելմամբ 'ի նոյնն, ունել զիննևտասներեակն յաջորդ ամին։ Ընդհակառակն 'ի ձեռն բարձման միոյ թուոյ 'ի նմանէ, գտանել զիննևտասներեակն նախընթաց ամին։

ՃԺԷ. Մշտնջենաւոր աղիւսակ իննևտասներեկաց:

Դարձ. 1:

| Ամ. Տն. Թուական. Հայոց: | Իննևտասն": | Ամ. Տն. Թուական. Հայոց: | Իննևտասն": |
|---|---|---|---|
| 1 | 1 | 200 | 10 |
| 2 | 2 | 300 | 15 |
| 3 | 3 | 400 | 1 |
| 4 | 4 | 500 | 6 |
| 5 | 5 | 600 | 11 |
| 6 | 6 | 700 | 16 |
| 7 | 7 | 800 | 2 |
| 8 | 8 | 900 | 7 |
| 9 | 9 | 1000 | 12 |
| 10 | 10 | 2000 | 5 |
| 20 | 1 | 3000 | 17 |
| 30 | 11 | 4000 | 10 |
| 40 | 2 | 5000 | 3 |
| 50 | 12 | 6000 | 15 |
| 60 | 3 | 7000 | 8 |
| 70 | 13 | 8000 | 1 |
| 80 | 4 | 9000 | 13 |
| 90 | 14 | 10000 | 6 |
| 100 | 5 | 20000 | 12 |

ՃԺԸ. Իսկ եթէ կամիս գտանել ըստ հաշուի Նոր տոմարի, կամ ըստ լատ" զիննևտասներեակ տարւոյ ինչ, այսպէս արա: Առ զթուականն ամի Տն, և փոխանակ բառնալոյ զթիւ 1, ընդ հակառակն յաւել 1, 'ի նոյն առաջադրեալ ամն Տն. և զգումարն բաժանեա թուովս 19. և առանց միտ դնելոյ 'ի քանորդն, որ ինչ մնայ յետ բաժանմանն, այն է իննևտասներեակ այնմ տարւոյ: Զոր օրինակ՝ յամի Տն 1817. կամիս գիտել զիննևտասներեակ ըստ լատ". յաւել 1 'ի նոյն ամն, և զգումարն 1818, բաժանեա 19 թուով, և յետ բաժանմանն մնայ յաւելուած 13. որ է իննևտասներեակ ամի Տն 1817. ըստ լատ": Նախընթաց աղիւսակս ևս

կարես գտանել դիւրաւ, եթէ արասցես ըստ օրինակին՝ զոր ասացաք 'ի վերոյ. միայն փոխանակ բառնալոյ 1 ըստ հաշուի հին տոմարին, պարտ է ընդ հակառակն յաւելուլ 1, (որպէս ասացաք.) և այնպէս վարել ըստ կանոնին:

ՃԺԴ. Ապա եթէ կամիս գտանել զիննևտասներեակս ըստ տումարին Յունաց, այսպէս արա: Առ զթուականն ամի Տեառն՝ զորոյ զիննևտասներեակն խնդրես գտանել. բարձ անտի 2. և զմնացեալն բաժանեա թուովս 19. և որ ինչ յաւելանայ՝ այն է իննևտասներեակն յունաց: Որ օրինակ՝ յամի Տեառն 1818, խնդրես գտանել զիննևտասներեակն, բարձ անտի 2. և զմնացեալ 1816. բաժանեա թուովս 19. յետ բաժանմանն մնայ յաւելուած 11. և ահա այն է թիւն իննևտասներեկի 1818 թուականի Տեառն:

Նախընթաց աշխատակաւս ևս կարես գտանել դիւրաւ, եթէ արասցես ըստ օրինակին, զոր ասացաք 'ի վերոյ. միայն փոխանակ բառնալոյ զ 1. բարձ 2. (որպէս ասացաք). և այնպէս 'ի կիր առնուլ ըստ կանոնին:

## ՇՐՋԱՆ ՎԵՐԱԴԻՐԱՑ

ՃԺԵ. Ըստ թուոյ շրջանի իննևտասներեկաց յառաջ եկն և շրջանն վերադրաց իննևտասն թուով. որով դիւրին իմն հաշուօք գտանին աւուրք լուսնի և ծնունդ նորա, առանց հայելոյ 'ի շրջանն իննևտասներեկաց:

Որդ՝ վերադիրք են յաւելեալ աւուրք տարւոյ արեգական քան զամն լուսնոյ: Կամ՝ են յաւելուածք երկոտասան ամսոց արեգական՝ 'ի վերոյ երկոտասան ամսոց լուսնի: Զի որպէս ասացաւ, հասարակ ամն արեգական ունի աւուրս 365. իսկ ամն լուսնի ունի աւուրս 354: Ուստի ամն արեգական առաւելու 11 աւուրբք քան զամն լուսնի:

ՃԺԶ. Այս 11 աւուրքս յաւելեալք՝ կոչին վերադիրք, առ 'ի վերադրել կամ յաւելուլ յամն լուսնի, որպէս զի 'ի շրջանի 19 ամաց հաւասարեսցին ընդ ամս արեգական: Իսկ քանզի այս 11 աւուրք ամ յամէ յաւելանան միշտ. յորժամ յայս ինչ ամի վերադիրն աւ-

ըեկան է ԺԱ. 'ի գալ երկրորդ ամին՝ յաւելեալ այլ եւս 11. լինի յերկրորդում ամի վերադիրն ԻԲ. յերրորդ ամին այլ եւս 11, լինի ԼԳ. յորմէ 'ի բաց բարձեալ 30. որ է իբր ամբողջ ամիս մի լուսնի. մնայ վերադիրն Գ։ Որով ցուցանի՝ թէ 'ի լրանալ երրորդ ամի արեգական, յաւելու ամիս մի լուսնի 'ի վերայ ամսոյ արեգական. և թէ յայն ամ լուսնի եղեն ամիսք երեքտասան, որ և կոչի Նահանջ լուսնոյ, և ունի աւուրս 384։ 'Ի չորրորդ ամին այլ եւս 11 յաւելեալ 'ի վերայ նորա. լինի վերադիրն ԺԴ։ Ըստ այսմ օրինակի՝ ամ ըստ ամէ յաւելեալ մետասան՝ աւուրս 'ի վերայ առաջնոյն մինչև 'ի լրումն շրջանին, վերստին դառնայ 'ի նոյն առաջին վերադիր։ Ասանի շրջան վերադրաց է իննևտասն ըստ թուոյ իննևտասներեկաց, որ յաջորդեն մի զկնի միոյ ըստ այսմ օրինակի։ ԺԱ. ԻԲ. Գ. ԺԴ. ԻԵ. Զ. ԺԷ. ԻԸ. Թ. Ի. Բ. ԺԳ. ԻԴ. Ե. ԺԶ. ԻԷ. Ը. ԺԹ. Լ։

ՃԺԷ. Բայց սկզբնաւորութիւն կարգի վերադրաց է ըստ հաճութեան և ըստ սովորութեան ազգաց. որպէս և սկզբնաւորութիւն ամաց իննևտասներեկին, կամ՝ ոսկեգրոյն։ Մեր՝ յազգի մերում սովորութիւն լեալ է սկիզբն առնել վերադրաց, 'ի վերադրէս Բ։ իբր զի յառաջնում ամի իննևտասներեկին վերադիրն է Բ. յերկրորդում ԺԳ. յերրորդում ԻԴ. 'ի չորրորդում Ե. որպէս և տեսանես յառաջիկայ աղիւսակդ։

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բ | ԺԳ | ԻԴ | Ե | ԺԶ | ԻԷ | Ը | ԺԹ | Լ | ԺԱ |
| ԻԲ | Գ | ԺԴ | ԻԵ | Զ | ԺԷ | ԻԸ | Թ | Ի | |

ՃԺԸ. Այլ գիտել պարտ է՝ զի թէպէտ և վերադիրք պէսպիսանան յաւելմամբ 11 աւուրց ամ ըստ ամէ. բայց յորժամ վերադիրն լինի Թ. յութուտասաներորդի ամի շրջանին, 'ի վերջնում ամի՝ այսինքն յիննևտասներորդի վերադրի՝ որ է Ի, յաւելեալ լինին աւուրք 12։

Դասաւորութիւն վերադրաց 'ի տոմարագիրս։

ՃԺԹ. 'Ի տոմարագիրս մասնաւոր իմն է կարգ դասաւորութեան վերադրաց։ Երեսուն թիւք հանդէպ

իւրաքանչիւր աւուրց ամսոց կարգեալ դասին յաջորդութե՛ վերուստ 'ի վայր, այլ յետադարձ կարգաւ առանց ինչ ընդհատութե՛. այնպէս զի 'ի տեղի իննևտասներեկաց փոփոխակի ծառայեսցեն 'ի գտանել զծնունդ լուսնի: Եւ թէպէտ երեսուն են թիւք վերադրաց, որք կարգին 'ի տումարին, սակայն իննևտասն են միայն Վերադիրք, ըստ թուոյ 19 ամաց շրջանի իննևտասներեկաց. և են նոքին՝ որք դնին կամ գան հանդէպ իննևտասներեկացն կամ ոսկեգրոցն, որպէս երևի 'ի յաջորդ աղիւսակի:

ՃԻ. Ո՛ր օրինակ, յառաջին աւուր յունվարի հանդէպ ա՛ թուոյ ոսկեգրոյն՝ դնի առաջին վերադիրն, որ է Բ, (ըստ հին կարգի վերադրաց,) ապա անցանէ յերկրորդ օրն յունվարի՝ Ա վերադիր. ապա յերրորդ օրն Լ. հանդէպ Թ ոսկեգրոյն. 'ի չորրորդն ԻԹ. 'ի հինգերորդն ԻԸ. և այսպէս մինչև 'ի վերջն յունվարի յետադարձ կարգաւ դնի դարձեալ՝ Բ: Անտի անցանէ 'ի փետրվարի առաջին օրն Ա. յերկրորդ օրն՝ Լ. և ԻԹ. յերրորդն ԻԸ. 'ի չորրորդն ԻԷ, և այլն. ըստ այսմ յայլ ամենայն աւուրս նովին կարգաւ մինչև 'ի դեկտեմբերի 'ի վերջին օր տարւոյն:

ՃԻա. Բայց 'ի վեց տեղեաց՝ յորս կրկին թիւք դնին հանդէպ աւուրց ինչ ամսոց. զո՛ր օրինակ՝ յերկրորդ աւուր փետրվարի. Լ. և ԻԹ: Այնպէս 'ի 6 ապրիլի. ԻԷ. ԻԶ: և 'ի 4 յունիսի. ԻԷ. ԻԶ: 'ի 2. օգոստոսի. ԻԷ. ԻԶ: 'ի 2 սեպտեմբերի. ԻԵ. ԻԴ: և 'ի վերջն նոյեմբերի. ԻԴ. ԻԵ: Որպէս զի բարձմամբ վեց աւուրցն 'ի կարգէ երեսուն թուոց վերադրաց՝ կրկնելոց երկոտասանիցս 'ի տումարի, վերածեսցին յամին 'ի 354 աւուրս միայն. այս է՝ ցո՛րչափ է ամի լուսնոյ 'ի միջոցի երկոտասան ամսոց. որ և աւարտի մինչև 'ի 20 դեկտեմբերի փաղառութե՛: Յետ որոյ մնան մետասան աւուրք յաւելեալք 'ի դեկտեմբերի. որք և ունին զնոյն թուանշանս Վերադրաց՝ համեմատ սկզբնաւորելոց յառաջին աւուրն յունվարի. որպէս տեսցի յառաջինկոյ օրինակդ:

Ձիր.

| ՅՈՒՆՎԱՐ | | | | ՓԵՏՐՎԱՐ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Օր ամսոյն | Ոսկեգիր | Վերադիր | Կիւրակէագիր | Օր ամսոյն | Ոսկեգիր | Վերադիր | Կիւրակէագիր |
| 1 | ա | բ | Է | 1 | | ա | Դ |
| 2 | | ա | Զ | 2 | թ | լ. իթ | Գ |
| 3 | թ | լ | Ե | 3 | ժէ | իը | Բ |
| 4 | | իթ | Դ | 4 | զ | իէ | Ա |
| 5 | ժէ | իը | Գ | 5 | | իզ | Է |
| 6 | զ | իէ | Բ | 6 | ժդ | իե | Զ |
| 7 | | իզ | Ա | 7 | գ | իդ | Ե |
| 8 | ժդ | իե | Է | 8 | | իգ | Դ |
| 9 | գ | իդ | Զ | 9 | ժա | իբ | Գ |
| 10 | | իգ | Ե | 10 | ժթ | իա | Բ |
| 11 | ժա | իբ | Դ | 11 | | ի | Ա |
| 12 | ժթ | իա | Գ | 12 | ը | ժթ | Է |
| 13 | | ի | Բ | 13 | | ժը | Զ |
| 14 | ը | ժթ | Ա | 14 | ժզ | ժէ | Ե |
| 15 | | ժը | Է | 15 | ե | ժզ | Դ |
| 16 | ժզ | ժէ | Զ | 16 | | ժե | Գ |
| 17 | ե | ժզ | Ե | 17 | ժգ | ժդ | Բ |
| 18 | | ժե | Դ | 18 | բ | ժգ | Ա |
| 19 | ժգ | ժդ | Գ | 19 | | ժբ | Է |
| 20 | բ | ժգ | Բ | 20 | ժ | ժա | Զ |
| 21 | | ժբ | Ա | 21 | | ժ | Ե |
| 22 | ժ | ժա | Է | 22 | ժը | թ | Դ |
| 23 | | ժ | Զ | 23 | է | ը | Գ |
| 24 | ժը | թ | Ե | 24 | | է | Բ |
| 25 | է | ը | Դ | 25 | ժե | զ | Ա |
| 26 | | է | Գ | 26 | դ | ե | Է |
| 27 | ժե | զ | Բ | 27 | | դ | Զ |
| 28 | դ | ե | Ա | 28 | ժբ | գ | Ե |
| 29 | | դ | Է | | | | |
| 30 | ժբ | գ | Զ | | | | |
| 31 | ա | բ | Ե | | | | |

## ՄԱՐՏ

| Օր ամսոյ | Ոսկեգիր | Եպակտք | Կիւրակէագիր |
|---|---|---|---|
| 1 | ա | բ | Դ |
| 2 | | ա | Գ |
| 3 | թ | լ | Բ |
| 4 | | իթ | Ա |
| 5 | ժէ | իը | Է |
| 6 | զ | իէ | Զ |
| 7 | | իզ | Ե |
| 8 | ժդ | իե | Դ |
| 9 | գ | իդ | Գ |
| 10 | | իգ | Բ |
| 11 | ժա | իբ | Ա |
| 12 | ժթ | իա | Է |
| 13 | | ի | Զ |
| 14 | ը | ժթ | Ե |
| 15 | | ժը | Դ |
| 16 | ժզ | ժէ | Գ |
| 17 | ե | ժզ | Բ |
| 18 | | ժե | Ա |
| 19 | ժգ | ժդ | Է |
| 20 | բ | ժգ | Զ |
| 21 | | ժբ | Ե |
| 22 | ժ | ժա | Դ |
| 23 | | ժ | Գ |
| 24 | ժը | թ | Բ |
| 25 | է | ը | Ա |
| 26 | | է | Է |
| 27 | ժե | զ | Զ |
| 28 | դ | ե | Ե |
| 29 | | դ | Դ |
| 30 | ժբ | գ | Գ |
| 31 | ա | բ | Բ |

## ԱՊՐԻԼ

| Օր ամսոյ | Ոսկեգիր | Եպակտք | Կիւրակէագիր |
|---|---|---|---|
| 1 | | ա | Ա |
| 2 | թ | լ | Է |
| 3 | | իթ | Զ |
| 4 | ժէ | իը | Ե |
| 5 | զ | իէ | Դ |
| 6 | ժդ | իե · իզ | Գ |
| 7 | գ | իդ | Բ |
| 8 | | իգ | Ա |
| 9 | ժա | իբ | Է |
| 10 | ժթ | իա | Զ |
| 11 | | ի | Ե |
| 12 | ը | ժթ | Դ |
| 13 | | ժը | Գ |
| 14 | ժզ | ժէ | Բ |
| 15 | ե | ժզ | Ա |
| 16 | | ժե | Է |
| 17 | ժգ | ժդ | Զ |
| 18 | բ | ժգ | Ե |
| 19 | | ժբ | Դ |
| 20 | ժ | ժա | Գ |
| 21 | | ժ | Բ |
| 22 | ժը | թ | Ա |
| 23 | է | ը | Է |
| 24 | | է | Զ |
| 25 | ժե | զ | Ե |
| 26 | դ | ե | Դ |
| 27 | | դ | Գ |
| 28 | ժբ | գ | Բ |
| 29 | ա | բ | Ա |
| 30 | | ա | Է |

| ՄԱՅԻՍ | | | |
|---|---|---|---|
| Օր ամսոյ | Ոսկեթիւ | Եպակտ | Գիր կիրակէի |
| 1 | թ | լ | Զ |
| 2 | | իթ | Ե |
| 3 | ժէ | իը | Դ |
| 4 | զ | իէ | Գ |
| 5 | | իզ | Բ |
| 6 | ժդ | իե | Ա |
| 7 | գ | իդ | Է |
| 8 | | իգ | Զ |
| 9 | ժա | իբ | Ե |
| 10 | ժթ | իա | Դ |
| 11 | | ի | Գ |
| 12 | ը | ժթ | Բ |
| 13 | | ժը | Ա |
| 14 | ժզ | ժէ | Է |
| 15 | ե | ժզ | Զ |
| 16 | | ժե | Ե |
| 17 | ժգ | ժդ | Դ |
| 18 | բ | ժգ | Գ |
| 19 | | ժբ | Բ |
| 20 | ժ | ժա | Ա |
| 21 | | ժ | Է |
| 22 | ժը | թ | Զ |
| 23 | է | ը | Ե |
| 24 | | է | Դ |
| 25 | ժե | զ | Գ |
| 26 | դ | ե | Բ |
| 27 | | դ | Ա |
| 28 | ժբ | գ | Է |
| 29 | ա | բ | Զ |
| 30 | | ա | Ե |
| 31 | թ | լ | Դ |

| ՅՈՒՆԻՍ | | | |
|---|---|---|---|
| Օր ամսոյ | Ոսկեթիւ | Եպակտ | Գիր կիրակէի |
| 1 | | իթ | Գ |
| 2 | ժէ | իը | Բ |
| 3 | զ | իէ | Ա |
| 4 | ժդ | իե · իզ | Է |
| 5 | գ | իդ | Զ |
| 6 | | իգ | Ե |
| 7 | ժա | իբ | Դ |
| 8 | ժթ | իա | Գ |
| 9 | | ի | Բ |
| 10 | ը | ժթ | Ա |
| 11 | | ժը | Է |
| 12 | ժզ | ժէ | Զ |
| 13 | ե | ժզ | Ե |
| 14 | | ժե | Դ |
| 15 | ժգ | ժդ | Գ |
| 16 | բ | ժգ | Բ |
| 17 | | ժբ | Ա |
| 18 | ժ | ժա | Է |
| 19 | | ժ | Զ |
| 20 | ժը | թ | Ե |
| 21 | է | ը | Դ |
| 22 | | է | Գ |
| 23 | ժե | զ | Բ |
| 24 | դ | ե | Ա |
| 25 | | դ | Է |
| 26 | ժբ | գ | Զ |
| 27 | ա | բ | Ե |
| 28 | | ա | Դ |
| 29 | թ | լ | Գ |
| 30 | | իթ | Բ |

| ՅՈՒԼԻՍ | | | | ՕԳՈՍՏՈՍ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Օր ամսոյ | Ոսկեթիւ | Եպակտ | Գիր կիւրակէի | Օր ամսոյ | Ոսկեթիւ | Եպակտ | Գիր կիւրակէի |
| 1 | ժէ | իը | Ա | 1 | զ | իէ | Ե |
| 2 | զ | իէ | Է | 2 | ժդ | իե · իզ | Դ |
| 3 | | իզ | Զ | 3 | գ | իդ | Գ |
| 4 | ժդ | իե | Ե | 4 | | իգ | Բ |
| 5 | գ | իդ | Դ | 5 | ժա | իբ | Ա |
| 6 | | իգ | Գ | 6 | ժթ | իա | Է |
| 7 | ժա | իբ | Բ | 7 | | ի | Զ |
| 8 | ժթ | իա | Ա | 8 | ը | ժթ | Ե |
| 9 | | ի | Է | 9 | | ժը | Դ |
| 10 | ը | ժթ | Զ | 10 | ժզ | ժէ | Գ |
| 11 | | ժը | Ե | 11 | ե | ժզ | Բ |
| 12 | ժզ | ժէ | Դ | 12 | | ժե | Ա |
| 13 | ե | ժզ | Գ | 13 | ժգ | ժդ | Է |
| 14 | | ժե | Բ | 14 | բ | ժգ | Զ |
| 15 | ժգ | ժդ | Ա | 15 | | ժբ | Ե |
| 16 | բ | ժգ | Է | 16 | ժ | ժա | Դ |
| 17 | | ժբ | Զ | 17 | | ժ | Գ |
| 18 | ժ | ժա | Ե | 18 | ժը | թ | Բ |
| 19 | | ժ | Դ | 19 | է | ը | Ա |
| 20 | ժը | թ | Գ | 20 | | է | Է |
| 21 | է | ը | Բ | 21 | ժե | զ | Զ |
| 22 | | է | Ա | 22 | դ | ե | Ե |
| 23 | ժե | զ | Է | 23 | | դ | Դ |
| 24 | դ | ե | Զ | 24 | ժբ | գ | Գ |
| 25 | | դ | Ե | 25 | ա | բ | Բ |
| 26 | ժբ | գ | Դ | 26 | | ա | Ա |
| 27 | ա | բ | Գ | 27 | թ | ւ | Է |
| 28 | | ա | Բ | 28 | | իթ | Զ |
| 29 | թ | ւ | Ա | 29 | ժէ | իը | Ե |
| 30 | | իթ | Է | 30 | զ | իէ | Դ |
| 31 | ժէ | իը | Զ | 31 | | իզ | Գ |

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

| Օր ամսոյ | Ոսկեթիւ | Ներաբեր | Կիւրակէագիր |
|---|---|---|---|
| 1 | ժդ | իե | Բ |
| 2 | գ | իդ | Ա |
| 3 | | իգ | Է |
| 4 | ժա | իբ | Զ |
| 5 | ժթ | իա | Ե |
| 6 | | ի | Դ |
| 7 | ը | ժթ | Գ |
| 8 | | ժը | Բ |
| 9 | ժզ | ժէ | Ա |
| 10 | ե | ժզ | Է |
| 11 | | ժե | Զ |
| 12 | ժգ | ժդ | Ե |
| 13 | բ | ժգ | Դ |
| 14 | | ժբ | Գ |
| 15 | ժ | ժա | Բ |
| 16 | | ժ | Ա |
| 17 | ժը | թ | Է |
| 18 | է | ը | Զ |
| 19 | | է | Ե |
| 20 | ժե | զ | Դ |
| 21 | դ | ե | Գ |
| 22 | | դ | Բ |
| 23 | ժբ | գ | Ա |
| 24 | ա | բ | Է |
| 25 | | ա | Զ |
| 26 | թ | ւ | Ե |
| 27 | | իթ | Դ |
| 28 | ժէ | իը | Գ |
| 29 | զ | իէ | Բ |
| 30 | | իզ | Ա |

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

| Օր ամսոյ | Ոսկեթիւ | Ներաբեր | Կիւրակէագիր |
|---|---|---|---|
| 1 | ժդ | իե | Է |
| 2 | գ | իդ. իգ | Զ |
| 3 | ժա | իբ | Ե |
| 4 | ժթ | իա | Դ |
| 5 | | ի | Գ |
| 6 | ը | ժթ | Բ |
| 7 | | ժը | Ա |
| 8 | ժզ | ժէ | Է |
| 9 | ե | ժզ | Զ |
| 10 | | ժե | Ե |
| 11 | ժգ | ժդ | Դ |
| 12 | բ | ժգ | Գ |
| 13 | | ժբ | Բ |
| 14 | ժ | ժա | Ա |
| 15 | | ժ | Է |
| 16 | ժը | թ | Զ |
| 17 | է | ը | Ե |
| 18 | | է | Դ |
| 19 | ժե | զ | Գ |
| 20 | դ | ե | Բ |
| 21 | | դ | Ա |
| 22 | ժբ | գ | Է |
| 23 | ա | բ | Զ |
| 24 | | ա | Ե |
| 25 | թ | ւ | Դ |
| 26 | | իթ | Գ |
| 27 | ժէ | իը | Բ |
| 28 | զ | իէ | Ա |
| 29 | | իզ | Է |
| 30 | ժդ | իե | Զ |
| 31 | գ | իդ | Ե |

## ՆՈՅԵՄԲԵՐ

| Օր ամսոյ | Ոսկեգիր | Եպակտէր | Դօմինիքեան |
|---|---|---|---|
| 1 | | իգ | Դ |
| 2 | ժա | իբ | Գ |
| 3 | ժթ | իա | Բ |
| 4 | | ի | Ա |
| 5 | ը | ժթ | Է |
| 6 | | ժը | Զ |
| 7 | ժզ | ժէ | Ե |
| 8 | ե | ժզ | Դ |
| 9 | | ժե | Գ |
| 10 | ժգ | ժդ | Բ |
| 11 | բ | ժգ | Ա |
| 12 | | ժբ | Է |
| 13 | ժ | ժա | Զ |
| 14 | | ժ | Ե |
| 15 | ժը | թ | Դ |
| 16 | է | ը | Գ |
| 17 | | է | Բ |
| 18 | ժե | զ | Ա |
| 19 | դ | ե | Է |
| 20 | | դ | Զ |
| 21 | ժբ | գ | Ե |
| 22 | ա | բ | Դ |
| 23 | | ա | Գ |
| 24 | թ | լ | Բ |
| 25 | | իթ | Ա |
| 26 | ժէ | իը | Է |
| 27 | զ | իէ | Զ |
| 28 | | իզ | Ե |
| 29 | ժդ | իե | Դ |
| 30 | գ | իդ · իգ | Գ |

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

| Օր ամսոյ | Ոսկեգիր | Եպակտէր | Դօմինիքեան |
|---|---|---|---|
| 1 | ժա | իբ | Բ |
| 2 | ժթ | իա | Ա |
| 3 | | ի | Է |
| 4 | ը | ժթ | Զ |
| 5 | | ժը | Ե |
| 6 | ժզ | ժէ | Դ |
| 7 | ե | ժզ | Գ |
| 8 | | ժե | Բ |
| 9 | ժգ | ժդ | Ա |
| 10 | բ | ժգ | Է |
| 11 | | ժբ | Զ |
| 12 | ժ | ժա | Ե |
| 13 | | ժ | Դ |
| 14 | ժը | թ | Գ |
| 15 | է | ը | Բ |
| 16 | | է | Ա |
| 17 | ժե | զ | Է |
| 18 | դ | ե | Զ |
| 19 | | դ | Ե |
| 20 | ժբ | գ | Դ |
| 21 | ա | բ | Գ |
| 22 | | ա | Բ |
| 23 | թ | լ | Ա |
| 24 | | իթ | Է |
| 25 | ժէ | իը | Զ |
| 26 | զ | իէ | Ե |
| 27 | | իզ | Դ |
| 28 | ժդ | իե | Գ |
| 29 | գ | իդ | Բ |
| 30 | | իգ | Ա |
| 31 | ժա | իբ | Է |

## Գործածութիւն աղիւսակիս ։

ՃԻԳ. Յառաջին գաւազանի 'ի ձախմէ ցուցանին աւուրք ամսոց ։ Յերկրորդ գաւազանին դնին շրջանք Իննևտասներեկաց, կամ Ոսկեգրոցն, զորս տոմարագէտք յառաջ քան զգիտ վերադրաց կարգեցին հանդէպ աւուրց իւրաքանչիւր ամսոց՝ կայունս և անփոփոխս ըստ հին տումարին՝ այնու կարգօք, զի յառաջնում ամի յորում աւուր յունվարի դիպաւ ծնունդ լուսնի ըստ աստղաբաշխական հաշուի, յայնմ ամի հանդէպ նմին աւուր ամենայն եդին թիւ ա իննևտասներեկի կամ ոսկեգրոյն ։ Ապա թուեալ յայնմ օրէ մինչև ցլրումն տարւոյն՝ հանապազ 30 և 29 ըստ աւուրց ամսոց լուսնի տոմարական հաշուիւ, եդին դարձեալ թիւ ա հանդէպ իւրաքանչիւր աւուրց ամսոց, յորս միանգամ եղերէր փոփոխ թիւ 30 և 29. որով նշանակեալ ցուցանէին՝ թէ յառաջնում աւուր շրջանի ոսկեգրոյն, հանդէպ որոյ աւուր ամսոյն դնի ա, 'ի նմին աւուր լինի ծնունդ լուսնի ։

Զոր օրինակ՝ Ոսկեգիրն ա եդեալ կայ 'ի 1, և 'ի 31 յունվարի. 'ի 1, և 'ի 31 մարտի. 'ի 29 ապրիլի. 'ի 29 մայիսի. 'ի 27 յունիսի. 'ի 27 յուլիսի. 'ի 25 օգոստոսի. 'ի 24 սեպտ". 'ի 23 հոկտ". 'ի 22 նոյեմբ". և 'ի 21 դեկտեմբերի. որով ցուցանէին՝ թէ յաւուրսն յայնոսիկ դիպին ծնունդք լուսնի ։

ՃԻԴ. Նոյնպէս առնէին և յերկրորդում, և յերրորդումն և այլն. մինչև ցլրումն շրջանի 19 ամաց, դնելով հանդէպ իւրաքանչիւր աւուր ամսոց, յորս միանգամ եղերէր թիւն 30 և 29 զթուագիրս բ. գ. դ. և այլն. որպէս ցուցանի յաղիւսակի աստ ընդ Ոսկեգրով. որով և հեշտեաւ մարթ էր գտանել զծնունդս լուսնի հանապազ առանց հաշուի ։

ՃԻԵ. Յերրորդ գաւազանին կարգին շրջանք վերադրաց ըստ հին տումարին և ըստ հին գործածութեան նորա՝ այնու կարգաւ, զի հանդէպ իւրաքանչիւր Իննևտասներեկի կամ Ոսկեգրոյն դիցին որոշեալ վերադիր տարւոյն 'ի ցուցանել զծնունդ լուսնի. զոր օրինակ՝ հանդէպ ա ոսկեգրոյն եդաւ Է. զի որպէս ասացաւ՝ (ՃԺԵ) յառաջնում ամի շրջանի իննևտասներեկի, ըստ

սովորութիւն ազգի մերում սկսանի 'ի վերադրէս՝ Ե ։ Որ և սկսեալ 'ի յունվարէ մինչև 'ի լրումն տարւոյն գնի համդէպ ա ոսկեգրոյն՝ Ե ։ Իսկ յերկրորդ ամի յաւելեալ 11 աւուրս 'ի վերայ առաջին վերադրին՝ Ե ․ լինի վերադիրն ԺԶ ․ որ գայ համդէպ բ ոսկեգրոյն 'ի յունվարի 20 ․ 'ի փետրվարի 18, և այլն ․ մինչև 'ի վերջ տարւոյն 'ի դեկտ․ 9 ․ յոր աւարտի ։ Այնպէս յերրորդ ամի 11 աւուրս ևս յաւելեալ 'ի վերայ ԺԶ վերադրին ․ լինի վերադիրն ԻԷ համդէպ գ ոսկեգրոյն 'ի յունվարի 9 ․ 'ի փետրվարի 7 ․ և այլն, մինչև 'ի դեկտեմբերի 29 ․ յոր աւարտի ․ ըստ այսմ և այլք հետ զհետէ յաջորդեն ։

ՃԻԶ ․ Արդ՝ 'ի ձեռն կարգի Ոսկեգրոյն և Վերադրացս՝ որք միշտ գան համդէպ միմեանց, գտանելն ծնունդք լուսնի ։ Զի 'ի գտանելդ միանգամ զվերադիր այս ինչ տարւոյ ․ խնդրեա՛ զայն յաղիւսակի անդ 'ի մէջ խորանի վերադրաց այս ինչ ամսոյ, և համդէպ որոյ աւուր ամսոյն գտցի նոյն վերադիր տարւոյն, 'ի նմին աւուր է ծնունդ լուսնի ։ Զոր օրինակ՝ յամին 1818 ․ վերադիր տարւոյն է 4 ․ և ոսկեգիրն ԺԲ, ապա 'ի 30 յունվարի (ըստ հին գործածութեան տումարի,) լինի ծնունդ լուսնի ․ նոյնպէս 'ի 28 փետրվարի ․ և 'ի 30 մարտի ․ և այնպէս մինչև 'ի դեկտ․ 20 ․ յորում աւուր է և ծնունդ լուսնի ․

ՃԻԷ ․ Ասացի՝ (ըստ հին գործածութեան տումարի,) զի ըստ աղիւսակիս այս՝ որ կարգեալ է ըստ կանոնի եդելոյ 'ի Նիկիոյ ՙոք ժողովոյն, այժմ ո՛չ ուղիղ ցուցանի օր ծննդեան լուսնի, այլ չորս կամ հինգ աւուրբք խախտեալ ցուցանի ․ որպէս տեսցի 'ի ստորև 'ի խօսելն զտարբերութիւն հին և նոր տումարին ։ Բայց առ 'ի գտանել զծնունդ զատկական լուսնի, և զաւագ լրումն նորա, և զօր տօնի զատկին ըստ հնոյ տումարին, պա՛րտ է վարել աղիւսակաւս այսու ․ զի հաշիւ տօնելոյ զզատիկն արարեալ յառաջագոյն, մինչև ցայժմ հաստատուն և անփոփոխ կայ ըստ հաշուի իննևտասներեկաց և հին վերադրաց ։

ՃԻԸ ․ Իսկ 'ի չորրորդ գաւազանին կարգին տառք Եօթներեկաց, կամ Կիրակագրոց, որք ցուցանեն ըղպատկերս աւուրց եօթներորդաց կամ շաբաթուց ․ ըստ եղանակին՝ զոր բացատրեցաք 'ի վերոյ (ՀԷ) ։ Զի 'ի

գտանելն միանգամ զեօթներեակ տարւոյն, մատ յաղիւսակն 'ի մէջ խորանի եօթներեկաց ամսոյն՝ յորում որոնես. և ուր գտցի այն՝ համդէպ նորին եղեալ օրն ամսոյն՝ է կիւրակէ. և այնու կարես իմանալ զերկուշաբաթին և զայլ աւուրս, մինչև 'ի հետևեալ կիւրակէն. որում համդէպ ևս գոյ նոյն տառ եօթներեկաց տարւոյն: Որ օրինակ՝ յամին 1818. եօթներեակ տարւոյն է տառն Բ. զոր խնդրեալ 'ի խորանի եօթներեկաց 'ի յունվարի, գտանես համդէպ 6 աւուր նորին՝ եղեալ զտառն Բ, ուստի յայնմ ամի 'ի 6 յունվարի է կիրակէ. և յետ նորա 'ի 7 յունվարի Ա տառն է երկուշաբաթի. 'ի 8 յունվարի Է տառն երեքշաբաթի. ըստ այսմ և այլ աւուրք եօթնեկին մինչև 'ի Բ տառն դարձեալ 'ի 13 յունվարի է կիրակէ. այսու օրինակաւ յաջորդութբ մինչև ցաւարտ տարւոյն 'ի դեկտ" 29, գոյ կիւրակէ. որպէս ցուցանէ համդէպ նորին Բ տառն:

ձթ. Դարձեալ՝ յամին 1820, որ է նահանջ, կրկին են եօթներեակ տառք, այսինքն՝ Գ. Ե. գոլ 'ի յունվարի և 'ի փետրվարի կալ զԳ. որ ցուցանէ զկիւրակէն. իսկ յորժամ մտանես 'ի մարտ՝ կալ զԵ. որ ցուցցէ զկիւրակէն մինչև 'ի վերջն 'ի 26 դեկտեմբերի:

## Յաղագս վերադրաց, որ 'ի փոքր ժամագրքի մերում:

ղ. Դասաւորութի վերադրաց 30 թուանշանացն՝ որք դնին 'ի փոքր ժամագրքի մերում, է արդարև ըստ հին տոմարին. բայց կարգ նոցա համդէպ աւուրց ամսոյն՝ յառաջ շարժեալ է ըստ այժմու ուղղեալ կանոնի, առ 'ի ուղիղ ցուցանել զօր ծննդեան լուսնի ըստ նորոյ տոմարի: Ոլ 'ի նորոգութե գրիգորեան տոմարի տեսեալ թէ ծնունդ լուսնի չորս կամ հինգ աւուրբք յառաջեալ է քան զճշմարիտ տեղին, 'ի տոմարագիրս իւրեանց ուղղեցին զայն 'ի ձեռն վերադրաց. վասն զի յաւուրն՝ յորում ցուցանէր լինել ծնունդ լուսնի ըստ տոմարական հաշուի, չորրորդ օր էր ըստ աստղաբաշխական հաշուի. զոր և աչօք իսկ նշմարէին: Յայն սակս և ազգ մեր փոփոխեաց զկարգ առաջին վերադրացն, յառաջ շարժելով 'ի վեր՝ աւուրս չորս կամ հինգ. որպէս զի յայսմ մասին վերադիրք 'ի տո-

մարագիրս մեր անսխալ ցուցցեն զծնունդս լուսնի ։ Բայց որպէս ասացաք․ առ 'ի գտանել զծնունդ զատկական լուսնի, և զաւագ լուսին, պարտ է վարիլ առ այժմ հին վերադրովք ։

Յառաջի դիցուք աստ զաղիւսակ մի վեց ամսոց՝ համեմատութ՟ հին և նոր վերադրաց, որ բաւական լիցի 'ի ցուցանել զտարբերութի աւուրց յառաջնութե 'ի ցոյց ծննդեան լուսնի ։

Ծն՟ա․ Ահա 'ի դասաւորութենէ կարգի հին և նոր վերադրաց համդէպ աւուրց ամսոց, յայտնի երևի տարբերութի նոցա 'ի միմեանց․ զի նոր վերադիրն չորս աւուրբք կանխէ քան զհին վերադիրն՝ յառաջեալ դէպ 'ի վեր 'ի սկիզբն ամսոյն ։ Օրինակ՝ յամին 1820, վերադիր տարւոյն է ԺԵ․ որ ըստ հնոյ կարգին անկանի 'ի 8 յունվարի․ 'ի 6 փետրվարի․ 'ի 8 մարտի, և 'ի 6 ապրիլի․ 'ի ցուցանել զաւուրս ծննդեան լուսնի․ և սակայն ըստ նոր կարգի վերադրին ԺԵ, յառաջ շարժեալ է չորս աւուրբք 'ի վեր 'ի 4 յունվարի․ 'ի 3 փետրվարի․ 'ի 3 մարտի․ և 'ի 2 ապրիլի ։ Նոյնպէս յամին 1821․ վերադիր տարւոյն է ԻԶ․ որ ըստ հնոյ կարգին անկանի 'ի 27 յունվարի․ 'ի 25 փետրվարի․ 'ի 27 մարտի․ և 'ի 25 ապրիլի․ և սակայն ըստ նորոյ կարգին անկանի 'ի 23 յունվարի․ 'ի 22 փետրվարի․ 'ի 22 մարտի․ և 'ի 21 ապրիլի ։ Տեսէք՝ զի նոր վերադիրն հինգ աւուրբք ևս 'ի վեր յառաջ շարժեալ է․ որպէս երևի յամսեանն մարտի ։

Ծն՟բ․ Նոր վերադիրք կարգեալք 'ի տօմարագիրս, արդարև ցուցանեն զօր ծննդեան լուսնի ըստ տումարական հաշուի, սակայն ոչ ճիշտ ըստ աստղաբաշխական հաշուի․ զի ըստ աստղաբաշխական հաշուի ժամք և րոպէք ևս մնանեն 'ի հաշիւ․ որով գրեթէ միշտ 'ի նախընթաց օրն ձգի օր ծննդեան լուսնի, քան թէ վերադրովն՝ որ դնի 'ի տումարագիրս․ որպէս տեսանի յօրացուցի մերում, յորում նշանակին ժամք և րոպէք ըստ աստղաբաշխական հաշուի ։

ՃԿԷ.

| ՅՈՒՆՎԱՐ | | | ՓԵՏՐՎԱՐ | | | ՄԱՐՏ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Օր ամսոյ | Լուսին հին տոմարի համեմատ | Լուսին նոր տոմարի համեմատ | Օր ամսոյ | Լուսին հին տոմարի համեմատ | Լուսին նոր տոմարի համեմատ | Օր ամսոյ | Լուսին հին տոմարի համեմատ | Լուսին նոր տոմարի համեմատ |
| 1 | բ | իը | 1 | ա | իէ | 1 | բ | իէ · իը |
| 2 | ա | իէ | 2 | լ · իթ | իզ | 2 | ա | իզ |
| 3 | լ | իզ | 3 | իը | իե | 3 | լ | իե |
| 4 | իթ | իե | 4 | իէ | իդ | 4 | իթ | իդ |
| 5 | իը | իդ | 5 | իզ | իգ | 5 | իը | իգ |
| 6 | իէ | իգ | 6 | իե | իբ | 6 | իէ | իբ |
| 7 | իզ | իբ | 7 | իդ | իա | 7 | իզ | իա |
| 8 | իե | իա | 8 | իգ | ի | 8 | իե | ի |
| 9 | իդ | ի | 9 | իբ | ժթ | 9 | իդ | ժթ |
| 10 | իգ | ժթ | 10 | իա | ժը | 10 | իգ | ժը |
| 11 | իբ | ժը | 11 | ի | ժէ | 11 | իբ | ժէ |
| 12 | իա | ժէ | 12 | ժթ | ժզ | 12 | իա | ժզ |
| 13 | ի | ժզ | 13 | ժը | ժե | 13 | ի | ժե |
| 14 | ժթ | ժե | 14 | ժէ | ժդ | 14 | ժթ | ժդ |
| 15 | ժը | ժդ | 15 | ժզ | ժգ | 15 | ժը | ժգ |
| 16 | ժէ | ժգ | 16 | ժե | ժբ | 16 | ժէ | ժբ |
| 17 | ժզ | ժբ | 17 | ժդ | ժա | 17 | ժզ | ժա |
| 18 | ժե | ժա | 18 | ժգ | ժ | 18 | ժե | ժ |
| 19 | ժդ | ժ | 19 | ժբ | թ | 19 | ժդ | թ |
| 20 | ժգ | թ | 20 | ժա | ը | 20 | ժգ | ը |
| 21 | ժբ | ը | 21 | ժ | է | 21 | ժբ | է |
| 22 | ժա | է | 22 | թ | զ | 22 | ժա | զ |
| 23 | ժ | զ | 23 | ը | ե | 23 | ժ | ե |
| 24 | թ | ե | 24 | է | դ | 24 | թ | դ |
| 25 | ը | դ | 25 | զ | գ | 25 | ը | գ |
| 26 | է | գ | 26 | ե | բ | 26 | է | բ |
Մ. Դարձեալ միւս ևս օրինակ : Եթէ յամի տն 1818. կամիս գիտել՝ թէ ՚ի հոկտեմբերի 15, քանի՛ են աւուրք լուսնի. գիտ նախ զվերադիր տարւոյն, (ՃՂԷ) որ է գ. այսինքն՝ 3. յաւել յայն զթիւս 9 վասն ամսոց անցելոց, այլ և զթիւն 15 հոկտեմբերի ամսոյն. որով գումարն լինի 27. և զի այս ոչ ժամանէ ՚ի 30 թիւն. առանց ինչ բարձման՝ 27 են աւուրք լուսնի յայսմ ամի ՚ի հոկտեմբերի 15 :

ՄԱ. Յայսմ վայրի գիտել արժան է. զի աստէն ՚ի գիւտ ծննդեան լուսնի, այլ և լրմանն և աւուրց լուսնի հաշուելն ըստ ուղղեալ նոր կարգի վերադրաց (ՃՂԸ), (որպէս և ՚ի փոքր ժամագրքի մերում դնի.) առ ՚ի ուղիղ ցուցանել զաւուրս ծննդեան, լրման, և աւուրց լուսնի. ապա թէ ոչ՝ ըստ հին կարգի վերադրաց հաշուելով, չորս կամ հինգ աւուրբք խախտեալ ցուցանէին աւուրք լուսնի. և սխալին հաշիւք :

### Զպատկեր աւուր յայտնութեան, այսպէս գտցես:

ՃԲ. Յորժամ գիր տարւոյն է Ա. պատկեր աւուր յայտնութեան է միշտ երեքշաբաթի. ուստի յառաջին եօթնեակ տարեգրիս, թուեա՛ յետադարձ հաշուօք սկսեալ յերեքշաբաթէ, ըստ այսմ օրինակի. երեքշաբաթի. երկուշաբաթի. կիրակէ, շաբաթ, և այլն: Իսկ յորժամ գիր տարւոյն աւելի լինի քան զեօթնեակ թիւս, 'ի բաց հան զեօթնեակ թիւս քանի՛ և գտցի անդ. և որ ինչ մնայ 'ի խոնարհ, սկսեալ նոյնպէս յերեքշաբաթէ յետադարձ հաշուօք թուեա՛ այսպէս. երեքշաբաթի, երկուշաբաթի, կիրակէ, և այլն:

Զոր օրինակ, յամի տն 1818. գիր տարւոյն է Ո. որ է քսաներորդ չորրորդն (ճծթ). յորմէ 'ի բաց հանեալ զերիս եօթնեակս, այսինքն՝ 21. մնայ 'ի խոնարհ 3. ուստի յետադարձ հաշուօք թուեա՛, երեքշաբաթի, երկուշաբաթի, և կիրակէ. ապա յամի տն 1818, Ո գիր տարւոյն ցուցանէ զպատկեր աւուր յայտնութեան լինել 'ի կիւրակէի:

### Միջոց ուտից օր յայտնութեան:

ՃԳ. Առ զգիր տարւոյն, և յաւել 'ի նա զհինգ թիւս, և տես թէ որքան լինին թիւք՝ այնքան աւուրք են միջոց ուտիք յայտնութեան: Զոր օրինակ. յամի տն 1819. գիր տարւոյն է Հ. որ է վեշտասաներորդն. յաւել 'ի սա զհինգ թիւս. լինի 21. ահա այսքան է միջոց յուտիսն յայտնութեան:

### Զառաջաւորաց բարեկենդանն՝ այսպէս գտցես:

ՃԴ. Առ զտասն յունվարի. յաւել 'ի նա և զթիւ տարեգրոյն. է առաջաւորաց բարեկենդան: Զոր օրինակ. եթէ գիր տարւոյն է Զ. թիւ նորին է վեց. արդ՝ եթէ զվեցն յաւելումք 'ի վերայ տասին յունվարի, լինի ԺԶ. ապա իմանամք՝ թէ յամին յորում գիր տարւոյն է Զ. 'ի ԺԶ յունվարի հանդիպի առաջաւորաց բարեկենդանն:

### Բուն Բարեկենդան՝ այսպէս արա։

մե. Յորժամ գիր տարւոյն է առաջինն, այսինքն՝ Ա. բուն բարեկենդանն գայ 'ի 1. փետրվարի։ Իսկ 'ի լինել գրոյ տարւոյն Ժ. որ է տասներորդն 'ի Թիւս տարեգրաց, իմանամք՝ թէ 'ի 10 փետրվարի է բուն բարեկենդան. սոյնպէս իմա և յայլ Թիւս տարեգրաց։ Իսկ եթէ աւելի լինիցի Թիւ տարեգրոյն քան զաւուրս փետրվարի, անցցէ 'ի յաջորդ ամիսն, որ է մարտ։

### Զատիկ։

մզ. Յաւել զմարտի ԻԱ. և զգիր տարւոյն 'ի վերայ բեր, զատիկ է։ Օրինակ. յամի Տն 1819. գիր տարւոյն է Հ. որ է վեշտասաներորդն. զայս յետ ԻԱ մարտի հաշուեալ, գայ զատիկն յապրիլի Զ։

### Երևման խաչ։

մէ. Յաւել զապրիլի ԺԸ. և զգիր տարւոյն յաւել 'ի վերայ, երևման խաչ է։ Օրինակ, յամի Տն 1818 գիր տարւոյն է Ո. որ է քսաներորդ չորրորդն. զայս յետ ԺԸ ապրիլի հաշուեալ, երևման խաչն գայ 'ի մայիսի ԺԲ։

### Համբարձումն։

մը. Յաւել զապրիլի ԻԹ. և զգիր տարւոյն յաւել 'ի վերայ՝ համբարձումն է։ Օրինակ. յամի Տն 1819 գիր տարւոյն է Հ. որ է վեշտասաներորդն. զայս յետ ԻԹ ապրիլի հաշուեալ, համբարձումն գայ 'ի մայիսի ԺԵ։

### Հոգեգալուստ։

մթ. Յաւել զմայիսի Թ. և զգիր տարւոյն յաւել 'ի վերայ, հոգեգալուստ է։ Օրինակ. յամի Տն 1821. գիր տարւոյն է Մ. որ է քսաներորդն. զայս յետ Թ մայիսի Թուեալ, հոգեգալուստն գայ 'ի ԻԹ մայիսի։

## Սէ Գրիգորի Բարեկենդան ։

ճժ. Կա՛լ զմայիսի Ը. և զգիր տարւոյն 'ի վերայ բե՛ր, որ Գրիգորի բարեկենդան է ։ Կա՛լ քեզ օրինակ. յամի տն 1822 գիր տարւոյն է Լ. որ է երկոտասաներորդն. զայս աճեալ 'ի վերայ Ը մայիսի. որ Գրիգորի բարեկենդանն գայ 'ի ժա յունիսի ։

## Վարդաւառ ։

ճժա. Կա՛լ զյունիսի իէ. և զգիր տարւոյն 'ի վերայ բե՛ր, Վարդաւառ է ։ Զո՛ր օրինակ. յամի տն 1819. գիր տարւոյն է Հ. որ է վեշտասաներորդն. զայս ա՛ճ 'ի վերայ իէ յունիսի. վարդաւառն գայ 'ի ժգ յուլիսի ։

## Զմիջոյ շաբաթս Վարդաւառի և Ածածնի՝ այսպէս գէտ ։

ճժբ. Եթէ գիր տարւոյն իցէ Ա. կամ Բ. և կամ Գ. միջոյն Է շաբաթ է ։
'ի Դայէն մինչև 'ի Ժէն, Զ. շաբաթ ։
Իսկ յԻնիէն մինչև 'ի Ձան, Ե. շաբաթ ։
'ի Ղատէն մինչև 'ի Ոն, է Դ. շաբաթ ։
'ի Չայէն մինչև 'ի Տիւնն, է Գ. շաբաթ ։
Իսկ 'ի Րէէն մինչև 'ի Փիւրն, է Բ. շաբաթ ։
Սոքա ամենեքեան իմացեալ լինին պահօքն հանդերձ ։

## Վերափոխման Ածածնի ։

ճժգ. Կա՛լ զգիր տարւոյն. չորս 'ի վերայ ա՛ճ. և ապա երթ, է. է. և զայն՝ որ 'ի խոնարհ մնայ՝ ա՛ճ 'ի վերայ ժա օգոստոսի. և ո՛ւր հասանէ, 'ի նոյն աւուրն օգոստոսի՝ է Ածածնին ։

Պատճառ կանոնիս է. զի կիւրակէն Ածածնի կախեալ է յամսոյն օգոստոսի, և ունի իւր կոպար զժբ, և զժը օգոստոսի փաղառութբ. յորս փակին աւուրք է, և յորս միայն կարէ հանդիպիլ. վասն այնորիկ դնի, թէ յաւե՛լ 'ի վերայ ժա օգոստոսի ։

Զոր օրինակ. յամի տն 1825 գիր տարւոյն է Ը. որ է ութերորդն. յաւել 'ի նա և զթիւն չորս, որով լինի ԺԲ: Արդ 'ի բաց հանեալ անտի զեօթնեակ թիւն, մնայ 5. զոր թուեալ յետ ԺԱ օգոստոսի, գայ Ածածինն 'ի ԺԶ օգոստոսի:

Ապա եթէ ոչ գտցի եօթնեակ թիւ 'ի բաց հանելոյ, որպէս լինի յառաջին երկու տարեգիրս. այսինքն՝ Ա. և Բ. յորս յաւելեալ և զչորս թիւս, առաջինն լինի 5, և երկրորդն 6. ուստի ըստ կանոնին հաշուեալ յետ ԺԱ օգոստոսի, առաջինն այսինքն՝ Ա գիր տարւոյն, անկանի 'ի ԺԶ օգոստոսի. և երկրորդն, այս է՝ Բ. անկանի 'ի ԺԷ նորին, յորս կատարի տօն վերափոխման տր ածածնի:

Զմիջոց շաբաթու ամանակին, և ամէյ խաչին՝ այսպէս գտս:

ՃԺԴ. Առ զգիր տարւոյն. և երթ Է. Է. և տես՝ եթէ յաւելեալն իցէ չորս կամ հինգ. միջոցն հանդերձ պահօքն Ե շաբաթ է. իսկ եթէ այլ թիւ իցէ, Դ շաբաթ է:

Զոր օրինակ. յամի տն 1822. գիր տարւոյն է Լ. որ է երկոտասաներորդ (ԺԲ). յորմէ 'ի բաց հանեալ զեօթնեակ մի, յաւելանայ հինգ. ապա միջոց հանդերձ պահօքն Ե շաբաթ է: Իսկ յորժամ գիր տարւոյն լինի Մ. որ է քսաներորդն, 'ի բաց հանեալ զեօթնեակն՝ յաւելանայ վեց. ուստի միջոց հանդերձ պահօքն Դ շաբաթ է. (զի է այլ թիւ՝ բաց 'ի չորից կամ 'ի հնգից թուոց յաւելլոյ.) ըստ այսմ իմա և զայլսն:

ՃԺԵ. Իսկ եթէ ոչ գտցի եօթնեակ թիւ 'ի բաց հանելոյ, որպէս դիպի յառաջին վեց տարեգիրս. յայնժամ Դ. և Ե տարեգիրք, այսինքն՝ չորրորդն և հինգերորդն, ունին միջոցս հանդերձ պահօք Ե շաբաթ: Իսկ մնացեալքն, այսինքն՝ Ա. Բ. Գ. և Զ. ունին միջոցս հանդերձ պահօք Դ շաբաթ:

Ապա եթէ զեօթնեակ թիւսն 'ի բաց հանեալ՝ ոչ յաւելցի ինչ, նոյն եօթնեակ թիւն ցուցանէ ունել միջոցս հանդերձ պահօք Դ շաբաթ:

## ՍԷ Խաչ։

ճժզ. Առ զգիր տարւոյն. երկու 'ի վերայ ած. և ապա երթ Է. Է. և զայն՝ որ 'ի խոնարհ մնայ, յաւել 'ի վերայ տասին սեպտեմբերի. և ո՛ւր հասանէ, 'ի նմին աւուրն սեպտեմբերի՝ է տօն Խաչի։

Պատճառ կանոնիս է, զի կիւրակէն խաչին կախեալ է յամսոյն սեպտեմբերի, և ունի իւր կապար զժա և զժէ սեպտեմբերի փաղառութք. յորս փակին աւուրք է. և յորս միայն կարէ պատահիլ. վասն այնորիկ ասի՝ թէ յաւել 'ի վերայ տասին սեպտեմբերի։

Առ քեզ օրինակ. յամի տն 1819. գիր տարւոյն է Հ. որ է վեշտասաներորդն (ձծթ). յաւել 'ի նա և զթիւն երկու, լինի ժը։ Արդ՝ 'ի բաց հանեալ անտի զեօթնեակ թիւսն, մնայ դ. զոր յաւելեալ 'ի վերայ ժ սեպտեմբերի, գայ տօն Խաչին 'ի ժդ սեպտեմբերի։

Յորժամ գիր տարւոյն դիպի Ա. որ է առաջինն, յաւել 'ի նա և զթիւն երկու, որով լինի գ. զոր թուեալ յետ ժ սեպտեմբերի, գայ տօն Խաչին 'ի ժգ սեպտեմբերի. թէպէտ և չիցէ անդ եօթնեակ 'ի բաց հանելոյ. սոյնպէս են և յաջորդ նորին առաջին տարեգիրք։

## ՍԷ Գէորգայ բարեկենդան։

ճժէ. Առ զգիր տարւոյն, երկու 'ի վերայ ած. և ապա երթ Է. Է. և զայն՝ որ 'ի խոնարհ մնայ, յաւել 'ի վերայ ժէ սեպտեմբերի, և ո՛ւր հասանէ, 'ի նմին աւուրն սեպտեմբերի է տօն Գէորգայ բարեկենդան։

Օրինակ, յամի տն 1819. գիր տարւոյն է Հ. որ է վեշտասաներորդն. յաւել 'ի նա և զթիւն երկու, որով լինի ժը։ Արդ՝ 'ի բաց հանեալ անտի զեօթնեակ թիւսն, մնայ դ. զոր յաւելեալ 'ի վերայ ժէ սեպտեմբերի, գայ տօն Գէորգայ բարեկենդանն 'ի իա սեպտեմբերի։

## Զմիջոց աւուրն ՍԷ Գէորգայ և յիսնակաց բարեկենդանին, այսպէս գտցես։

ճժը. Առ զգիր տարւոյն, և երթ Է. Է. և տես՝ եթէ յաւելեալն վեց է, կամ եօթն, միջոց աւուրքն է

Ը̃ շաբաթ ։ Իսկ եթէ այլ թիւ իցէ, յայնժամ է Է̃ շաբաթ ։

Զոր օրինակ․ յորժամ գիր տարւոյն է Խ․ որ է երեքտասաներորդն, 'ի բաց հանեալ զեօթնեակ թիւն․ յաւելմանց 6․ ապա միջոց ուտիք սբ̃ Գէորգայ և յիսնակաց բարեկենդանին, է Ը̃ շաբաթ ։ Իսկ յորժամ գիր տարւոյն է Ի․ որ է մետասաներորդն․ 'ի բաց հանեալ զեօթնեակ թիւն՝ յաւելմանց 4․ ապա միջոց ուտիք սբ̃ Գէորգայ, և այլն․ Է̃ շաբաթ է ։

## Խաչ գիւտ ։

մթ̃․ Առ զգիր տարւոյն․ յաւել 'ի նա և երկու․ և երթ Է․ Է․ և որ ինչ 'ի խոնարհ մնայ, ած 'ի վերայ ժը̃ հոկտեմբերի․ և ուր հասանէ 'ի նմին աւուր հոկտեմբերի՝ է գիւտ խաչ ։

Զոր օրինակ․ յամի տն̃ 1819 գիր տարւոյն է Հ․ որ է վեշտասաներորդն․ յաւել 'ի նա և զթիւն երկու, որով լինի ժը̃․ Արդ՝ 'ի բաց հանեալ անտի զեօթնեակ թիւսն, մնայ Դ̃․ զոր յաւելեալ 'ի վերայ ժը̃ հոկտեմբերի, գիւտ խաչն գայ 'ի իբ̃ հոկտեմբերի ։

## Յիսնակաց բարեկենդան ։

մժ̃․ Առ զգիր տարւոյն․ և երթ Է․ Է․ և որ ինչ 'ի խոնարհ մնայ, ած զայն 'ի վերայ ժդ̃ նոյեմբերի․ և ուր հասանէ, 'ի նմին աւուր նոյեմբերի՝ է Յիսնակաց բարեկենդան ։

Զոր օրինակ․ յամի տն̃ 1822 գիր տարւոյն է Լ․ որ է երկոտասաներորդն (ձծթ̃)․ յորմէ 'ի բաց հանեալ զեօթնեակ թիւն, մնայ Ե․ զայս յաւելեալ 'ի վերայ ժդ̃ նոյեմբերի, Յիսնակաց բարեկենդանն գայ 'ի նոյեմբերի ժթ̃ ։

## ՄԷ Յակոբայ բարեկենդան ։

մժա̃․ Առ զգիր տարւոյն․ և երթ Է․ Է․ և զայն՝ որ 'ի խոնարհ մնայ, յաւել 'ի վերայ Ե դեկտեմբերի․ և ուր հասանէ, 'ի նմին աւուր դեկտեմբերի՝ է սբ̃ Յակոբայ բարեկենդան ։

Ո՛ր օրինակ․ եթէ գիր տարւոյն իցէ Բ․ որ է երեսներորդ երկրորդ , 'ի բաց հանեալ զեօթնեակ թիւսն , մնայ Դ․ զայս յաւելեալ 'ի վերայ Է դեկտեմբերի , որ Յակոբայ բարեկենդանն գայ 'ի դեկտեմբերի ԺԱ ։

Միւս․ Յորժամ գիր տարւոյն է Ա․ առանց յաւելլոյ այն թիւս ինչ , ամ 'ի վերայ Է դեկտեմբերի` Ա․ յայնժամ գայ որ Յակոբայ բարեկենդանն 'ի դեկտեմբերի Է․ ըստ այսմ ձևի և զհետևեալ առաջին տարեգիրս Բ․ Գ․ Դ․ և այլն , մինչ 'ի տառն Է․ յաւելլով 'ի վերայ Է դեկտեմբերի ։ Այնպէս արա առ 'ի գտանել և ըզնախընթաց յիշնակաց բարեկենդանն ։

### Զմիջոց աւուրն որ Յակոբայ , և յայտնութեան բարեկենդանին , այսպէս գտ ։

Միւս․ Առ զգիր տարւոյն․ և երթ Է․ Է․ և զայն` որ 'ի խոնարհ մնայ , յետադարձ հաշուօք թուեա՛ , ըսկսեալ 'ի ԺԸ թուոյն` ասելով․ ԺԸ․ ԺԷ․ ԺԶ, և այլն․ և ուր դադարի թիւն , այնչափ է միջոց ուտիք օրն որ Յակոբայ , և յայտնութեան բարեկենդանին ։

Ո՛ր օրինակ․ յամի Տեառն 1819․ գիր տարւոյն է Հ․ որ է վեշտասաներորդն․ 'ի բաց հանեալ անտի զեօթնեակ թիւսն , մնայ Բ․ զայս յետադարձ հաշուօք թուեա՛ ասելով․ ԺԸ․ ԺԷ․ ապա միջոց ուտիք օրն որ յակոբայ , և յայտնութեան բարեկենդանին` է ԺԷ օր ։

Յորժամ գիր տարւոյն է Ա․ որ է առաջինն․ անդ-սկսանի ԺԸ օրն , առանց յետադարձ հաշիւս առնելոյ ։

### Օր բարեկենդանի յայտնութեան ։

Միւս․ Առ զգիր տարւոյն , և երթ Է․ Է․ և որ ինչ թիւ 'ի խոնարհ մնայ , յետադարձ հաշուօք թուեա՛ սկսեալ յերեքշաբաթէ ասելով , երեքշաբաթի․ երկուշաբաթի․ կիրակի․ և այլն ։ Եւ յորում աւուր դադարի այն թիւ , 'ի նմին աւուր հանդիպի Յայտնութեան բարեկենդանն ։

Ո՛ր օրինակ․ եթէ գիր տարւոյն լինիցի Ժ․ որ է տասներորդն․ 'ի բաց հան զեօթնեակ թիւսն․ և մնայ Գ․ զայս յետադարձ հաշուօք թուեա՛ սկսեալ յերեք-

շաբաթիէն, ասելով․ երեքշաբաթի, երկուշաբաթի, կիրակի։ Նոյն օր բարեկենդանի յայտնութեան գայ 'ի կիրակէի։

### Յաղագս շաբաթապահոց։

մին․ Նախ՝ սկսեալ 'ի յերեսներորդ օրէ դեկտեմբերի մինչև 'ի յունվարի 5․ է պահք ծնդայայտնութե․ յորում ոչ կատարին տօնք, բայց 'ի տօնէ սբյն բարսղի։

Երկրորդ․ Յորէ երկուշաբաթի զկնի կիւրակէի առաջաւորաց բարեկենդանին, է պահք առաջաւորաց մինչև ցուրբաթ․ յորում աւուր է յիշատակ յովնանու մարգարէին։

'Ի քառասնորդական պահսն կատարին տօնք միայն յաւուրս շաբաթուց։

Երրորդ․ Յորէ երկուշաբաթի զկնի կիւրակէի հոգեգալստեան, է պահք Եղիական մինչև ցուրբաթ․ յորում կատարին ութօրէք հոգեգալստեան։

Չորրորդ․ 'Ի չորրորդում եօթնեկի զկնի հոգեգալստեան, է պահք սբյն Գրիգորի լուսաւորչին․ յորում կատարին և տօնք։

Հինգերորդ․ Յեօթներորդում եօթնեկի զկնի հոգեգալստեան, է պահք վարդավառին․ յորում ոչ կատարին տօնք։

Վեցերորդ․ Յեօթնեակն նախընթաց քան զվերափոխումն, է պահք վերափոխման սբ Ածածնի․ յորում ոչ կատարին տօնք։

Եօթներորդ․ Յեօթնեակն նախընթաց վերացման խաչին, է պահք սբյ Խաչին․ յորում տօնք ոչ կատարին։

Ութերորդ․ Յերկրորդում եօթնեկի զկնի վերացման խաչին, է պահք վարագայ խաչին․ յոր կատարին և տօնք։

Իններորդ․ Յորէ երկուշաբաթի զկնի առաջին կիւրակէի յիսնակաց, է պահք յիսնակաց մինչև ցուրբաթ․ յորում տօնք ոչ գոն։

Տասներորդ․ Յորէ երկուշաբաթի զկնի չորրորդ կիւրակէի յիսնակաց անմիջապէս, է պահք սբյն Յակոբայ․ յորում կատարին և տօնք։

մին․ Օ տօն Բարսղի Հայրապետին և որոց ընդ նմա , գնել պարտ է միշտ յաւուրն շաբաթու՝ որ 'ի պահսն Յայտնութեան ։ Այլ եթէ ոչ դիպեսցի 'ի պահսն անդ որ շաբաթու արձակ , փոխադրել պարտ է յառաջ․ և գնել յաւուրն շաբաթու յառաջ քան զպահսն Յայտնութեան․ յորում գնի տօն Ինդոսի և Դոմնայի , և այլն ։ Իսկ զտօն Ինդոսի և Դոմնայի , և որոց ընդ նոսա , պարտ է գնել յաւուրն հինգշաբաթի 'ի միասին ընդ Ադդէի հայրապետին , և ընդ Աբգարու թագաւորին ։

## Աշխատանք պարզատօմարական ։

մին․ Առ 'ի գտանել զտօն զատկի , և զայլ ամենայն շարժական տօնս , զորս մինչև ցայս վայր եդաք , աստէն կարգեմք զաղիւսակ իմն մշտնջենաւոր , որ յերկուս զոյգ երեսս թղթոց պարունակի ։

Յառաջին գաւազանն 'ի ձախմէ նշանակին գլխագրովք տարեգիրքն ըստ կարգի այբուբենից․ յորս գտեալ միանգամ զԳիր տարւոյն , մուտ 'ի յառաջին տուփն․ որ է հանդէպ նոյն Գրոյ տարւոյն․ և գտանես զպատկեր աւուր յայտնութեան , ըստ որում 'ի վերոյ 'ի գլուխ տփոյն նշանակեալ կայ Օր յայտնութեան ։

Մտեալ 'ի յերկրորդ տուփն հանդէպ նոյն տարեգրոյն՝ իմանաս զմիջոց ուտիսն ։ Մտեալ 'ի յերրորդն՝ գտանես զԱռաջաւոր բարեկենդանն ըստ աւուր ամսոյն․ անուն ամսոյն եդեալ կայ 'ի վերայ նոյն տփոյն ընդ առաջաւորաւ ։

Այսպէս և զայլսն՝ մինչև 'ի Յայտնութեան բարեկենդանն , որք կարգաւ գրեալ կան յերկուս երեսս ։ յԱ էն մինչև 'ի Ղ , գտցես յառաջին երկու երեսս․ իսկ 'ի Ճէ մինչև 'ի Ք , գտցես 'ի վերջին երկու երեսս ։

| Մին. Գիր տարւոյ ։ | Օր յայտնութեան ։ | [illegible] | Առաջաւորաց բարեկենդան ։ | Բուն բարեկենդանին ։ | ԶԱՏԿԻ | [illegible] | Համբարձումն ։ | Հոգեգալուստ ։ | Ս. Գրիգորի բարեկենդան ։ | Վարդավառ ։ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յուն | փետր | մար | ապր | ապր | մայի | մայի | յունի |
| Ա | գշբ | զ | ժա | ա | իբ | ժթ | լ | ժ | լա | իը |
| Բ | բշբ | է | ժբ | բ | իգ | ի | մայիս ա | ժա | յունիս ա | իթ |
| Գ | կիր | ը | ժգ | գ | իդ | իա | բ | ժբ | բ | լ |
| Դ | շբթ | թ | ժդ | դ | իե | իբ | գ | ժգ | գ | յուլիս ա |
| Ե | ուր | ժ | ժե | ե | իզ | իգ | դ | ժդ | դ | բ |
| Զ | եշբ | ժա | ժզ | զ | իէ | իդ | ե | ժե | ե | գ |
| Է | դշբ | ժբ | ժէ | է | իը | իե | զ | ժզ | զ | դ |
| Ը | գշբ | ժգ | ժը | ը | իթ | իզ | է | ժէ | է | ե |
| Թ | բշբ | ժդ | ժթ | թ | լ | իէ | ը | ժը | ը | զ |
| Ժ | կիր | ժե | ի | ժ | լա | իը | թ | ժթ | թ | է |
| Ի | շբթ | ժզ | իա | ժա | ապրի ա | իթ | ժ | ի | ժ | ը |
| Լ | ուր | ժէ | իբ | ժբ | բ | լ | ժա | իա | ժա | թ |
| Խ | եշբ | ժը | իգ | ժգ | գ | մայիս ա | ժբ | իբ | ժբ | ժ |
| Ծ | դշբ | ժթ | իդ | ժդ | դ | բ | ժգ | իգ | ժգ | ժա |
| Կ | գշբ | ի | իե | ժե | ե | գ | ժդ | իդ | ժդ | ժբ |
| Հ | բշբ | իա | իզ | ժզ | զ | դ | ժե | իե | ժե | ժգ |
| Ձ | կիր | իբ | իէ | ժէ | է | ե | ժզ | իզ | ժզ | ժդ |
| Ղ | շբթ | իգ | իը | ժը | ը | զ | ժէ | իէ | ժէ | ժե |

| Միջոց շաբթու պահոց : | Ի՛ ծածկեն : | Միջոց շաբթու պահոց : | Մէ խաղ : | Մէ Գէորգեայ բարեկ : | Միջոց ստուէք շաբթու : | Գէստ խաղ : | Ցեանակայց բարէկ : | Մէ Յանուբայ բարէ" : | Միջոց ստուէք, օր : | Որ բարէկենդան յայտ" : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օփոռ | | ոէպ | ոէպ | | հոճէա | նոյե | փէէ | | |
| է | ժգ | դ | ժդ | ի | է | իե | ժե | գ | ժը | գշբ |
| է | ժէ | դ | ժդ | իա | է | իգ | ժգ | է | ժէ | բշբ |
| է | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժգ | կիր |
| գ | ժբ | ե | ժգ | իդ | է | իը | ժը | թ | ժե | շբթ |
| գ | ժդ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | ուր |
| գ | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժդ | եշբ |
| գ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | դշբ |
| գ | ժգ | դ | ժդ | ի | է | իե | ժե | գ | ժը | գշբ |
| գ | ժէ | դ | ժդ | իա | է | իգ | ժգ | է | ժէ | բշբ |
| գ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժգ | կիր |
| ե | ժբ | ե | ժգ | իդ | է | իը | ժը | թ | ժե | շբթ |
| ե | ժդ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | ուր |
| ե | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժդ | եշբ |
| ե | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | դշբ |
| ե | ժգ | դ | ժդ | ի | է | իե | ժե | գ | ժը | գշբ |
| ե | ժէ | դ | ժդ | իա | է | իգ | ժգ | է | ժէ | բշբ |
| ե | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժգ | կիր |
| դ | ժբ | ե | ժգ | իդ | է | իը | ժը | թ | ժե | շբթ |

| Գիր տարւոյ ։ | Օր յայտնութեան ։ | Մէջոց ուտից · օր ։ | Առաջաւորաց [illegible] ։ | Բուն բարեկենդանին ։ | ԶԱՏԻԿ | Երեւման Խաչ ։ | Համբարձման ։ | Հոգեգալստեան ։ | ՍԲ Գրիգորի [illegible] ։ | Վարդավառի ։ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յունվ | փետր | ապր | մայիս | մայիս | մայիս | յունիս | յուլիս |
| Ծ | ուր | իդ | իթ | ժթ | թ | է | ժը | իը | ժը | ժզ |
| Մ | Եշբ | իե | լ | ի | ժ | ը | ժթ | իթ | ժթ | ժէ |
| Յ | Դշբ | իզ | լա | իա | ժա | թ | ի | լ | ի | ժը |
| Ն | Գշբ | իէ | փետր ա | իբ | ժբ | ժ | իա | լա | իա | ժթ |
| Շ | Բշբ | իը | բ | իգ | ժգ | ժա | իբ | յունիս ա | իբ | ի |
| Ո | կիրկ | իթ | գ | իդ | ժդ | ժբ | իգ | բ | իգ | իա |
| Չ | շբթ | լ | դ | իե | ժե | ժգ | իդ | գ | իդ | իբ |
| Պ | ուր | լա | ե | իզ | ժզ | ժդ | իե | դ | իե | իգ |
| Ջ | Եշբ | լբ | զ | իէ | ժէ | ժե | իզ | ե | իզ | իդ |
| Ռ | Դշբ | լգ | է | իը | ժը | ժզ | իէ | զ | իէ | իե |
| Ս | Գշբ | լդ | ը | մարտ ա | ժթ | ժէ | իը | է | իը | իզ |
| Վ | Բշբ | լե | թ | բ | ի | ժը | իթ | ը | իթ | իէ |
| Տ | կիրկ | լզ | ժ | գ | իա | ժթ | լ | թ | լ | իը |
| Ր | շբթ | լէ | ժա | դ | իբ | ի | լա | ժ | յուլ ա | իթ |
| Ց | ուր | լը | ժբ | ե | իգ | իա | յունիս ա | ժա | բ | լ |
| Ւ | Եշբ | լթ | ժգ | զ | իդ | իբ | բ | ժբ | գ | լա |
| Փ | Դշբ | խ | ժդ | է | իե | իգ | գ | ժգ | դ | օգոս ա |
| Ք | Գշբ | խ | ժե | Օ՛ հնացեալսն ամն ՛ի Փրկչէն ։ | | | | | | |

| Մէջոց շաբթուց պահօց : | Ս. Ածածին : | Մէջոց շաբթուց պահօց : | Սբ Խաչ : | Սբ Գէորգայ Բարեկենդան : | Մէջոց ուտից շաբթուց : | Գիւտ Խաչ : | Յիսնակաց Բարեկենդան : | Սբ Յակոբայ Եպիսկ'' : | Մէջոց ուտից · օր : | Օր Բարեկենդանի յայտն'' : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգոս | | սեպ | սեպ | | հոկտ | նոյե | դեկ | | |
| դ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | կիր |
| դ | ժդ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | բշբ |
| դ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | գշբ |
| դ | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | դշբ |
| դ | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | եշբ |
| դ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | ուրբ |
| դ | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | շբթ |
| դ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | կիր |
| դ | ժդ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | բշբ |
| դ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | գշբ |
| դ | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | դշբ |
| դ | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | եշբ |
| դ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | ուրբ |
| բ | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | շբթ |
| բ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | կիր |
| բ | ժդ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | բշբ |
| բ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | գշբ |

## Տանուտէր տարւոյն ։

մխթ. Եթէ ոք խնդրէ գիտել նաև զտանուտէր տարւոյն, կալցէ զԹուականն Հայոց. և 'ի բաց հանեալ անտի զ5 Թիւս, զմնացեալսն բաժանեսցէ 12 Թուով. և որ ինչ յաւելանայ՝ սկիզբն արարեալ 'ի Խոյէն, տացէ զայն 'ի կենդանակերպսն. և յորում կենդանակերպի դադարի, այն է Տանուտէր տարւոյն ։

Կամ դիւրին ևս ։ Կալ զԹուականն Հայոց, և 'ի բաց հանեալ անտի 1253. զայն՝ որ մնայ երթ ժբ̄. ժբ̄. և որ ինչ 'ի խոնարհ մնայ, կամ յաւելանայ, սկիզբն արարեալ 'ի Խոյէն. տուր 'ի կենդանակերպսն, և յորում կենդանակերպի վերջանայ, այն է Տանուտէր տարւոյն ։

Զոր օրինակ. 'ի Թուականիս Հայոց 1268, բարձ զ5 Թիւն, և զմնացեալս 1263. բաժանեա 12 Թուով. 'ի բաժանմանէ աստի յաւելանայ 3. զոր սկիզբն արարեալ 'ի Խոյէն, տուր 'ի կենդանակերպսն, և դադարի յԵրկաւորն. ապա 'ի Թուին Հայոց 1268, Տանուտէր տարւոյն է Երկաւորն ։

մծ. Կամ այսպէս. 'Ի Թուականիս Հայոց 1268, 'ի բաց հան զ1253. մնայ 15. և երթ ժբ̄. ժբ̄. յաւելանայ 3. ապա սկիզբն արարեալ 'ի Խոյէն տուր 'ի կենդանակերպսն. որ և դադարի 'ի յԵրկաւոր տանուտէրն ։

Պատճառ հանելոյ 1253 Թիւ 'ի Թուականէն Հայոց՝ է այն, զի 'ի նմա պարունակի 104 անգամ ժբ̄, և 5 ևս աւելի. զոր ըստ կանոնին՝ պարտիմք բառնալ 'ի Թուականէ անտի Հայոց 1268 ։ Զի 'ի յառաջին ամի Թուականութեանս Հայոց տանուտէր տարւոյն էր Կարիճ. հնգիւ պակաս 'ի սկիզբն գնալ 'ի Խոյն ։

| | |
|---|---|
| 1 Խոյ. | 7 Կշիռն. |
| 2 Ցուլ. | 8 Կարիճ. |
| 3 Երկաւոր. | 9 Աղեղնաւոր. |
| 4 Խեցգետին. | 10 Այծեղջիւր. |
| 5 Առիւծ. | 11 Ջրհոս. |
| 6 Կոյս. | 12 Ձուկն. |

մծա. Իսկ եթէ խնդրես գտանել զտանուտէր տարւոյն ըստ հաշուի ամի ծննդեան ք̄ն, այսպէս արա ։

Կամ զԹուական ամի Տ՟ն, և 'ի բաց հանեալ անտի զ1780, զմնացեալն երԹ Ժ՟Բ․ Ժ՟Բ․ և որ ինչ 'ի խոնարհ մնայ, սկիզբն արարեալ 'ի Խոյէն տուր զայն 'ի կենդանակերպս, և յորում կենդանակերպի վերջանայ, այն է Տանուտէր տարւոյն։

Զոր օրինակ․ յամի Տ՟ն 1818 'ի բաց հանեալ զ1780, մնայ 38․ և երԹ Ժ՟Բ․ Ժ՟Բ․ և զյաւելեալն 2՝ սկիզբն արարեալ 'ի Խոյէն տուր 'ի կենդանակերպսն․ և հասանէ 'ի վերջոյ 'ի կենդանակերպն Ցուլ, որ է Տանուտէր տարւոյն։

## ԾՌԱԶԱՏԻԿ

ՄԼԲ․ Ծռազատիկ լինի՝ յորժամ հայք և յոյնք երկպառակին 'ի տօնել զտօն զատկի 'ի միասին 'ի միում կիրակէի․ զի շաբաԹով միով յառաջէ մին քան զմիւսն 'ի տօնել զզատիկ․ և այս վրիպակ ծռուԹեան չորիցս գնի պատահիլ 'ի մէջ 532 ամի շրջանին։

Նախ՝ դիպաւ 'ի Թուականին հայոց ՌՁԳ․ յամի տեառն 1634։ Երկրորդ՝ դիպաւ 'ի Թուականին հայոց ՌՃՀԸ․ յամի տեառն 1729։ Երրորդ՝ ունի պատահիլ յետ իբր վեց ամաց՝ 'ի Թուին հայոց ՌՄՀԳ․ յամի տեառն 1824։ Չորրորդ գնի պատահիլ 'ի Թուին հայոց ՌՇԻ․ յամի տեառն 2071։

ՄԼԳ․ 'Ի չորեսին Թուականս յայսոսիկ՝ վերադիրն է Թ․ եօԹներեակն Գ․ և գիր տարւոյն Չ․ որպէս երևի ('ի սաղմոսի) յաղիւսակի անդ Թուականաց՝ եդեալ նշանս չակերտ ✝ 'ի խորանի Չ տարեգրոյն, և եօԹներեկի Գ․ ընդ Թ վերադրաւ միայն, որք տան նշանակել զծռազատիկն։ Զի 'ի դիպել նոյն Թուականացն վերադիրն զոլով Թ, ծնունդ զատկական լուսնի անկանի 'ի 24 մարտի․ յորմէ հաշուեալ աւուրս չորեքտասան, Լուսնի լրումն ըստ հայոց գայ յապրիլի 6 (ԶԾ)․ յաւուր կիւրակէի․ զի եօԹներեակն է Գ (ԶԾՏ)։ Ուստի 'ի յաջորդ կիւրակէի յապրիլի 13 անկանի հայոց տօնել զզատիկն։

ՄԼԴ․ Իսկ ըստ յունաց ընդ ամս ընդ այն վերադիրն է 10, որով ծնունդ զատկական լուսնի անկանի 'ի 23

մարտի . յորմէ հաշուեալ չորեքտասան աւուրս , Աւագ լրումն գայ յապրիլի 5 յաւուր շաբաթու ըստ ոմոյ հին տումարին ։ Ուստի 'ի հետեւեալ աւուրն յապրիլի 6 . որ է կիրակէ , առնեն զզատիկ ընդ լատինացւոց ։

Վասն որոյ զուղիղն կամելով ասել՝ յոյնք ոչ սխալեն յայնմ աւուր 'ի տօնելն զզատիկ յապրիլի 6 . զի Աւագ լրումն զատկի լրացեալ էր 'ի նմին ամի յաւուր մեծի չորեքշաբաթուն ։ Որպէս վկայէ բարեպաշտ թագաւորն մեր Հեթում յոտանաւորն իւր , որ սկսանի . ‖ Որ ծառայեալս եմ բիւր ախտից ‖ ։

մէ . Յաւուրս սորա 'ի թուականին հայոց չխա . այսինքն՝ յամի տեառն 1292 . դիպաւ գիր տարւոյն Շ . եօթներեակն Գ . և վերադիրն Թ . յորում ամի յոյնք յապրիլի 6 յաւուր կիւրակէի տօնեցին զզատիկն . իսկ հայք 'ի յաջորդ կիւրակէն յապրիլի 13 ունէին տօնել ։ Վասն այսր տարբերութեան և ծռութեան աւուրն տօնելոյ զզատիկ , որ 'ի մէջ յունաց և հայոց , կամեցաւ թագաւորն Հեթում ժողով առնել և քննել զաստուածաշունչ գիրս , և զբանս սրբոց հարց՝ ըստ կանոնի սրբոյ ժողովոյն նիկիոյ . ուր բաց յայլոց կանոնաց , որ վասն տօնելոյ զզատիկն , սահմանեցաւ՝ թէ տօնախմբութիւն պասեքին կատարեսցի յառաջին կիւրակէի յետ չորեքտասաներորդ աւուր լուսնի , այսինքն՝ յետ Աւագ լրման լուսնի ։ Այնպէս՝ զի եթէ նոյն չորեքտասաներորդ օրն իցէ օր կիւրակէի , թողցի 'ի յաջորդ կիւրակէն , այս է՝ յետ եօթն աւուր ։ Ապա եթէ աւագ լրումն գայցէ 'ի մէջ շաբաթուն , յայնժամ 'ի հուպ կիւրակէն անմիջապէս տօնեսցի ։

մը . Արդ՝ ըստ ասելոյ թագաւորին Հեթմոյ , յայնմ ամի Աւագ լրումն եղև յօրն մեծի չորեքշաբաթուն (*) . այս է՝ յապրիլի 2 . ուր և հրէից՝ ասէ , բոլոր խմբի տեսաք առնել զտօն զատկի ։ Ապա 'ի կիւրակէն՝ որ

(*) Յասելն թագաւորին Հեթմոյ յոտանաւորի անդ , թէ յայնմ ամի , այսինքն՝ 'ի թուին հայոց չխա . որ է ամ տեառն 1292 . ‖ Աւագ լրումն եղև յօրն մեծի չորեքշաբաթի ‖ ։ պարտ է իմանալ ըստ ուղղեալ նոր վերադրաց (ժլա) 'ի 2 ապրիլի . ոչ ըստ գործածութեան հին վերադրաց . ըստ որոյ Աւագ լրումն՝ եւս և ըստ յունաց գայր յաւուր շաբաթու 'ի 5 ապրիլի , և ոչ 'ի չորեքշաբաթի . իսկ ըստ հայոց գայր 'ի նմին ամի յաւուր կիւրակէի 'ի 6 ապրիլի ։ Թէպէտ ըստ իւրն և ըստ հաշուի հրէից լրումն այն չորիւք աւուրբք յառաջեալ էր դէպ 'ի սկիզբն ամսոյն . զոր և աչօք իսկ տեսանէին լրացեալ յաւուր չորեքշաբաթու ։

զկնի , այսինքն՝ յապրիլի 6 . հա՛րկ էր քրիստոնէից անմիջապէս կատարել զտօն զատկին ։

Ուստի Թագաւորն Հայոց Հեթում յոտանաւորի անդխուրում, յորէ զկնի ։

„ Զայս իմաստնօք յոյժ քննեցաք ․
„ Յաստեղագիտաց քաջ հարցաք ․
„ Յետոյ զլուսինն աչօք տեսաք ․
„ Ուէ և գրովք վաղ հաւատացաք ։
„ Այլ և հրէիւք ճշմարտեցաւ ․
„ Զի հինգշաբաթըն լըրացաւ ․
„ Ի շաբաթ մեծ լրումն եղաւ ․
„ Ուղիղ զատիկըն տօնեցաւ ։
„ Յորում բոլոր ազգ՝ որ 'ի նոյն ․
„ Միաբանեալ եղեն ուղղոյն ։

մէ ․ Ապա առ 'ի խափանել զվրիպակ ծռազատկի , որ չորիցս միայն ընդ Շ տարեգրով հանդիպի 'ի մէջ հինգհարիւրեկի ․ այսինքն՝ 'ի մէջ 532 մեծի շրջանի , հա՛րկ է՝ զի 'ի տեղի Շ տարեգրոյն , յամին յայնոսիկ 'ի գործ ածցի Հ տարեգիրն ․ եօթներեակ 4 ․ և վերադիր Թ ։ Որպէս զի ոչ յապրիլի 13 , այլ 'ի վեցն նորին տօնեսցի զատիկն ։

Զայս ամենայն վկայութեամբ ածաշունչ գրոյն , և վճռով սրբոյ ժողովոյն Նիկիոյ յայտնի կացուցանէ բարեպաշտ Թագաւորն ։

Այլ և ժողովով հաստատեաց , զի մի՛ յետ այնորիկ յայսպիսի դիպուածս վրիպակ ինչ ծռազատկի լինիցի 'ի մէջ արևելեան ազգաց ըստ ոճոյ հին տումարին ։

Նաև որոյ՝ յամի Տն 1824 ուղղել կամելով զծռազատիկն , պա՛րտ է յայնժամ վարել ըստ կանոնի ուղղեալ նոր [illegible] ․ (Ճլա) յորս Թ վերադիրն անկանի 'ի 19 մարտի ․ յորմէ եթէ հաշուեսցես չորեքտասան աւուրս , հասցես 'ի 1 ապրիլի փաղառութե , յորում աւուր դիպի Աւագ լրումն լուսնի , որ է երեքշաբաթի ․ ապա 'ի յաջորդ կիւրակէի , այս է՝ 'ի 6 ապրիլի լիցի օր տօնի սուրբ զատկի ․ որպէս ցուցանէ Հ ․ տարեգիրն ։

մը ․ Դարձեալ՝ դնի լինել ծռազատիկ , յորժամ վերադիրն է Թ ․ եօթներեակն ա ․ և գիր տարւոյն Ղ ․ որպէս նշանակի 'ի Թուին Հայոց ՌՆԶ ․ յամի տեառն 1957 ։ Այլ ծռութի սորա Թուի թէ չէ ինչ հաւաս-

տի, զի Թէպէտ 'ի նմին ամի Ա․—ոգ Հռոմ․ ըստ տումա-րին յունաց դիպի յապրիլի 5 յաւուր հինգշաբաթու․ և ըստ հայոց յապրիլի 6 յաւուր ուրբաթու․ սակայն տօն զատկի կատարի 'ի միասին յապրիլի 8 ։

Յայտ անտի է, զի բայց 'ի Թուականէ աստի 1957, այլ ևս երիցս անգամ պատահի 'ի մեծի շրջանին նոյն վերադիր Թ․ եօթներեակ Ա․ և նոյն գիր տարւոյ Գ, յորս ոչ գնի լինել ճռազատիկ։ Մի՛ յամի տեառն 1767։ Երկրորդ՝ յամի տեառն 1862։ Երրորդ՝ յամի տեառն 2052։ Իսկ սակայն և ոչ 'ի միումն գնի 'ի նոսին լինել ճռազատիկ․ այլ Թէ՛ հայք և Թէ՛ յոյնք 'ի միասին կա-տարեն յապրիլի 8․ որպէս տեսաք և ստուգեցաք 'ի տումարագիրս յունացն ևս, որք 'ի նմին ամի տն 1957, գնեն օր զատկի յապրիլի 8 ։

## ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ
## ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ

ԽԹ․ Վարդաւորութին հին տոմարագրին արարեալ յառաջին դարս քրիստոնէութն, 'ի սկզբանն անդ ըստ բաւականին անսխալ ցուցանէր զաւուրս ծննդեան լուսնի․ այլ և զկէտ զատկական լուսնի, և զաւագ լրումն ։ Բայց յանցանել բազում դարուց՝ 'ի յայտ եկին վրիպանք նորին, վասն սակաւ տարբերութե բոպէից, որ ընդ մէջ ընթացից երկուց լուսաւորացս արեգական և լուսնի․ զոր յայնժամ տոմարագէտք կամ ոչ ծան-եան, և կամ վասն սակաւութեան անփոյթ արարին 'ի հաշուել ։

Այլ այն սակաւ տարբերութիւն բոպէիցն՝ յետ անցման դարուց բազմացաւ յոյժ․ մինչև շարժական տօնք նշանակեալք 'ի հին տոմարի՝ որպիսի է տօն Զատկի, և այլ տօնք զուգընթացք նմին՝ հեռացան յոյժ յորոշեալ կէտէ անտի նշանակելոյ ըստ ընթացից արևուն ։

Ծ․ Քանզի այժմ ըստ հին տումարին՝ Տօն զատկի բազում անգամ անցանէ քան զգարնանային լրումն լուսնի, որով ոչ 'ի կիւրակէն՝ որ անմիջապէս յետ չո-րեքտասան Աւագ լրմանն լուսնի, որ 'ի մարտի հասա-

բակածին , այլ 'ի միւս կիւրակէն , որ յաջորդէ յետ վերջին քառորդին՝ կատարի տօն զատկի ։ Եւ երբեմն ոչ 'ի գարնանային առաջին լուսնին , այլ յետ երկրորդ լուսնին՝ հինգշաբաթով յետոյ քան զգարնանային լուսին .

Եւ եթէ անծանօթ մնայր այս վրիպակ ընթացից լուսաւորացս , հետ զհետէ առաւել ևս անէր խառնբումն 'ի հրամայեալ կէտէ առաջին ամսոյն , այսինքն՝ 'ի հասարակածէ մարտի ։ Եւ 'ի վախճանի հասանէր յայն աստիճան վրիպանաց խառնրման , մինչև աւուրն զատկի անցանել ոչ միայն քան զապրիլի ամիսն , այլ և քան զմայիսի , և զյուլիսի ամիսս , և անդր ևս ։

մխթ . Որ արդարև 'ի բազում ժամանակաց ծանուցեալ այն վրիպակ , և բազումք յիմաստնոց և յաստեղագիտաց հմտագունից բազում անգամ զհետ եղեն ուղղելոյ զայն . այլ խափանեցաւ մինչև 'ի ժամանակս քահանայապետին Գրիգորի ԺԳ . յամի տն 1582 . որոյ հրամանաւն ժողովեալ 'ի հռոմ բազմութիւն իմաստուն աստեղաբաշխից , պարապեցան 'ի քննել և 'ի գտանել հնարս վասն ուղղութեան տումարիս ։

Արդ յետ ըստ բաւականին քննութեան՝ ամենեքին միաբան հաւանութիւն ընտրեցին զայն կարգ տումարի , զոր յօրինեալ էր երևելի աստղաբաշխն և բժիշկն՝ կոչեցեալ Լուիճի Լիլիօ հռովմայեցի . որոյ եղբայրն յետ մահուան նորա առաջի արար պապին , երբ ոչ միայն դարման բառնալոյ զամենայն վրիպակս հին տումարին . վերածելով զերս յառաջին իւր վիճակ , և տալով օրինակս նորոգելոյ զփոփոխութիւն , որ յանհաւասարութենէ երկնային շարժմանց էր պատճառեալ ։

### Առաջին Հրեղան կանոնելոյ հասարակածին ։

մխթ . Առ 'ի բարւոք իմանալ զայս՝ գիտել պարտ է . զի տևողութիւն արեգական տարւոյ յարևադարձէ յարևադարձ՝ որոշեալ 'ի հնոց 365 աւուրց . և 6 ժամուց , գտաւ անհամաձայն և տարբեր 'ի դիտողութենէ իմաստնոց վերջին դարուցս . յորս յայտնի տեսեալ եղև , թէ արեգական ընթացք պակասէր յամին վայրկենօք ինչ քան զ6 ժամս ։ Եւ թէպէտ զառաջինն յոյժ փոքր էր տարբերութիւնն՝ և իբր անզգալի , սակայն 'ի

վերայ այսր ամենայնի բազում անգամ կրկնեալ նոյնն՝ այնչափ աճեցաւ, մինչեւ պատճառել ոչ սակաւ վրիպակս երեւելիս ։

Մխգ. Արդ՝ տեւողութիւն տարւոյ արեգական ըստ դիտողութեան աստեղագիտաց վերջին դարուցս, միջակային հաշուօք ըստ դնելոյ Տը Լալանտի է 365 օր. 5 ժամ. 48' րոպէ նախնական. և 45'' րոպէ երկրորդական. փոքր քան զվեց ժամն 11' նախնական րոպէիւք, և 15'' երկրորդականօք ։

Յորմէ յայտ է, թէ տեւողութիւն տարւոյն, փոքր է քան զայն՝ զոր եդեալ էին նախնիք 'ի Յուլեան տումարագիրս. և թէ նահանջն միոյ աւուր եդեալ 'ի նոցանէ ըստ կանոնի յիւրաքանչիւր չորրորդ ամին՝ աճէր իբր օր մի 'ի միջոցի հարիւր երեսուն ամաց, յառաջեալ դէպ 'ի սկիզբն ամսոյն. (ըստ միջակային հաշուի տեւողութեան տարւոյն) ։

Մխդ. Ապա ըստ այսմ ամն արեգական յառաջանալով ամբողջ միով աւուրբ քան զամն քաղաքական 'ի վերջն հարիւր երեսուն ամաց, 'ի միջոցի իբր 1300 ամաց, հաւասարակածն յառաջեալ էր քան զիւր առաջին տեղի իբր աստիճանս $10\frac{1}{4}$ ։ Որով և հաւասարակածն գարնայնոյ՝ որոյ տեղին 'ի ժամանակս Նիկիոյ ա ժողովոյն էր 'ի 21 մարտի, 'ի միջոցի այսչափ ամաց յետս դարձեալ էր աւուրս տասն ամբողջ դէպ 'ի սկիզբն ամսոյն ։

Որովհետեւ յայտնի եղեւ 'ի դիտողութեանց աստեղագիտաց, թէ մինչեւ էր սկիզբն առեալ նորոգութեան Գրիգորեան տումարին, արեգակն մտանէր յառաջին աստիճան Խոյ կենդանակերպին յաւուր 11 մարտի, և ոչ 'ի 21 նորին ։

Մխե. Յորմէ զհետ գայր՝ թէ ամենայն չորեքտասանն լուսնի, որ անկանէր ընդ մէջ երկուց միջոցացս 11. և 21 մարտի, 'ի բաց թողեալ լինէր յեկեղեցւոյ իբր անպիտան 'ի կատարումն տօնի զատկի. անցանելով յերկրորդում ամսեանն լուսնի 'ի տօնել. թէպէտ առաջինն իսկ և ճշմարտապէս էր չորեքտասաներորդն զատկական լուսնի, անկեալ 'ի գարնանային հաւասարակածի, կամ անմիջապէս զկնի ։ Իսկ այս՝ յառաջ քան զնորոգութիւն տումարագրի՝ հարկաւորապէս զհետ

գայր հնգեկցս յիւրաքանչիւր շրջանի ննևտասներեկաց, այս է՝ յամսն, որոց ննևտասներեակք են. 1. 6. 9. 12. 17: Կամ՝ հնգեկցս 'ի վերադրաց, որք են. ը. գ. իէ. իը. լ. յորս չորս կամ հինգ շաբաթով յետս մնայր տօն զատկին:

Երկրորդ Վրիպակ հանդիպաբերեան ծննդեան լուսնի:

ճխդ. Միւս այլ վրիպակ զհետ դայր 'ի տումարագիրս նախնեաց՝ որպէս ասացաք (գը) 'ի դասաւորութենէ ննևտասներեկաց կարգելոյ 'ի նոցանէ. ենթադրելով նոցա՝ թէ լուսինն յետ ննևտասան ամաց դարձեալ գայ 'ի միասին 'ի նոյն կէտ ընդ արեգական, ոչ միայն յայնմ աւուր, այլ և 'ի նմին ժամու, և 'ի մի նոյն վայրկենի, առանց ինչ զհետ գալոյ փոփոխութե̄ իմն կարգի եդելոյ 'ի նոցանէ: Իսկ սակայն ըստ հաշւոյն եդելոյ 'ի վերոյ (ճ). ըստ միջին ժամանակի ընթացից արևուն և լուսնին, տեսանի յայտնի տարբերութի. որ թէպէտ և փոքր, այլ 'ի սակս կրկնելոյ, բազում պատճառէ այլայլութի̄ս և փոփոխութի̄ս:

ճխէ. Վասն որոյ ենթադրելով զվերոյ եդեալսն (գթ. և ճ) 'Թէ միջական տևողութիւն ննևտասան ամաց արևուն են աւուրք 6939. ժամք 18. և այն երկուհարիւր երեսուն և հինգ ամիսք լուսնի առնեն աւուրս 6939. ժամ 16. րոպէ. 32'. 28''. 5'''. այս է՝ փոքր քան զառաջինն ժամ 1. րոպէ 27'. 31''. 55'''. Հետևի՝ թէ 'ի լրմանլ ննևտասան ամաց ծնունդ լուսնի ոչ գայ 'ի մի և 'ի նոյն կէտ ընդ արևուն, այլ յառաջէ յետադարձ շարժմամբ իբր ժամու միով և կիսով քան զայն. և 'ի միջոցի 312 ամաց և կիսոյ՝ ծնունդ լուսնի կանխէ ամբողջ աւուրբ միով. այնպէս զի այն՝ որ այսօր դիպաւ (օրինակ իմն) 'ի 31 աւուր դեկտեմբերի, յետ անցանելոյ 312 ամաց և կիսոյ դիպէր 'ի 30 դեկտեմբերի. այս է՝ աւուրբ միով յառաջեալ յետադարձ շարժմամբ դէպ 'ի սկիզբն ամսոյն:

ճխը. Վասն այսորիկ 'ի միջոցի 1250 ամաց անցելոյ 'ի Նիկիոյ ժողովոյն մինչև 'ի նորոգումն տումարագրին՝ ծնունդ լուսնի յառաջեաց կանխելով իբր չորս աւուրբք ամբողջ դէպ 'ի սկիզբն ամսոյն: Որպէս դի-

տողութիւնք աստեղագիտաց ժամանակին ցուցանէին, թէ միջակն զուգընթացութիւն արեգական և լուսնի, որք լինէին 'ի փոխման վեշտասաներորդ դարուն յաւուր 26 դեկտեմբերի. նոյնն 'ի ժամանակի նք ժողովոյն Նիկիոյ դիպէր 'ի 30 նորին: Աստի առ 'ի գտանել յառաջ քան զնորոգութիւն տումարի զճշմարիտ տեղի ծննդեան լուսնի՝ պարտ էր յայնմ օրէ հաշուել այլ ևս չորս աւուրս դէպ 'ի սկիզբն ամսոյն. և այնպէս գտանել զճշմարիտ օր ծննդեան լուսնի:

մխթ. Յորմէ յայտնի տեսանեմք, թէ նոր լուսինն նշանակեալ 'ի հին տումարի իննևտասներեկաւ, կամ՝ ըստ գործածութեան հին վերագրաց, ո՛չ է ճշմարիտ նոր լուսինն. նա մանաւանդ թէ չորրորդ, կամ հինգերորդ օր լուսնի: Իսկ չորեքտասանն լուսնի է ութուտասներորդ օր. և 21 է քսաներորդ հինգերորդ օր: Այնպէս զի՝ սահման աւուրն զատկի հաստատեալ արդէն ըստ կանոնաց՝ առնել զզատիկ 'ի հնգետասաներորդէ մինչև 'ի քսաներորդ առաջներորդ օրն լուսնի՝ էր փոփոխեալ. յորս բազում անգամ ո՛չ կատարիւր տօն զատկի. այլ դիպէր կատարել զայն միով շաբաթով յետոյ՝ 'ի քսաներորդ երկրորդ աւուրն, 'ի քսաներորդ երրորդ աւուրն, մինչև 'ի քսաներորդ հինգերորդ աւուրն լուսնի:

### Անտեղութիւնք պատճառեալք յերկուց վրիպակաց աստի:

մծ. Ահաւասիկ յերկուց վրիպակաց աստի պատճառին անտեղութիւնք՝ յաղագս կատարման տօնի զատկին, որք առաւելեալք օր ըստ օրէ գնալով գնան և աճին. մինչև 'ի գալ ժամանակաց յետ բազում դարուց՝ անցանելն քան զչափն: Վասն զի 'ի հաշուէ առաջին վրիպակին տեսանի, թէ յանցանել 3000 ամաց՝ ո՛չ ևս լինի 'ի մէջ քրիստոնէից ըստ կանոնաց հաշակել զտօն զատկի. զի զատկական ծնունդք լուսնի նշանակեալք 'ի հին տումարագիրս, ո՛չ ևս լինէին 'ի գարնանային ամսեան, այսինքն՝ 'ի մարտի, կամ յապրիլի. այլ 'ի մայիսի և կամ 'ի յունիսի. և անդր ևս:

մծա. Նոյնպէս 'ի հաշուէ երկրորդ վրիպակին, ո՛չ ևս լինէր ըստ կանոնաց հաշակել զտօն զատկի. վասն զի յանցանել 10000 ամաց՝ ծնունդ լուսնի դառնայր

նորոգ 'ի նոյն տեղի, ուր էր զառաջինն նշանակեալ 'ի տումարի. զի եթէ 30 օր կանխելով ծնունդ լուսնի՝ դառնայր յառաջին շրջանն իննևտասներեկի կամ վերադրի. զի որպէս ասացաք՝ յետ անցանելոյ 19 ամաց դառնայր լուսինն 'ի նոյն կէտ, յորմէ զառաջինն մեկնեցաւ :

### Նշանակ ուղղելոյ զառաջին Գրեգորին :

մծը. Ըստ 'ի բառնալ զառաջին վրիպակն, հաստատեցին միաբան հաւանութբ ամենայն աստեղագէտք, զի 'ի միում ամի անդ հատցեն զաւուրս տասն, առ 'ի վերածել զհասարակածն գարնայնոյ 'ի 21 մարտի, ուր էրն 'ի ժամանակս նիկիոյ սբ. ժողովոյն : Ասան զի ըստ այսմ դրութե ոչ լինէր փոփոխութի ինչ 'ի ծէսս և ոչ յարարողութիւնս եծայլին պաշտամանն :

Եւ զայս բարձումն տասն աւուրց Սրբազան քահանայապետն հաճեցաւ առնել միանգամայն 'ի միում նուագի. հրամանն տալով 'ի ձեռն կոնդակի, զոր հրատարակեաց յամի տն 1581, թէ 'ի յաջորդ ամին 1582 յետ 4 աւուր հոկտեմբերի՝ հատցեն զտասն աւուրս՝ անուանելով 15 հոկտեմբերի անմիջապէս յետ 4 աւուրն. ապա 16. 17. 18 և այսպէս ըստ կարգին՝ որ հետ զհետ յաջորդէ.

1582.

Հոկտեմբեր. 1. 2. 3. 4. * 15. 16. 17. 18. և այլն :

Փոխադրելով յայլ աւուրս զտօնս, որք 'ի նմին տասն աւուրսն դիպանէին :

մծթ. Յայսմանէ ծագեցաւ տարբերութիւն հին և նոր տումարի. այս է՝ տարբեր եղանակ թուելոյ կամ անուանելոյ զաւուրս տարւոյն. նոքա՝ որ վարէին նոր Գրիգորեան տումարաւ, 'ի ժամանակի անդ նորոգութեան օրինակ իմն՝ կոչէին 25 մարտի ըստ Նոր ոճոյ, զնոյն օր ըստ Յուլեան հին տումարի կոչէին՝ 15 մարտի ըստ հին ոճոյ : Ըստ այսմ այն՝ որ է 31 մարտի ըստ նորոյն. է 21 ըստ հնոյն : Եւ ևս՝ 1 ապրիլի ըստ նորոյն. է 22 մարտի ըստ հնոյն. և այս որպէս ասացաւ 'ի ժամանակի անդ նորոգութե տումարին : Զի ըստ այժմուս՝ 25 մարտի ըստ նորոյն, է 13 ըստ հնոյն : Այնպէս 31 մարտի ըստ նորոյն, է 19 ըստ հնոյն : Եւ ևս 1 ապրիլի ըստ նորոյն, է 20 մարտի ըստ հնոյն :

## Ընդհանրութեան շրջանի արեգական, կամ կիրակագրոյն :

ՄԾԴ. Բարձումն տասն աւուրց միջահատեաց զկարգ շրջանի արեգական, ընդ նմին և զեօթներեակն, կամ զկիրակագիրն : Վասն զի եօթներեակն Դ (ըստ լատ.) յառաջ քան զնորոգութիւն տումարագրին գտանէր հանդէպ 4 աւուրն հոկտեմբերի, որպէս տեսանի 'ի լուսանցն յաղուսակի. և Ե հանդէպ 5 աւուրն :

Վասն որոյ և տառն Ա հանդէպ 15 աւուրն. ուստի որպէս վասն բարձման 10 աւուրն՝ 15 օրն եկն անմիջապէս յետ 4 աւուրն հոկտեմբերի. սոյնպէս տառն Ա հանդէպ 15 աւուրն յետ նորոգութեանն՝ (ՄԾԴ) գտաւ նմանապէս անմիջապէս յետ Դ տառին. Թէպէտ և ըստ բնական կարգի իւրոյ պարտ էր գալ յետ Ե կիրակագրոյն. զի զկնի Ե տառի յաջորդէ Ա :

Եւ զօր օրինակ՝ յամին 1582 տառն Է՝ էր կիրակագիր յառաջ քան զնորոգութիւն տումարին, սոյնպէս յայտնի տեսանի, թէ 'ի 4 աւուրն հոկտեմբերի էր օր հինգշաբաթի հանդէպ Դ տառի (ՄԾԵ) : Վասն որոյ հետեւեալ օրն 15 (ՄԾԴ), յետ նորոգութեան լինի ուրբաթ հանդէպ Ա տառի. և 16 օրն շաբաթ հանդէպ Բ տառի. և 17 օրն կիւրակէ հանդէպ Գ տառի : Ուստի տառս Գ եղև կիրակագիր 'ի հոկտեմբերի անդ նորոգութեան տումարի, որ նախ քան զնորոգութիւնն էր տառն Է :

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՄԾԵ. Յառաջ քան զնորոգութիւն. | 5. | 6. | 7. | 8. | 9. | 10. | 11. | 12. | 13. | 14. | 15. | և այլն. |
| | Ե. | Զ. | Է. | Ա. | Բ. | Գ. | Դ. | Ե. | Զ. | Է. | Ա. | |
| 1582. Հոկտեմբ. | 1. | 2. | 3. | 4. | | | | | | | | |
| | Ա. | Բ. | Գ. | Դ. | | | | | | | | |
| ՄԾԴ. Յետոյ քան զնորոգութիւն. | 15. | 16. | 17. | 18. | 19. | 20. | 21. | 22. | 23. | 24. | 25. | և այլն. |
| | Ա. | Բ. | Գ. | Դ. | Ե. | Զ. | Է. | Ա. | Բ. | Գ. | Դ. | |

ՃԾԷ. Յայսմանէ աստի տեսանի՝ թէ փոփոխութիւնս արարեալ 'ի կարգի տառից է չորրորդ տեղին փաղառութը. այս է՝ 'ի Է տառէ 'ի Գ։ Վասն որոյ ամենայն տարբերութիւն՝ որ գտանի 'ի շրջանի արեգական, կամ որ նոյն է՝ 'ի շրջանի կիրակագրոյն, յետ նորոգութեան տումարի կայանայ 'ի փոխադրութեան չորրորդ կայանի. որպէս է փոխադրել 'ի Գ. և Ա 'ի Դ. և Բ 'ի Ե. սոյնպէս իմա և զայլսն։

### Վասն ուղղելոյ զհասարակածն գարնայնոյ Գրիգորեան կայի։

ՃԾԸ. Ո՛չ գոյ միջոց առաւել ընտակման առ 'ի ունել հաստատ զհասարակածն գարնայնոյ յուրում կայանի եդելոյ 'ի 21 մարտի, որչափ այն՝ զի հատցի օր մի 'ի տումարագրի յամենայն նուազի՝ յորս վայրկեանք որք պատճառեն զտարբերութիւնս աւուրցն, հասցեն 'ի միասին 'ի գումար միոյ աւուր. զի հասարակածն՝ որ առ սակաւ սակաւ փոխեալ էր զտեղին. և անցեալ 'ի 21 օրէ՝ 'ի 20 օրն, հատանելովն կամ բառնալովն օր մի, այն՝ որ էր 'ի 20, գնայ 'ի 21. և այս լինի՝ յորժամ զանց առնի օր մի 'ի նահանջ ամին։

ՃԾԹ. Աստի առ այս վախճան հրամայեցաւ 'ի նոր տումարի՝ մի՛ առնել նահանջ օր մի 'ի միջոցի 130 ամաց. կամ 'ի միջոցի 400 ամաց զերիս աւուրս միայն թողուլ առանց առնելոյ նահանջ։ Եւ 'ի յորոշել զամս՝ յորս չէր պարտ առնել նահանջ, եդաւ երևելի իմն նշան 'ի դարագլուխս ամացն, որով որոշեսցի յայլմէ ամենայնէ։ Եւ նախ՝ յամի Տեառն 1600՝ (յորում 'ի մօտոյ նորոգեալ էր տումարագիրն), արարաւ նահանջ. զի 'ի նմին ամի չէր հարկ տակաւին վասն տեղւոյ հասարակածի մարտին։ Իսկ հետևեալ երեք հարիւրաւոր ամք որոշեցան մնալ իբր հասարակ ամ առանց առնելոյ նահանջս. այս է՝ յամի Տեառն 1700. 1800. և 1900. տալով նոցա միայն 365 աւուրս. թէպէտ ըստ կարգի սահմանելոյ 'ի Յուլիոս կայսերէ՝ պարտ էր առնել նահանջ, այսինքն՝ տալ 366 աւուրս։

ՃԿ. Ապա յամին 2000 տայ առնել նահանջ. իսկ 'ի հետևեալսն 2100, 2200, և 2300. թողու իբր հասարակ ամ առանց առնելոյ նահանջս։ Նոյնպէս յամին

2400 առնել նահանջ. և զհետևեալ երիս 2500. 2600. և 2700 թողուլ հասարակ աննահանջ. ըստ այսմ և այլք մինչ 'ի վախճան:

ճկա. Գիտ աննահանջ թողլոյ զերիս աւուրս 'ի միջոցի 400 ամաց թուելոյ ըստ կարգի, է դիւրին իմն եղանակ ուղղելոյ զառաջադրեալ նպատակս ապագայ ամացն. իբր զի սահմանեալ է այն 'ի գլուխս դարուց յոբելեան ամացն. այս է՝ 'ի բոլորիլ հարիւր ամացն միայն, և ոչ պարտաւորել թողլոյ զայնս 'ի կատարումն 130 ամաց: Արդ զի ըստ կանոնի հաստատելոյ յեկեղեցւոյ՝ այսու ճանապարհաւ օրն գարնանային հաւասարակածի, ըստ միջակին հաշուին ոչ երբէք հեռանայ առաւել քան զ18 ժամ 'ի կայից իւրոց. ուր այլապէս՝ (այս է՝ 'ի բոլորիլ 130 ամաց), բազում անգամ հեռանայր քան զմի օր ամբողջ:

### Նշանակ բառնալոյ զերկրորդ Էպակտին:

ճկբ. Յառ 'ի բառնալ զերկրորդ վրիպակն պատճառեալ 'ի կանխութենէ ծննդեան լուսնի. որ հինգ աւուրբք յետադարձ շարժմամբ գնայր դէպ 'ի սկիզբն ամսոյն, եղև կարգաւորութի վերադրաց, յօրինեալ (որպէս ասացաք 'ի վերոյ) 'ի հմուտ աստեղագիտէ և բժշկէ՝ կոչեցելոյ Լուիձի Լիլիօ հռովմայեցւոյ (մխտ). որով բառնայր զամենայն դժուարութիւնս ընդդիմութեց, որք ընդ առաջ ելանէին 'ի կարգաւորութիւնս վերադրաց. զորս դիւրին ճանապարհաւ 'ի կարգի եդեալ՝ ցուցանէր զյաջորդութի և զդասաւորութիւն նոցա. որով լինէր 'ի բաց բառնալ զաշխատութիս, որ 'ի կազմութի բազմապատիկ տոմարագրութեց: Ընդ որ հաճեալ միաբան հաւանութեամբ, ընտրեցին զայն կարգ վերադրաց, որ 'ի նոր տոմարագիրս տեսանի:

ճկգ. Ունի սա մասնաւոր իմն կարգ շրջանաց վերադրաց՝ դասաւորելոյ յաջորդաբար 'ի 30նոյ մինչև 'ի 1. կարգեալ յետադարձ կարգօք այնպիսի օրինակաւ, մինչև հանդէպ ամենայն աւուրց ամսոց դրաւել զիւրեանց կայանս. սկսեալ յառաջին օրէ Յունվարի, հանդէպ որոյ գտանի աստղանշան * (ըստ լատ.) որ դնի 'ի տեղի 30 թուոյ. ապա անցանէ յերկրորդն

նոյն ամսոյ, որ է ԺԲ. անցեալ յերրորդն ԺԸ. մինչե-առ վերջին օրն ա. և մինչև առ 30 * աստղանիշ:

Նոյնպէս յառաջին օրն փետրվարի ԺԲ. յերկրորդն ԺԸ. յերրորդն ԺԷ. և այսպէս յայլ ամենայն աւուրս նոյին կարգաւ. բայց 'ի վեց տեղեաց՝ յորս թիւն ԻԴ դնի արընթեր ԺԵ ԻՆ. այսինքն՝ 'ի հինգերորդ օրն փետրվարի, և 'ի հինգերորդ օրն ապրիլի. յերրորդ օրն յունիսի. յառաջին օրն օգոստոսի. 'ի քսաներորդ իններորդ օրն սեպտեմբերի. և 'ի քսաներորդ եօթնե-րորդ օրն նոյեմբերի: Իսկ այս վասն միջահատութեան վեց աւուրց կարգի այսց երեսուն թուոց կրկնելոց եր-կոտասանիցս 'ի տումարագրի. որպէս զի՝ լինել յամին 354 աւուրց՝ ըստ թուոյ երկոտասան լուսնական ամ-սոց: Իսկ այսպէս հասանէ մինչև 'ի 20 դեկտեմբերի փաղառութն. յետ որոյ մնան անդէն 'ի դեկտեմբերի մետասան աւուրք. որք և ունին զնոյն թիւս վերա-դրոյ, որք միանգամ 'ի սկզբան տարւոյն եդեալ կան յառաջին օրէ յունվարի:

# ԺԿԷ. ՏՈՒՄԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ

| ՅՈՒՆՎԱՐ | | | ՓԵՏՐՎԱՐ | | | ՄԱՐՏ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աւուրք ամսոյ | Եպակտք | Գիրք Կիրակամտից | Աւուրք ամսոյ | Եպակտք | Գիրք Կիրակամտից | Աւուրք ամսոյ | Եպակտք | Գիրք Կիրակամտից |
| 1 | * | Ա | 1 | ԻԹ | Դ | 1 | * | Դ |
| 2 | ԻԹ | Բ | 2 | ԻԸ | Ե | 2 | ԻԹ | Ե |
| 3 | ԻԸ | Գ | 3 | ԻԷ | Զ | 3 | ԻԸ | Զ |
| 4 | ԻԷ | Դ | 4 | 25·ԻԶ | Է | 4 | ԻԷ | Է |
| 5 | ԻԶ | Ե | 5 | ԻԵ·ԻԴ | Ա | 5 | ԻԶ | Ա |
| 6 | 25·ԻԵ | Զ | 6 | ԻԳ | Բ | 6 | 25·ԻԵ | Բ |
| 7 | ԻԴ | Է | 7 | ԻԲ | Գ | 7 | ԻԴ | Գ |
| 8 | ԻԳ | Ա | 8 | ԻԱ | Դ | 8 | ԻԳ | Դ |
| 9 | ԻԲ | Բ | 9 | Ի | Ե | 9 | ԻԲ | Ե |
| 10 | ԻԱ | Գ | 10 | ԺԹ | Զ | 10 | ԻԱ | Զ |
| 11 | Ի | Դ | 11 | ԺԸ | Է | 11 | Ի | Է |
| 12 | ԺԹ | Ե | 12 | ԺԷ | Ա | 12 | ԺԹ | Ա |
| 13 | ԺԸ | Զ | 13 | ԺԶ | Բ | 13 | ԺԸ | Բ |
| 14 | ԺԷ | Է | 14 | ԺԵ | Գ | 14 | ԺԷ | Գ |
| 15 | ԺԶ | Ա | 15 | ԺԴ | Դ | 15 | ԺԶ | Դ |
| 16 | ԺԵ | Բ | 16 | ԺԳ | Ե | 16 | ԺԵ | Ե |
| 17 | ԺԴ | Գ | 17 | ԺԲ | Զ | 17 | ԺԴ | Զ |
| 18 | ԺԳ | Դ | 18 | ԺԱ | Է | 18 | ԺԳ | Է |
| 19 | ԺԲ | Ե | 19 | Ժ | Ա | 19 | ԺԲ | Ա |
| 20 | ԺԱ | Զ | 20 | Թ | Բ | 20 | ԺԱ | Բ |
| 21 | Ժ | Է | 21 | Ը | Գ | 21 | Ժ | Գ |
| 22 | Թ | Ա | 22 | Է | Դ | 22 | Թ | Դ |
| 23 | Ը | Բ | 23 | Զ | Ե | 23 | Ը | Ե |
| 24 | Է | Գ | 24 | Ե | Զ | 24 | Է | Զ |
| 25 | Զ | Դ | 25 | Դ | Է | 25 | Զ | Է |
| 26 | Ե | Ե | 26 | Գ | Ա | 26 | Ե | Ա |
| 27 | Դ | Զ | 27 | Բ | Բ | 27 | Դ | Բ |
| 28 | Գ | Է | 28 | Ա | Գ | 28 | Գ | Գ |
| 29 | Բ | Ա | | | | 29 | Բ | Դ |
| 30 | Ա | Բ | | | | 30 | Ա | Ե |
| 31 | * | Գ | | | | 31 | * | Զ |

# ՏՕՒՄԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ

| ԱՊՐԻԼ | | | ՄԱՅԻՍ | | | ՅՈՒՆԻՍ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Օր ամսոյն | Եպակտ լուսնական | Կիրակամտից գիր | Օր ամսոյն | Եպակտ լուսնական | Կիրակամտից գիր | Օր ամսոյն | Եպակտ լուսնական | Կիրակամտից գիր |
| 1 | իթ | Է | 1 | իը | Բ | 1 | իէ | Ե |
| 2 | իը | Ա | 2 | իէ | Գ | 2 | 25 · իզ | Զ |
| 3 | իէ | Բ | 3 | իզ | Դ | 3 | իե · իդ | Է |
| 4 | 25 · իզ | Գ | 4 | 25 · իե | Ե | 4 | իգ | Ա |
| 5 | իե · իդ | Դ | 5 | իդ | Զ | 5 | իբ | Բ |
| 6 | իգ | Ե | 6 | իգ | Է | 6 | իա | Գ |
| 7 | իբ | Զ | 7 | իբ | Ա | 7 | ի | Դ |
| 8 | իա | Է | 8 | իա | Բ | 8 | ժթ | Ե |
| 9 | ի | Ա | 9 | ի | Գ | 9 | ժը | Զ |
| 10 | ժթ | Բ | 10 | ժթ | Դ | 10 | ժէ | Է |
| 11 | ժը | Գ | 11 | ժը | Ե | 11 | ժզ | Ա |
| 12 | ժէ | Դ | 12 | ժէ | Զ | 12 | ժե | Բ |
| 13 | ժզ | Ե | 13 | ժզ | Է | 13 | ժդ | Գ |
| 14 | ժե | Զ | 14 | ժե | Ա | 14 | ժգ | Դ |
| 15 | ժդ | Է | 15 | ժդ | Բ | 15 | ժբ | Ե |
| 16 | ժգ | Ա | 16 | ժգ | Գ | 16 | ժա | Զ |
| 17 | ժբ | Բ | 17 | ժբ | Դ | 17 | ժ | Է |
| 18 | ժա | Գ | 18 | ժա | Ե | 18 | թ | Ա |
| 19 | ժ | Դ | 19 | ժ | Զ | 19 | ը | Բ |
| 20 | թ | Ե | 20 | թ | Է | 20 | է | Գ |
| 21 | ը | Զ | 21 | ը | Ա | 21 | զ | Դ |
| 22 | է | Է | 22 | է | Բ | 22 | ե | Ե |
| 23 | զ | Ա | 23 | զ | Գ | 23 | դ | Զ |
| 24 | ե | Բ | 24 | ե | Դ | 24 | գ | Է |
| 25 | դ | Գ | 25 | դ | Ե | 25 | բ | Ա |
| 26 | գ | Դ | 26 | գ | Զ | 26 | ա | Բ |
| 27 | բ | Ե | 27 | բ | Է | 27 | * | Գ |
| 28 | ա | Զ | 28 | ա | Ա | 28 | իթ | Դ |
| 29 | * | Է | 29 | * | Բ | 29 | իը | Ե |
| 30 | իթ | Ա | 30 | իթ | Գ | 30 | իէ | Զ |
| | | | 31 | իը | Դ | | | |

# ՏՕՒՄԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ

| ՅՈՒԼԻՍ | | | ՕԳՈՍՏՈՍ | | | ՍԵՊՏԵՄԲԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Օր ամսոյն | Եպակտք | Գիրք կիւրակէի | Օր ամսոյն | Եպակտք | Գիրք կիւրակէի | Օր ամսոյն | Եպակտք | Գիրք կիւրակէի |
| 1 | իզ | Է | 1 | իե · իդ | Գ | 1 | իգ | Զ |
| 2 | 25 · իե | Ա | 2 | իգ | Դ | 2 | իբ | Է |
| 3 | իդ | Բ | 3 | իբ | Ե | 3 | իա | Ա |
| 4 | իգ | Գ | 4 | իա | Զ | 4 | ի | Բ |
| 5 | իբ | Դ | 5 | ի | Է | 5 | ժթ | Գ |
| 6 | իա | Ե | 6 | ժթ | Ա | 6 | ժը | Դ |
| 7 | ի | Զ | 7 | ժը | Բ | 7 | ժէ | Ե |
| 8 | ժթ | Է | 8 | ժէ | Գ | 8 | ժզ | Զ |
| 9 | ժը | Ա | 9 | ժզ | Դ | 9 | ժե | Է |
| 10 | ժէ | Բ | 10 | ժե | Ե | 10 | ժդ | Ա |
| 11 | ժզ | Գ | 11 | ժդ | Զ | 11 | ժգ | Բ |
| 12 | ժե | Դ | 12 | ժգ | Է | 12 | ժբ | Գ |
| 13 | ժդ | Ե | 13 | ժբ | Ա | 13 | ժա | Դ |
| 14 | ժգ | Զ | 14 | ժա | Բ | 14 | ժ | Ե |
| 15 | ժբ | Է | 15 | ժ | Գ | 15 | թ | Զ |
| 16 | ժա | Ա | 16 | թ | Դ | 16 | ը | Է |
| 17 | ժ | Բ | 17 | ը | Ե | 17 | է | Ա |
| 18 | թ | Գ | 18 | է | Զ | 18 | զ | Բ |
| 19 | ը | Դ | 19 | զ | Է | 19 | ե | Գ |
| 20 | է | Ե | 20 | ե | Ա | 20 | դ | Դ |
| 21 | զ | Զ | 21 | դ | Բ | 21 | գ | Ե |
| 22 | ե | Է | 22 | գ | Գ | 22 | բ | Զ |
| 23 | դ | Ա | 23 | բ | Դ | 23 | ա | Է |
| 24 | գ | Բ | 24 | ա | Ե | 24 | * | Ա |
| 25 | բ | Գ | 25 | * | Զ | 25 | իթ | Բ |
| 26 | ա | Դ | 26 | իթ | Է | 26 | իը | Գ |
| 27 | * | Ե | 27 | իը | Ա | 27 | իէ | Դ |
| 28 | իթ | Զ | 28 | իէ | Բ | 28 | 25 · իզ | Ե |
| 29 | իը | Է | 29 | իզ | Գ | 29 | իե · իդ | Զ |
| 30 | իէ | Ա | 30 | 25 · իե | Դ | 30 | իգ | Է |
| 31 | 25 · իզ | Բ | 31 | իդ | Ե | | | |

# ՏՕՒՄԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

| Օր ամսոյ | Եպակտ նշանագիր | Կիրակէական գիր |
|---|---|---|
| 1 | իբ | Ա |
| 2 | իա | Բ |
| 3 | ի | Գ |
| 4 | ժթ | Դ |
| 5 | ժը | Ե |
| 6 | ժէ | Զ |
| 7 | ժզ | Է |
| 8 | ժե | Ա |
| 9 | ժդ | Բ |
| 10 | ժգ | Գ |
| 11 | ժբ | Դ |
| 12 | ժա | Ե |
| 13 | ժ | Զ |
| 14 | թ | Է |
| 15 | ը | Ա |
| 16 | է | Բ |
| 17 | զ | Գ |
| 18 | ե | Դ |
| 19 | դ | Ե |
| 20 | գ | Զ |
| 21 | բ | Է |
| 22 | ա | Ա |
| 23 | * | Բ |
| 24 | իթ | Գ |
| 25 | իը | Դ |
| 26 | իէ | Ե |
| 27 | իզ | Զ |
| 28 | 25 · իե | Է |
| 29 | իդ | Ա |
| 30 | իգ | Բ |
| 31 | իբ | Գ |

## ՆՈՅԵՄԲԵՐ

| Օր ամսոյ | Եպակտ նշանագիր | Կիրակէական գիր |
|---|---|---|
| 1 | իա | Դ |
| 2 | ի | Ե |
| 3 | ժթ | Զ |
| 4 | ժը | Է |
| 5 | ժէ | Ա |
| 6 | ժզ | Բ |
| 7 | ժե | Գ |
| 8 | ժդ | Դ |
| 9 | ժգ | Ե |
| 10 | ժբ | Զ |
| 11 | ժա | Է |
| 12 | ժ | Ա |
| 13 | թ | Բ |
| 14 | ը | Գ |
| 15 | է | Դ |
| 16 | զ | Ե |
| 17 | ե | Զ |
| 18 | դ | Է |
| 19 | գ | Ա |
| 20 | բ | Բ |
| 21 | ա | Գ |
| 22 | * | Դ |
| 23 | իթ | Ե |
| 24 | իը | Զ |
| 25 | իէ | Է |
| 26 | 25 · իզ | Ա |
| 27 | իե · իդ | Բ |
| 28 | իգ | Գ |
| 29 | իբ | Դ |
| 30 | իա | Ե |

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

| Օր ամսոյ | Եպակտ նշանագիր | Կիրակէական գիր |
|---|---|---|
| 1 | ի | Զ |
| 2 | ժթ | Է |
| 3 | ժը | Ա |
| 4 | ժէ | Բ |
| 5 | ժզ | Գ |
| 6 | ժե | Դ |
| 7 | ժդ | Ե |
| 8 | ժգ | Զ |
| 9 | ժբ | Է |
| 10 | ժա | Ա |
| 11 | ժ | Բ |
| 12 | թ | Գ |
| 13 | ը | Դ |
| 14 | է | Ե |
| 15 | զ | Զ |
| 16 | ե | Է |
| 17 | դ | Ա |
| 18 | գ | Բ |
| 19 | բ | Գ |
| 20 | ա | Դ |
| 21 | * | Ե |
| 22 | իթ | Զ |
| 23 | իը | Է |
| 24 | իէ | Ա |
| 25 | իզ | Բ |
| 26 | 25 · իե | Գ |
| 27 | իդ | Դ |
| 28 | իգ | Ե |
| 29 | իբ | Զ |
| 30 | իա | Է |
| 31 | 19 · ի | Ա |

Գործածութիւն աղիւսակին վերադրացն ըստ նոր տումարի ։

ՄԿԵ. Յետ այսու օրինակաւ դասաւորելոյ յաստղանիշ Թուոյ՝ որ դնի փոխան 30 նոյ մինչև 'ի 1 'ի ստորեն՝ կարգեալ յետադարձ կարգաւ, ցուցանի գործածութք սորա՝ թէ ցորչափ զհետ գայ կանխութիւն ծննդեան լուսնի ընդ բազում աւուրս. որով երևի միջոցն բառնալոյ զայս երկրորդ վրիպակ ։

Արդ՝ ծնունդ լուսնի որպէս ասացաք 'ի վերոյ (մխը̄), ընդ ամենայն միջոցս ժամանակի անցանելոյ 'ի նիկիոյ 'նը ժողովոյն, մինչև ցայժմ յառաջ շարժեալ է, հինգ աւուրբք փաղաութբ՝ դէպ 'ի սկիզբն ամսոյն ։ Աւստի 'ի նորոգութեն տումարադրի սահմանեցին, զի՝ այն ծնունդ լուսնին՝ որ անկանէր առ ժամանակօք նիկիոյ ժողովոյն 'ի հինգերորդ աւուր յունվարի, փոխադրեսցի յառաջին աւուրն նոյն ամսոյն. կամ այն՝ որ անկանէր 'ի վեցերորդ աւուր յունվարի, փոխադրեսցի յերկրորդ օր նոյն ամսոյն՝ հինգ աւուրբք յառաջ դէպ 'ի սկիզբն ամսոյն ։

ՄԿԶ. Քանզի ըստ միջական հաշուի աստեղագիտաց՝ 'ի միջոցի անցանելոյ 312 ամաց և կիսոյ, ծնունդ լուսնի աւուրբ միով վաղ հասանէ դէպ 'ի սկիզբն ամսոյն ։ Աւստի ըստ կարգի վերադրաց դասաւորելոց 'ի ստորեւ՝ 'ի միոյ մինչ 'ի յերեսունն, յորժամ յայս նիշ ամի վերադիրն 24 'ի յունվարի ցուցանէր զօր ծննդեան լուսնի, զկնի անցանելոյ 312 ամաց և կիսոյ, 25 վերադիրն 'ի նոյն ամսեան ցուցանէ զօր ծննդեան լուսնի. սոյա զկնի անցանելոյ այլ ևս 312 ամաց և կիսոյ՝ փոխադրի վերադիրն այլ ևս 'ի վեր կոյս 'ի 26 նոյն ամսոյն. որ և ցուցանէ այնուհետև զօր ծննդեան լուսնի. և ըստ այսմ մինչև 'ի սկիզբն ամսոյն յունվարի 'ի 28 վերադիրն փոխադրի՝ յետ անցանելոյ այլևս 312 ամաց և կիսոյ ։

ՄԿԷ. Առ այս վախճան ըստ նոր տումարին կազմեցաւ ընդարձակ Աղիւսակ մի (ա̄) վերադրաց՝ ընդ իննևտասներեկաց կամ ոսկեգրոց եդելոց 'ի գլուխ աղիւսակին ։ Կարգեալ 'ի նմին երեսուն շարս իննևտասն վերադրաց. որպէս զի որ կարգն վերադրաց ըստ ոսկեգրոցն գտցի համեմատ ընթացից լուսաւորացն ,

նոյնն առցի 'ի ցուցանել զծնունդ լուսնի 'ի նմին դարու, որ լինի առանց ինչ երևելի փոփոխութե՛։ Օ՝աղիւսակէ աստի համառօտիւ ունիմք խօսիլ։

# ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԸՆԴԱՐՁԱԿ
## ԱՂԻՒՍԱԿԻ ՎԵՐԱԴԻՐԱՑ

ճկը. Յառաջին տեղւոջ 'ի գլուխ ընդարձակ աղիւսակի վերադրաց, գոյ կարգ իմն ինննևտասներեկաց, կամ՝ ոսկեգրոց, որ սկսանի նախ 'ի գ Թուոյ ոսկեգրի շրջանին։ Իւրաքանչիւրք 'ի Թուոցս այսոցիկ ոսկեգրոց ունին 'ի ներքոյ իւրեանց զգաւազան մի, որ համեմատ գտանի նոցին 'ի վերուստ մինչ 'ի ստորև։

Գաւազանքս այսոքիկ բաժանեալք 'ի յերեսուն խորշս 'ի ձեռն կողմնական գծից, ձևանան երեսուն կարգ ինննևտասանց Ոսկեգրոց ըստ իւրաքանչիւր խորշից. և 'ի նոսա Վերադիրքն այնու օրինակաւ եդեալ կան յիւրաքանչիւր գաւազանսն, զի 'ի ներքոյ Ոսկեգրոց կամ ինննևտասներեկաց դնին ըստ բնական Թուոյ կարգի իւրեանց 'ի միոյ մինչև յերեսունն։ Յետ որոյ դառնան 'ի սկիզբն անդր, և հաշուին 'ի միոյ 1. որպէս զի վերադիրք շրջան արասցեն այսու՝ շարունակեալ յերեսուն Թուոց։

ճկթ. Բայց նոքին՝ որք են 'ի մի և 'ի նոյն կարգէ՝ 'ի ձախմէ դէպ 'ի յաջն գնան աճելով միշտ մետասան Թուովք, այս է՝ իւրաքանչիւրն կազմի 'ի նախընթացէ իւրմէ յաւելմամբ 11 Թուոց։ Եւ բարձմամբ 'ի 30 Թուոյն յամենայն նուագի, յորժամ հասանեն յայն, կամ առաւելուն քան զ30։ Բայց 'ի նոցանէ՝ որք են ընդ ա ոսկեգրով, ոչ վերածին յաւելմամբ 11 Թուոյ, այլ մանաւանդ յաւելմամբ 12 Թուոյ. զի յաջորդեն յետ վերջին ԺԹ ոսկեգրոյն։

ճհ. Ըստ այսմ առաջին գաւազանն ընդ Ոսկեգրով գ, վերադիրն 1 գրեալ զառաջին խորշն 'ի ստորէ. յետոյ ելանելով 'ի վեր գտանի վերադիրն 2. ապա 3. 4. 5. և այլն. մինչև 'ի վեր 'ի վերջինն՝ որ ունի *։ Յերկրորդ գաւազանն ընդ դ ոսկեգրով, գրեալ զառաջին տեղին 'ի ստորէ վերադիրն 12. որ առաւելու

11 թուով 'ի վերայ նախընթացին իւրոյ՝ 1 թուոյն. անտի ելանելով 'ի վեր, գան վերադիրքն 13. 14. 15. և այլն: Երրորդն ընդ ե ոսկեգրով է վերադիրն 23 'ի ստորէ. որ առաւելու 11 թուով 'ի վերայ նախընթացին իւրոյ 12 թուոյն. անտի ելանելով 'ի վեր 24. 25. 26. և այլն: 'Ի չորրորդ գաւազանն ընդ զ ոսկեգրով՝ է վերադիրն 'ի ստորէ 4. արտադրեալ յաւելմամբ 11 'ի վերայ նախընթացին իւրոյ 23 թուոյն, և բարձմամբ 30 թուոյն. անտի ելանելով 'ի վեր 5. 6. 7. և այլն: ըստ այսմ և այլք՝ որք հետևեն:

Բայց 'ի գաւազանն ութուտասան ընդ ա ոսկեգրով՝ գրեալ է զառաջին տեղին 'ի ստորէ՝ վերադիրն 9. արտադրեալ յաւելմամբ 12 թուոյ 'ի վերայ նախընթացին իւրոյ՝ որ 'ի ձախմէ 27. և բարձմամբ 30 թուոյ, որով միայ 9. զնոյն է տեսանել յամենայն թիւս 'ի նմին գաւազանի:

Մհտ. Հուսկ յետոյ է գաւազան մի (ա̄) 'ի ձախմէ առաջին քան զամենեսին, որ 'ի յերեսուն կարգս՝ ընկղեալ 'ի ստորէ, պարունակէ զերեսուն այլ և այլ տառս Այբուբենից (*), այս է՝ Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Հ. Ձ. Ղ. Ճ. Մ. Յ. Ն. Շ. Ո. Չ. Պ. Ջ. Ռ. Ս. Վ. դասաւորեալ այնպիսի կարգաւ, որ սկսեալ յառաջին գլխագիր Ա տառէն, որ դնի 'ի ստորին խորշն վերջին, շարունակին այլք ելանելով 'ի վեր ըստ բնական կարգի իւրեանց, (Բ. Գ. Դ. և այլն.) մինչև 'ի վերջին Վ գլխագիրն, որ գրեալ է զառաջին խորշն 'ի վերուստ. և այսու օրինակաւ իւրաքանչիւր տառ համեմատի կարգի միոյ իննևտասան Վերադրաց՝ որք են յաջմէ 'ի նոյն կարգի. որոյ վասն կոչին սոքա Ցուցակք. որպէս տառն Ա է ցուցակ վերջին կարգի, որ 'ի ձախմէ գնայ յաջն. 1. 12. 23. 4. 15. 26. 7. 18. 29. 10. 21. 2. 13. 24. 5. 16. 27. 9. 20: Տառն Բ՝ որ զհետ գայ, է ցուցակ վերջընթեր կարգի. 2. 13. 24. 5. 16. 27. 8. 19. *. 11. 22. 3. 14. 25. 6. 17. 28. 10. 21:

(*) Վասն սակաւութեան թուոյ այբուբենից 'ի լեզու լատինացւոց, կրկնին նոյն տառք. նախ՝ սկսեալ 'ի ստորէ՝ յայբէ a. մինչև 'ի ու u: Երկրորդ՝ 'ի միջին տեղւոյ յայբ գլխագրէ մինչև 'ի փէ. P: Այլ 'ի մեր լեզու ըստ բազմութեան թուոյ այբուբենից՝ առանց ինչ ընդդիմութեան կարէ շարունակել 'ի գլխագիր Այբէ, մինչև 'ի Վ գլխագիր:

Ըստ այսմ և գլխագիրն Վ. է ցուցակ առաջին կարգի 'ի վերուստ. *. 11. 22. 3. 14. 25. և այլն: Իսկ գլխագիրն Շ. է ցուցակ կարգին. 23. 4. 15. 26. և այլն: ըստ այսմ և այլք:

*Բացատրէ և նոյն՝ ընդարձակ Աշխատասէրն վերադրաց:*

ՄՆԲ. Մինչ ասել՝ թէ Ոսկեգիրք գնին 'ի գլուխ աղիւսակին, առ 'ի տալ ճանաչել՝ թէ վերադիրք համեմատեալ նոցուն յիւրաքանչիւր կարգս՝ ունին զշրջանս իւրեանց 'ի նմին ամի, որոյ են Ոսկեգիրք: Ըստ այսմ՝ քանզի յամի տն 1681, ոսկեգիրն է Ժ. (ըստ լատ.) վերադիրն ևս է 10, 'ի կարգս եօթնուտասն դարուն՝ ընդ ցուցակաւ Շ. և վերադիրն 21 է 'ի յաջորդ ամին 1682. քանզի գտանի 'ի նմին ցուցակի Շ, ընդ ԺԱ ոսկեգրով. ըստ այսմ և այլք: Իսկ զի՞ր օրինակ՝ ոսկեգիրն ԺԱ, յառաջէ միշտ 'ի հին տումարի քան զոսկեգիրն Ժ մետասան աւուրբք. սոյնպէս վերադիրն 21 'ի նոր տումարի յառաջէ մետասան կայիւք քան զվերադիրն 10. վասն մետասան թուոյ յաւելլոյ 'ի վերայ տասինն, որով լինի 21. և այս վասն յետադարձ դրութեան վերադրաց 'ի տումարագիրս:

ՄՆԳ. Իսկ 'ի ստուգիւ ամենայնի այսորիկ՝ ճանաչի թէ վասն որո՞յ պատճառի վերադիրք յիւրաքանչիւր կարգի են վերածեալք յաւելմամբ մետասան թուոց քան զնախընթացն իւր. և թէ վերադիր անուն ընծայի թուոցս այսոցիկ, զի ցուցանեն յիւրաքանչիւր ամի զթիւ աւուրց, որովք տարբերի ամն արեգական քան զամն լուսնական:

## ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՔ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԴՐԱՑ:

### Աղիւսակ (հաւասարութե՛) ընթացից արևու ընդ լուսնի:

ՄՆԳ. Ոչ այլ ինչ մնայ առ այժմ, բայց միայն զայն՝ որ պարունակի յաղիւսակի աստ (հաւասարութէ) ընթացից երկուց լուսաւորացս: Կազմեցաւ սա առ դիւ-

բաւ ճանաչելոյ, թէ զո՛ր կարգ պարտ իցէ առնուլ վասն պէսպէս ժամանակի ։ Այս աղիւսակ ունի զչորս գաւազանս լի թուանշանօք, որ կարեն տեւել ընդ յամայր ամս ։

Յառաջին գաւազանին 'ի ձախմէ դնին նոյն տառք Այբուբենից, որք նշանակեալ կան յընդարձակ աղիւսակի վերադրաց՝ (մհա) ընդ անուամբ Ցուցակի կարգի վերադրաց. թէպէտ ո՛չ դնին յաղիւսակի աստ նորին կարգաւ, որպէս յընդարձակ աղիւսակի անդ ։

մհե. Յերկրորդ գաւազանին բովանդակին ամք տն. այնպէս զի յետ առաջին ամի տն, յաջորդէ 320. որ է իբր ժամանակն Նիկիոյ ժողովոյն, յորժամ (որպէս ասի) աստեղագէտք Աղեքսանդրեայ կարգեցին 'ի տումարագիրս զՈսկեգիրն, կամ որ նոյն է զԻննեւտասներեակն ։ Ապա դնին ամք 500. 800. 1100 ։

Ապա յետ ժամանակաց ինչ՝ յորում գրի այս բան՝ (Յետ հատանելոյ զաւուրս տասն.) դնի ամն նորոգութե̄ տումարագրի, 1582. այլեւս դնին 1600. 1700. 1800. եւ այլ հարիւրաւոր ամք, եւ յաջորդ դարք ։

մհզ. Յերրորդ գաւազանին դնին նշանք ամաց Նահանջից, որք յաղիւսակի աստ նշանակին հանդէպ 320. 500. 800. եւ 1100. ամաց, որք յառաջ քան զնորոգութիւն տումարագրին. վասն զի յայնժամ ամենայն ամք դարադլուխք էին Նահանջք ։ Բայց յետ նորոգութե̄ ո՛չ տեսանին, եթէ ո՛չ 'ի տեղիս տեղիս հարիւրաւոր ամաց. որք 'ի բաժանիլն ճշդիւ 400 ով՝ մնան առանց յաւելուածոյ ինչ. զո՛ր օրինակ են 1600. 2000. 2400. 2800. 3200. եւ այլն. որք են միայն Նահանջք 'ի մէջ հարիւրաւորաց. մնալով այլոց աննահանջ՝ իբրեւ զհասարակ ամս. որք 'ի բաժանիլն 400 ով, մնան յաւելուածք ինչ, զո՛ր օրինակ են 1700. 1800. 1900. 2100. 2200. եւ այլն ։

մհէ. Չորրորդ գաւազանն պարունակէ զնշան ☾ լուսնի ամացն, յորս առնի հաւասարութի̄ լուսնական ընթացից ։ Ուր դնի միակ ☾՝ յամենայն նուազի առնի հաւասարութիւն 'ի լրանալ 300 ամաց ։ Իսկ ուր դնի կրկին՝ առնի հաւասարութի̄ յետ 400 ամաց ։ Որպէս տեսանի յաղիւսակի անդ ։

| | Ամ Տն : | | |
|---|---|---|---|
| ՃՀԸ. | 1 | | |
| Վ | 320 | նահանջ | |
| Վ | 500 | նահանջ | |
| Ա | 800 | նահանջ | |
| Բ | 1100 | նահանջ | |

Յետ հաստատելոյ զաւուրս տասն :

| | | | |
|---|---|---|---|
| ՃՀԹ. Շ | 1582 | | |
| Շ | 1600 | նահանջ | |
| Ն | 1700 | | |
| Ն | 1800 | . . . | ☾☾ |
| Յ | 1900 | | |
| Յ | 2000 | նահանջ | |
| Յ | 2100 | . . . | ☾ |
| Մ | 2200 | | |
| Ճ | 2300 | | |
| Մ | 2400 | նահանջ | ☾ |
| Ճ | 2500 | | |
| Ղ | 2600 | | |
| Ղ | 2700 | . . . | ☾ |
| Ղ | 2800 | նահանջ | |
| Ձ | 2900 | | |
| Ձ | 3000 | . . . | ☾ |
| Հ | 3100 | | |
| Հ | 3200 | նահանջ | |
| Հ | 3300 | . . . | ☾ |
| Կ | 3400 | | |
| Ծ | 3500 | | |
| Կ | 3600 | նահանջ | ☾ |
| Ծ | 3700 | | |
| Խ | 3800 | | |
| Խ | 3900 | . . . | ☾ |
| Խ | 4000 | նահանջ | |
| Լ | 4100 | | |
| Ի | 4200 | | |

| | | | |
|---|---|---|---|
| Ի | 4300 | . . . | ☾☾ |
| Ի | 4400 | նահանջ | |
| Ժ | 4500 | | |
| Ժ | 4600 | . . . | ☾ |
| Թ | 4700 | | |
| Թ | 4800 | նահանջ | |
| Թ | 4900 | . . . | ☾ |
| Ը | 5000 | | |
| Է | 5100 | | |
| Ը | 5200 | նահանջ | ☾ |
| Է | 5300 | | |
| Զ | 5400 | | |
| Զ | 5500 | . . . | ☾ |
| Զ | 5600 | նահանջ | |
| Ե | 5700 | | |
| Ե | 5800 | . . . | ☾ |
| Դ | 5900 | | |
| Դ | 6000 | նահանջ | |
| Դ | 6100 | . . . | ☾ |
| Գ | 6200 | | |
| Բ | 6300 | | |
| Գ | 6400 | նահանջ | ☾ |
| Բ | 6500 | | |
| Ա | 6600 | | |
| Վ | 6700 | | |
| Ա | 6800 | նահանջ | ☾☾ |
| Վ | 6900 | | |
| Ս | 7000 | | |
| Ս | 7100 | . . . | ☾ |
| Ս | 7200 | նահանջ | |
| Ր | 7300 | | |
| Ր | 7400 | . . . | ☾ |
| Ք | 7500 | | |
| Ք | 7600 | նահանջ | |
| Ք | 7700 | . . . | ☾ |
| Պ | 7800 | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Զ | 7900 | · · · | | | Յ | 9000 | | |
| Գ | 8000 | նահանջ | ☾ | | Մ | 9100 | | |
| Զ | 8100 | | | | Մ | 9200 | նահանջ | |
| Ո | 8200 | | | | Մ | 9300 | · · · | ☾☾ |
| Ո | 8300 | · · · | ☾ | | Ճ | 9400 | | |
| Ո | 8400 | նահանջ | | | Ղ | 9500 | | |
| Հ | 8500 | | | | Ճ | 9600 | նահանջ | ☾ |
| Հ | 8600 | · · · | ☾ | | Ղ | 9700 | | |
| Ն | 8700 | | | | Ջ | 9800 | | |
| Ն | 8800 | նահանջ | | | Ջ | 9900 | · · · | ☾ |
| Ն | 8900 | · · · | ☾ | | Ջ | 10000 | նահանջ | |

### Գործածութիւն աղիւսակիս հաստատութեան վերադրաց ։

ՃԶ. Յայտ դիւրին է գործածութիւն աղիւսակիս այսորիկ, որովհետեւ տառք Ա. յերեսնից ցուցանեն թէ այն կարգ վերադրաց՝ որք դնին յընդարձակ աղիւսակի՝ վասն Յուցակի այս ինչ դարու, պարտի ծառայել ընդ բոլոր դարն այն՝ ընդ որում ունի համեմատութիւն։ Որպէս տառն Հ. որ է հանդէպ 1600 տարւոյ, ցուցանէ թէ ընդ բոլոր եօթնուտասներորդ դարն՝ որ սկսանի յայնմ ամի, պարտի ծառայել կարգի վերադրացս, 23. 4. 15. 26. 7. 18. 29. և այլն։ որոց հանդէպ է տառն Հ. ըստ Յուցակի եդելոյ յընդարձակ աղիւսակի վերադրաց։ Նոյնպէս տառն Ն. որ է հանդէպ ամաց 1700. 1800, ցուցանէ թէ կարգն վերադրաց 22. 3. 14. 25. 6. և այլն. որոց ցուցակն է Ն տառն, լիցի ՚ի գործածութեան երկուց դարուց. այսինքն՝ ութուտասներորդ և իննուտասներորդ դարուց. ըստ այսմ իմա և զայլս ։

### Պատճառ կազմութեան Աղիւսակիս ։

ՃԷ. Առ ՚ի բարւոք իմանալ զկազմութիւն Աղիւսակիս, և զպատճառս պէսպիսութեան՝ որ տեսանի ՚ի տառսն և ՚ի նշանսն, հարկ է ՚ի միտ առնուլ. թէ նպատակ այսր աղիւսակի է տալ ճանաչել ՚ի ձեռն կարգաց վերադրաց, թէ որք են ՚ի տումարագիրս ամուրք՝ յորս անկանին ծնունդք լուսնի, և յորոց զհետ

դան փոփոխութիք՝ որք պատահեն առ հարկի հաւա-
սարել երբեմն երբեմն զընթացս արեգական և լուսնի։
Առ որոյ որպէս 'ի կարգէ Զուգակաց երևի յընդար-
ձակ աղիւսակի Վերադրոց, թէ որն 'ի կարգաց ա-
տի պարունակէ զվերադիրսն, որք 'ի տումարագիրս են
միով տեղեաւ Վերին՝ քան զնորա առ ընթեր կարգն,
որ է անմիջապէս ստորև նորա. որպէս կարգն վերադ-
րոց՝ Կ, է Վերին քան զԳ՝ որ է ստորև նորին։

մծբ. Այսպէս դիւրաւ ճանաչի, թէ 'ի հաւասա-
րելն զընթացս արեգական 'ի պատճառս բարձման միոյ
աւուր Նահանջի, իջանէ ծնունդ լուսնի միով տեղեաւ
դէպ 'ի վերջ ամսոյն, յորմէ հարկ լինի կարգել զայն
կարգ վերադրոց յընդարձակ աղիւսակի անդ (ա), որ
անմիջապէս լիցի Ստորև քան զնախընթաց կարգն, որ
էր 'ի գործածութե յառաջընթաց ամին։

Ընդ հակառակն առնուլ պարտ է զՎերին կարգն
վերադրոց յընդարձակ աղիւսակէ անտի, յորժամ դէպ
լինի հաւասարելոյ զօր ծննդեան լուսնի. որպէս զի
յառաջեսցի միով տեղեաւ դէպ 'ի սկիզբն ամսոյն։

մծգ. Սակայն որպէս յայտ է ամենեցուն, թէ յա-
ռաջ քան զնորոգութիւն տումարին, ոչ է արարեալ
(հաւասարութի) իմն ընթացից՝ ոչ արեգական, և ոչ
լուսնի. և թէ առ 'ի բառնալ զանտեղութիւնս պատ-
ճառեալս 'ի զանցառութէ հաւասարելոյ զընթացս ա-
րեգական, սահմանեցաւ՝ զի միանգամայն 'ի նմին ամի
բաւական լիցի հատանել զաւուրս տասն։ Արդ վասն
յայտնապէս տեսանի, զի եթէ ոչ լինէր առնել զայլ
հաւասարութի իմն, բայց եթէ արեգական եւեթ, ոչ
էր հարկ առնել զայլ ինչ, բայց եթէ նշանակել զամս
հարիւրաւորս յետ նորոգութեն տումարին, և 'ի կար-
գի դնել մի և նոյն կանոնաւ, որք են յերրորդ գաւա-
ղանի աղիւսակին, դնելով նշանս Նահանջի հանդէպ նո-
ցին, որք կարեն բաժանիլ ճշդիւ 400 թուով. վասն
նշանակելոյ՝ թէ յամն յայնոսիկ յորս դնի Նահանջ.
ոչ լինի առնել (հաւասարութի) իմն արեգական, այլ
ճիշդ ըստ բնական թէութե իւրեանց մնան նահանջք.
իսկ ուր ոչ դնիցի նշանք ինչ հանդէպ այլոց դարուց,
ցուցանի թէ յամն յայնոսիկ հարկ լինի առնել (հա-
ւասարութիւն) ընթացից արեգական, վասն ոչ առնե-
լոյն Նահանջ 'ի դարագլուխս անդ։ Աւասի և պարտ է

առնուլ զայն կարգս վերադրաց յընդարձակ աղիւսակէ (ա͞), որք գան անմիջապէս 'ի ստորև նորա. որպէս ցուցանեն Տառքն. որ ծառայէր յառաջ քան (զհաւասարութիւն) ընթացից արևուն:

ՃՁԴ. Սակայն որպէս բաց 'ի հաւասարութ͞է ընթացից արեգական, հարկ եղև ուղղել ևս զվերիպակն, որ էր 'ի ներքս մտեալ վասն զանցառութ͞ե հաւասարելոյ զընթացս լուսնի. վասն այնորիկ պատշաճ եղև դիմել առ սկիզբն, և վերստին դառնալ յամն՝ յորս սկիզբն կալաւ վերիպակն. այս է՝ յորժամ սկսաւ ունել գործածութիւն Ոսկեգրոյն, որ եղև իբր 320 ամաւ յառաջ 'ի ժամանակի Նիկիոյ ս͞բ ժողովոյն. որոյ վասն յաղիւսակի անդ կարգեցաւ տառն Վ: Վասն զի այս է Ցուցակ այնմ կարգի վերադրաց, որք յայնմ ժամանակի նշանակէին զծնունդ լուսնի. (եթէ էր այն 'ի գործածութեան). Թէպէտ 'ի տումարի անդ նոցա գրաւէին զնոյն տեղիս, յորս էին նշանակեալ Ոսկեգիրք համեմատ աւուրց ծննդեան լուսնի. և էին կարգեալ այնպիսի օրինակաւ, որք 'ի նմին ժամանակի ըստ բաւականին ճշդութեամբ ցուցանէին զընթացս ծննդեան լուսնի:

ՃՁԵ. Գտաւ ապա տեսեալ 'ի վերոյ՝ թէ շարժման լուսնի հարկ 'ի վերայ կայր հաւասարելոյ զընթացսն 'ի միջոցի 312 ամաց և կիսոյ, որովհետև յետ այնչափ միջոցի ժամանակաց ծնունդ լուսնի հասանէր միով աւուրբ երագութ͞բ քան զսովորականն. վասն այնորիկ յայտ իսկ է, թէ յառաջին ամի տ͞ն մերոյ, հարկ էր հասանել միով աւուրբ յամի քան զայն՝ յոր հասանէր յամին 320, առ ժամանակօք Նիկիոյ ս͞բ ժողովոյն: Սատի եթէ կամք էին մինչև 'ի ժամանակէ անտի 'ի կիր առնուլ զվերադիրս, հարկ լինէր առնուլ 'ի կարգէ անտի վերադրաց, որ միով տեղեաւ ստորև իցէ քան զՎ տառն. այսինքն՝ առնուլ զայն կարգ՝ որ ունի Ցուցակ զտառն Ս: Որոյ վերադիրք ամենայն են 'ի տումարադիրս միով աւուրբ ստորև քան զայլ կարգի վերադիրս:

ՃՁԶ. Յամի տ͞ն 1582. 'ի նորոգել զտումարն՝ միանգամայն 'ի միում նուագի արարաւ մեծագոյն (հաւա-

սարութի ) ընթացից արեգական , հատանելով զաւուրս տասն . յորմէ զհետ գայ՝ թէ ծնունդք լուսնի հասանէին ցայնչափ աւուրս Ստորև յոյժ դէպ 'ի վերջ ամսոցն . ուստի որպէս զի հասանիցեն ցայն վայր ( հաւասարութեն ) , պատշաճ եղև առ այս վախճան առնուլ զմի այլ կարգ վերադրաց , որ իցէ տասն տեղեաւ Ստորև քան զայն՝ որ ընդ ցուցակաւ Գ ։ և գոլով կարգն այն ընդ Հ տառիւ տասներորդաւ , ստորին քան ըզտառն Գ . որպէս տեսանի 'ի կարգի տառիցն . Գ . Բ . Ա . Վ . Ս . Ռ . Ջ . Պ . Չ . Ո . Հ . վասն այն տառն Հ եդեալ կայ հանդէպ 1582 ամին ։

մէ . Յաջորդեն ապա այլ ամք դարուց , յորս ըստ երկաքանչիւր ( հաւասարութեանց ) կան զետեղեալ 'ի կարգի իւրեանց նշանօք ։ Իբր զօր օրինակ յառաջին դարուն յետ նորոգութե տումարին . այս է՝ 1600 . ո՛չ եղև հաւասարութիւն ինչ , ո՛չ արեգական՝ զի էր նահանջ . և ո՛չ լուսնի՝ զի 300 ամն ո՛չ էր տակաւին անցեալ 'ի վերջին հաւասարութէ անտի արեգական , որ արարաւ ։ Ուստի թողաւ նոյն կարգ վերադրաց ընդ տառիւն Հ առանց ինչ փոփոխութե . ( մհթ ։ )

մձը . Բայց քանզի յամին 1700 եղև ( հաւասարութիւն ) ընթացից արեգական՝ բարձմամբ նահանջ աւուրն , հարկ էր վասն այնորիկ առնուլ զմի այլ կարգ վերադրաց 'ի ստորէ . այս է՝ զայն որոյ Ցուցակն է Ն ։ Սոյնպէս յամի տն 1800 . յորում լինէին երկաքանչիւր ( հաւասարութիւնք ) , վերստին ունի զնոյն տառն Ն ։ ( մհթ ) Զի աննահանջ գոլով այս ամ, հարկ 'ի վերայ կայր առնուլ զայն կարգ վերադրաց , որ իցէ Ստորև քան զառաջնոյ ամի տառն ։ Բայց քանզի լուսնի ծնունդն յառաջին ամաց անտի միով աւուրբ յառաջացեալ էր դէպ 'ի վեր 'ի սկիզբն ամսոյն , մի և նոյն կարգ վերադրաց անցեալ ամին Ցուցակաւ Ն՝ շարունակի ։

մհթ . Յամ 1900 առնու զտառն ստորին Յ . պատճառաւ միայն հաւասարելոյ զընթացս արևուն , յորում ամի մնայ աննահանջ . և նոյն Յ ծառայէ նաև վասն այլոց երկուց յաջորդ դարուց 2000 . և 2100 ։ Վասն զի յամի տն 2000 ո՛չ լինի ( հաւասարութիւն ) . և ընդ հակառակն 2100 ամին լինին երկաքանչիւր ( հաւասա-

բութիւնք ) ըստ այսմ և այլ ամենայն մնացեալք , որք զհետ գան . ( մհթ ։ )

մդ. Այս ամենայն ասացեալքս ամփոփին 'ի յաջորդ կանոնադրութիւնս ։

ա. Յորժամ 'ի հարիւրերորդ ամն ինչ բառնի նահանջ օրն , և լուսնական ամն չունիցի պէտս ( հաւասարութեան ), տառն վերադրաց 'ի Ստոր իջանէ , և միով նուազի ։

բ. Յորժամ 'ի հարիւրերորդ ամն անդ ոչ բառնի նահանջ օրն . այլ ընդ հակառակն՝ հարկ լինի ( հաւասարութեան ) լուսնական ամին . տառն վերադրաց ելանէ 'ի վեր , և աճի միութեամբ ։

գ. Յորժամ բառնի նահանջ օրն , և լուսնական ամն պէտս ունի ( հաւասարութե ), մի և նոյն վերադրաց Տառն պահի ։ Նոյնն գիտի՝ եթէ ոչ բարձցի նահանջ օրն . և ոչ լուսնի հարկ լիցի ( հաւասարութե ) ։

Այսու կանոնադրութեամբ նոր տոմարագրին, գիտելին լինի փոփոխութիւն վերադրաց՝ ըստ պահանջելոյ դարուցն ( հաւասարութիւնս ) առնելով . և ոչ եթէ ըստ հին տոմարին մի և նոյն վերադիրս անընդհատ 'ի գործ ածել ընդ ամենայն դարս . որովք 'ի գիտ Զատկաց և այլոց տօնից շարժականաց վրիպակս գործել ոչ սակաւ ։

Կանոն գտանելոյ զկարգ վերադրաց յայս ինչ ամի ։

մե. Ըստ լուծման առաջարկութեանս , հարկ է բառնալ զաւուրս կանխութե կամ յառաջնութե լուսնի . 'ի յետամնայութէ աւուրց արեգական դէպ 'ի վերջ ամսոց ։ Իսկ զի որ օրինակ ( հաւասարութի ) արևուն ոչ ընթանայ միօրինակ , բայց եթէ սկսեալ 'ի 1700 ամէ . նոյնպէս և լուսնական ( հաւասարութիւն ) սկսանի 'ի 1900 ամէ . վասն այնորիկ 'ի հետագայ յաջորդ դարսն , հարկ է առնել օրինակաւս՝ որ զկնի ։

Այս ( հաւասարութեան ) արևուն բաժանելի է 4 թուով զհարիւրաւորս ամաց , բառնալով նախ յայնց զթիւ 16 . ( թողլով միշտ 'ի բաց զտասնաւորն՝ որ յետ հարիւրաւորին ) ։ Իսկ բազմապատկի քանորդն 'ի ձեռն 3 թուոյ . որոյ արտադրեալն համդերձ յաւելուածովն 'ի բաժանմանէ լինի թիւ աւուրց յետամնայութե յա-

զխուսակի վերադրոց վասն հաւասարելոյ զընթացս ա-
րեգական ։

Երկրորդ՝ վասն (հաւասարութե՛) լուսնի յետ բառ-
նալոյ 'ի հարիւրաւոր թուոյ անտի զթիւ 18, բաժա-
նեա՛ զմնացեալն զայն 25 թուով. և զքանորդն բա-
ժանման բազմապատկեա՛ 8 թուով. և 'ի յարտադրեալն
անդ յաւե՛լ զթիւ երրեակ մասինն պարունակելոյ 'ի
մնացորդն 15, որ մնայ յետ բառնալոյ զթիւն 18 'ի հա-
րիւրաւոր թուոյ անտի. որ և տայ զաւուրս կանխու-
թե՛ կամ յառաջնութե՛ լուսնի դէպ 'ի սկիզբն ամսոյն ։
Եթէ առաջարկեալ ամն իցէ յետ քնի, բա՛րձ 'ի հաւա-
սարութե՛ արեգական զթիւ 2. նոյնպէս և զթիւ հա-
ւասարութե՛ լուսնի բա՛րձ անտի՝ զի՛նչ թիւ և իցէ այն ։

Ապա զմնացեալն 'ի նոյսմանէ հա՛ն միշտ 'ի 22 թուոյ.
ուր 'ի վերջոյ յաւելեալն ցուցցէ քեզ զթիւ Տառի այբու-
բենիցն նշանակելոց յընդարձակ (ա̄) աղխուսակի վե-
րադրոց, հաշուելով 'ի ստորէ յառաջնոյն Ա տառէ.
որ եղիցի անվրէպ Ցուցակ կարգի վերադրոց, որ
խնդրի ։

Օրինակ. ա̄ ։

մղբ̄. Առաջարկի աստ ամն 25824 զկնի թուակա-
նին քնի, (թողլով միշտ 'ի բաց զայն՝ որ յետ հարիւրա-
ւորի, այս է՝ թիւն 24 ։) Արդ՝ նախ բա՛րձ յառաջին
տեղւոյն 16՝ 'ի թուոյ հարիւրաւորի 258. և զմնացեալն
242 բաժանեա՛ թուովս 4, որոյ քանորդն լինի 60. զոր
բազմապատկեալ թուովս 3, արտադրեալն լինի 180.
յոր յաւելլով և զմնացեալն 2 'ի բաժանմանէ, 'ի վախ-
ճանի լինի 182. վասն թուոյ աւուրց հատելոց բարձ-
մամբ նահանջից՝ առ հաւասարելոյ ընթացից արեգա-
կան ։ Յետոյ վասն հաւասարելոյ զընթացս լուսնի,
բա՛րձ 18 'ի նոյն հարիւրաւոր թուոյ 258. և զմնացեալ
240 բաժանեա՛ 25 թուով. որոյ քանորդն լինի 9, և
յաւելամնայ 15. ապա բազմապատկեա՛ զքանորդն 9, 'ի
ձեռն 8 թուոյ, որ առնէ 72. յայս արտադրեալ 72
յաւե՛լ զթիւն երրեակ մասին պարունակելոյ 'ի 15 յա-
ւելուածն 'ի բաժանմանէ, որ է՝ 5. առ 'ի ունել 77
թիւ աւուրց հաւասարութե՛ լուսնի ։

Զայս արարեալ՝ բա՛րձ նախ 2 'ի հաւասարութենէ
արևուն, այսինքն՝ 'ի 182 էն. և 'ի մնացելոյն 180՝

բա՛րձ զհաւասարութիւն լուսնի 77 . ապա բաժանեա՛ զմնացեալն 103՝ թուովս 30 . յաւելմանս 13 . զայս 13 հանեալ ՚ի 22 թուոյն միշտ յամենայնի, մնայ 9 . որ տայ քեզ զՏառն Թ ՚ի ցուցակ կարգի վերադրաց վասն առաջարկեալ ամի 25824 թուականի յետ քնի : Որով֊հետև իններորդ տառն յընդարձակ աղիւսակի վե֊րադրաց յետ առաջնոյն՝ որ է Ա, է տառն Թ :

Գիտել պա՛րտ է, զի ասա թիւն 2, եթե հաստատուն՝ յամենայն հաշիւս արարեալս վասն այսր առաջարկեալ խնդրոյ՝ բառնալի է ՚ի հաւասարութենէ արեգական : Նոյնպէս ՚ի 22 թուոյն եթե ՚ի հաստատուն թուոյ բառնալի է վերջին մնացեալ լուսնական հաւասարու֊թիւնն . որով ՚ի վերջոյ մնայ տառն Ցուցակի կարգին վերադրաց :

| | | | |
|---|---|---|---|
| Ամ թ̃ն . 258 (24) | | 258 | |
| բա՛րձ . . 16 | | 18 բա՛րձ | |
| 242 | (60 քանորդ . | 240 | (9 քանորդ |
| բաժանիչ . 4 . | 3 բազմապատիկօղ . | 25 | 8 բազմպատկօղ |
| յաւելմանս . 2 | 180 | 15 | 72 |
| | 2 յաւելուածն | | 5 |
| | 182 հաւասարութի ☉ | | 77 |

182 հաւասարութի ☉
2 բա՛րձ
180
77 հաւասարութի ☾
103 (3 քանորդ .
30 բաժանիչ .
22 — 13 = 9 . Տառն Թ :

## Օրինակ . Ը :

մղ̃ք . Ամ օրինակ առաջի դիցուք, որ դիւրին ևս լիցի ՚ի հաշուել : Դիցուք թէ առաջարկեալ ամն իցէ 2100 : Յորմէ նախ ՚ի բաց ընկեցեալ զչըօյս, բա՛րձ վասն հաւասարութեէ արևու 16 ՚ի 21 թուոյ դարուն՝ մնայ 5 . զոր բաժանեալ 4 թուով, քանորդն լինի 1 . նմանապէս և 1 յաւելմանս : Բազմապատկեա՛ զքա֊

նորդն 1՝ 3 թուով. արտադրեալն ևս լինի 3 ։ Յաւել յայն զմնացեալն 1 'ի բաժանմանէ, լինի 4 թիւ 'ի հաւասարութի ընթացից արևուն ։

Դարձեալ՝ 'ի 21 թուոյն բարձ 18. և մնայ 3՝ 'ի բաժանել 25 թուով. բայց քանզի ոչ կարէ 3 թիւն բաժանիլ 25 թուով, դիր ○ 'ի քանորդն. և բազմապատկեա զզրօն 8 թուով. որոյ արտադրեալն ևս մնայ ○. յայս զրօ յաւել 1 վասն երրեակ մասինն՝ որ մնայ 'ի բաժանմանէ 3 թուոյն. և այսպէս 1 լինի 'ի հաւասարութի ընթացից լուսնի ։

Ուստի 'ի հաւասարութէ արևուն՝ որ է 4, բարձ 2, մնայ 2. յորմէ բարձեալ և զհաւասարութի լուսնի 1, մնայ 1. զոր բառնալով 'ի 22 թուոյն, վերջին մնացեալն լինի 21. արդ՝ քսաներորդ առաջներորդ Տառն է Ց. հաշուելով յառաջնոյն Ա. և այս Ց եղիցի տառն առաջարկեալ տարւոյն ։

```
 21                    21
 16                    18
----                  ----
  5 (1                  3 (○
  4   3                25   8
---  ---               ---  ---
  1   3                     ○
      1                     1
     ---                   ---
      4                     1

          4  հաւասարութի ☼
          2  բարձ
         ---
          2
          1  բարձ
         ---
          1  հաւասարութի ☾
               22
                1
               ---
               21.  Տառն Ց ։
```

Պատճառ բառնալոյ 16 թիւս 'ի գտանել զհաւասարութի ընթացից արեգական. և բառնալոյ 18 թիւս 'ի գտանել զլուսնական հաւասարութի՝ է այն, զի 'ի 1600 և 1800 դարուն սկսանին կանոնաւորեալ հաշիւք ամսոյ յետ նորոգութեն գրիգորեան տումարին ։ Այն-

պէս վասն առաջին պատճառի դնի բաժանել 4 թուով, և բազմապատկել 3 թուով։ Իսկ վասն երկրորդին դնի բաժանել 25 թուով, և բազմապատկել 8 թուով. վասն զի ՚ի 400 ամս լինին երեք հաւասարութիւնք ընթացից արեգական. և ՚ի 2500 ամս լինին ութ հաւասարութիւնք լուսնի։

## Օրինակ. Գ.

Մղդ. Առաջարկի ամն 2200. յորմէ ՚ի բաց ընկեցեալ երկու զրոյս, բարձ ՚ի 22 թուոյն 16. և զմնացեալն 6 բաժանեա 4 թուով, քանորդն լինի 1. և 2 յաւելմնայ։ Զքանորդն 1 բազմապատկեա 3 թուով, արտադրեալն լինի 3. յոր յաւել 2, որ մնաց ՚ի բաժանմանէ, լինի 5 թիւ հաւասարութեան արեւուն։

Դարձեալ՝ ՚ի 22 թուոյն բարձ 18. և զմնացեալն 4՝ բաժանեա 25 թուով. և զի 4 ոչ կարէ բաժանիլ 25 թուով, դիր ՚ի քանորդն 0. զոր ՚ի բազմապատկելն 8 թուով, արտադրեալն ևս մնայ 0. յայս զրօ յաւել զերրեակ մասն պարունակեալ ՚ի 4 թիւն, որ է 1. և այս լինի թիւ հաւասարութեան լուսնի։

Իսկ ՚ի հաւասարութենէ արեւուն՝ որ է 5, բարձ 2. որով մնայ 3. յորմէ բարձեալ և զհաւասարութիւն լուսնի 1, մնայ 2. զոր բառնալով ՚ի 22 թուոյն, վերջին մնացեալն լինի 20. արդ՝ քսաներորդ Տառն է Մ. սկսանելով յառաջնոյն Ա. և այս Մ եղիցի Տառն առաջարկեալ տարւոյն։

| | |
|---|---|
| 22 | |
| 16 | |
| 6 | (1 |
| 4 | 3 |
| 2 | 3 |
| | 2 |
| | 5 |

| | |
|---|---|
| 22 | |
| 18 | |
| 4 | (0 |
| 25 | 8 |
| | 0 |
| | 1 |

5 հաւասարութ̃ի ☼
2 բա՛րձ
—
3
1 բա՛րձ
—
2 հաւասարութ̃ի ☾
22
2
—
20. Տառն Մ։

## Օրինակ. Դ.

մղէ. Առաջարկի ամն 2400։ Արդ՝ ՚ի 24 թուոյ բա՛րձ 16. մնայ 8. զոր ՚ի բաժանելն 4 թուով, քանորդն լինի 2. և ոչ յաւելանայ ինչ։ Զքանորդն 2 բազմապատկեա՛ 3 թուով, արտադրեալն լինի 6. որ և լինի հաւասարութ̃ի արևուն։

Դարձեալ՝ ՚ի նոյն 24 թուոյ բա՛րձ 18. և զմնացեալն 6 բազմապատկեա՛ 25 թուով. և զի չէ հնար 25 թուով բազմապատկել զ6. դի՛ր ○ ՚ի քանորդն. զոր ՚ի բազմապատկելն 8 թուով, արտադրեալն մնայ ևս զրօ. յայս զրօ յաւե՛լ 2 վասն երրեակ մասին պարունակելոյ ՚ի թիւն 6. որ և լինի հաւասարութ̃ի լուսնի 2։

Աստի ՚ի հաւասարութ̃է արևուն՝ որ է 6, բա՛րձ 2. որով մնայ 4. յորմէ բարձեալ և զհաւասարութ̃ի լուսնի 2. մնայ 2. զոր բառնալով ՚ի 22 թուոյն, վերջին մնացեալն լինի 20. արդ՝ քսաներորդ Տառն է Մ. հաշուելով յառաջնոյն Ա. և այս Մ եղիցի տառն առաջարկեալ տարւոյն։

24
16
—
8 (2
4 3
—
6

24
18
—
6 (○
25 8
—
○
2

```
 6   հաւասարութ̃ի ☉
 2   բա́րձ
---
 4
 2   բա́րձ
---
 2   հաւասարութ̃ի ☾
     22
      2
     ---
     20.   Տառն Ա։
```

Օրինակ. Է։

Առաջարկի ամ̃ 2500։ Վասն սորա բաւական համարիմք դնել առաջի զհաշիւս՝ որք ակն յանդիման ցուցցեն զամենայն գործողութի̃ս արարեալս ըստ բացատրութեան առաջնոյն։

```
 25                 25
 16                 18
---                ---
  9  (2              7  (0
  4   3             25   8
---  ---                ---
  1   6                  0
      1                  2
     ---
      7
```

```
 7   հաւասարութ̃ի ☉
 2   բա́րձ
---
 5
 2   բա́րձ
---
 3   հաւասարութ̃ի ☾
     22
     ---
      3
     19.   Տառն Ճ։
```

# ԱՂԻՒՍԱԿ ԶԱՏԿԱԿԱՆ

## Մշտնջենաւոր ըստ նոր տոմարագրութեան ։

մղք. Մշտնջենաւորել կամելով զգրութիւն նոր տոմարագրին, 'ի վերջոյ ճարտարեցին կարգել հանդէպ եօթներեակ տառից՝ զամենայն վերադիրսն, կրկնելով մի առ մի իւրաքանչիւրս տառից եօթանց՝ զանազան կարգօք տարբերեալս ։

Արդ՝ առաջին գաւազանն (ա̄) ունի զեօթեակ տառս կիրակագիրս, սկսեալ 'ի Գ. տառէ, իջանելով ըստ կարգի իւրեանց մինչև 'ի տառն Գ ։ Յերկրորդ գաւազանին հանդէպ իւրաքանչիւր տառից դնին շրջանք վերադրաց 'ի մի խորշս խորանաց, որք բովանդակին 'ի հինգ կարգս վերադրաց՝ բաշխելոց այնպիսի օրինակաւ իմն, որք 'ի միջին յերիս կարգս դնին եօթն վերադիրք՝ դասակարգեալ յետադարձ կարգօք ։ Բայց յառաջին և 'ի վերջին կարգին դնին մնացորդք այլոց վերադրաց 'ի մեծագոյն և 'ի փոքրագոյն թուոց՝ ըստ տառիցն յարմարելոց 'ի նոյն նիւթս ։

Վասն զի յառաջին կարգի նախկին տառն Գ. ոչ ունի՝ բայց եթէ զվերադիրն ԻԳ. և 'ի վերջին կարգին ունի զեօթն. (որովհետև երկու վերադիրք ԻԵ և ԻԴ. որք են 'ի մի և նոյն կայս 'ի տոմարագիրս, անցանեն վասն միոյ միայնոյ. որպէս և յայլ վեց տեղիս) ։ Յառաջին կարգի երկրորդ տառին Ե կան երկու վերադիրք ԻԳ. ԻԲ. և 'ի վերջին կարգին կան վեց միայն ։ Յառաջին կարգի երրորդ տառին Զ կան երեք վերադիրք. և 'ի վերջինն կան վեց. ըստ այսմ իմն և զայլսն. ուր յառաջին կարգի առաւելուն, 'ի վերջինն նուազին ըստ նոյն համեմատութեան՝ մինչև 'ի վերջին տառն Գ. ուր յառաջին կարգի կան եօթն վերադիրք, և 'ի վերջինն կայ մի միայն. այս է՝ ԻԵ և ԻԴ ։

Զհետ դան ապա զանազան գաւազանք վասն շարժական Տօնից. որք քանզի կախեալ կան զտօնէ Զատկին, ըստ հեռաւորութեան թուոյ աւուրց ինչ, որք յառաջոյ և որք զկնի, բաւական է միայն գիտել՝ թէ որ-

պիսի օրինակաւ պարտ է կարգել զայս տօն Զատկի 'ի յաղիւսակի անդ ։

ՄԼԷ · Ուստի 'ի հանդիպոյ առաջին կարգին՝ ընդ նախկին տառիս Դ , պարտ է գտնել զզատիկն 'ի 22 աւուրն մարտի · ապա 'ի 23 աւուրն 'ի հանդիպոյ առաջին կարգի ընդ երկրորդ տառիս Ե ։ 'Ի 24 աւուրն առաջին կարգի գտնել ընդ երրորդ տառիս Զ ։ Իսկ 'ի 25 աւուրն յառաջին կարգի ընդ չորրորդ տառիս Է ։ 'Ի 26 աւուրն 'ի հանդիպոյ առաջնոյն ընդ հինգերորդ տառիս Ա ։ 'Ի 27 յառաջին կարգի ընդ վեցերորդ տառիս Բ · և 'ի վերջոյ 'ի 28 'ի հանդիպոյ առաջնոյն ընդ վերջին տառիս Գ ։

Անտի վերստին դառնայ 'ի հանդիպոյ երկրորդ կարգի ընդ նախկին տառիւ Դ · 'ի ցուցանել զզատիկն 'ի 29 աւուր մարտի ։ 'Ի 30 աւուրն ընդ երկրորդ տառիս Ե · և 'ի 31 մարտի հանդէպ երրորդ տառին Զ ։ Ապա յառաջին աւուրն ապրիլի յերկրորդ կարգի հանդէպ չորրորդ տառի Է · և ըստ այսմ յաջորդելով մինչև 'ի հանդիպոյ երկրորդ կարգին առ վերջին տառն Գ · ուր գնի չորրորդ օր ապրիլի ։

Ապա դարձ առնի և եւս յերկրորդ կարգն հանդէպ առաջին տառին Դ , ցուցեալ զզատիկն յաւուր 5 ապրիլի · և ըստ յաջորդելոյ յամենայն կարգի իւրաքանչիւր տառից ըստ բնական կարգի աւուրց ամսոց , մինչև 'ի վերջին կարգն վերջնոյ տառի Գ · 'ի հանդիպոյ որոյ գտանի 25 օրն ապրիլի · որ ըստ ճիշտ կարգի աղիւսակիս՝ է վերջին և աւարտ կոպարն տօնելոյ զզատիկ ։ Որպէս 22 օրն մարտի · ( որ է հանդէպ առաջին կարգի նախկին տառի , ) է առաջինն , և սկզբնաւոր կոպար տօնիս ։

Զնոյն կարգ ունել պարտ է՝ վասն այլ ամենայն տօնից աղիւսակիս · որոց վասն չունիմք ինչ ասելոյ ։

Այնպէս է գործածութիւն աղիւսակիս , որ միանգամ գիտելով զվերադիր և զեօթներեակ տարւոյն , բաւական է խնդրել զնոյն վերադիր 'ի կարգս վերադրաց տառից եօթներեկացն · և 'ի դաւաղանս՝ ուր նշանակեն տօնք՝ որք խնդրին , զորս պարտ է առնուլ ըստ աւուրց համեմատս կարգին , յորում գտանի վերադիրն տարւոյն ։

ՄԼԸ · Զոր օրինակ՝ վասն զի վերադիրն ամի տեառն

1822 է ըստ նոր տումարին Է. և եօթներեակն կամ կիրակագիրն Զ, գտանեմ 'ի հանդիպոյ յերրորդ կարգի խորանի ընդ տառիւս եօթներեկի Զ. ուր տեսանի վերադիրն Է. և 'ի հանդիպոյ 'ի գաւազանի զատկին 'ի 7 ապրիլի լինել տօն Զատկին. 'ի 16 մայիսի Համբարձումն, և 'ի 26 մայիսի Հոգեգալուստ. և այլն: Ուստի ասեմք՝ թէ յաւուրսն յայնոսիկ լինի կատարել զայն ամենայն տօնսն:

Դարձեալ՝ յամի տեառն 1823. վերադիրն է ԺԸ, և կիրակագիրն է Ե. ուստի տեսանի անդ յերկրորդ կարգի խորանի՝ ընդ տառիւս եօթներեկի. Ե՝ գտանել ԺԸ վերադիրն. և օրն Զատկի եղիցի 'ի մարտի 30. 'ի մայիսի 8 Համբարձումն. և 'ի մայիսի 18 Հոգեգալուստ. ըստ այսմ իմա և զայլսն:

# ԱՂԻՒՍԱԿ ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՑ

Շարժական տօնից՝ ըստ նոր տոմարագրութեան:

մղթ. Այս աղիւսակ փակէ զաւանձին խմբ թիւս ամաց՝ ընդ շարժական տօնից, որք բովանդակին իբր 'ի 85 միջոցս ամաց. զորս եդաք աստէն (Դ) սկսեալ յամէ 1818՝ մինչև 1902. վասն ցուցանելոյ զփոփոխութիս, որք պատահեն յաղագս դարս՝ 'ի սակս 'ի բաց թողլոյ զմի օր նահանջին 'ի դարագլուխն 1900. որ է հասարակ ամ. թէ և իցէ նահանջ ըստ Յուլեան հին տումարին:

Առաջին գաւազանն պարունակէ զամս տն մերոյ՝ ըստ բնական կարգի իւրեանց յաջորդաբար՝ 'ի 1818 ամէ մինչև ցամն 1902:

Երկրորդ գաւազանին դնին թիւք Ինդիկտիոնի շրջանաց 15 ամաց:

Երրորդ գաւազանին դնին թիւք շրջանաց արևուն համեմատեալք 'ի հանդիպոյ առ իւրաքանչիւր ամս, մինչև 'ի 28 թիւն. և անտի դառնայ 'ի սկիզբն 'ի թիւն 1. անդ նշանակին և Կիրակագիր տառք. յորս եթէ մի միայն տառ գտանի, են վասն Հասարակ ամաց. և յորս երկուք՝ են վասն Նահանջ ամաց: Բայց

'ի 1900 ամէ դարադլխոյ, որ է հասարակ ամ. և ունի զմի միայն տառ Ա. ապա թէ ո՛չ՝ հա՛րկ լինէր ընկերել ընդ տառին Բ, եթէ լինէր նահանջ։

Ի չորրորդ գաւազանի են Ոսկեգիրք, կամ՝ որ նոյն է շրջանք լուսնի 19 ամաց, որք յաջորդեն ըստ բնական կարգի իւրեանց 'ի 1 թուոյ մինչև 'ի 19. դարձ առնելով ապա առ նոյն 1 թիւ։ Ի գաւազանի աստ հանդէպ թուոց ինչ գտանին աստղանիշ * նշանք, որք ցուցանեն նշանակել զլուսնական նահանջս, այս է՝ 'ի նոյն ամին դիպիլ երեքտասան լուսնի, որք հաշուին 384 աւուրս։

Ի հինգերորդն՝ են վերադիրք, որք եդեալ կան մի զկնի միոյ յաւելլով միշտ 11 թիւ 'ի վերայ նախընթացին. 'ի բաց առեալ զայն՝ որ 'ի ներքոյ է ա Ոսկեգրոյն, ուր յաւելանան 12 թիւք։

Ի վեցերորդն դնին Եւագ լրմունք լուսնի. ուր գլխագիրն Մ յայտ առնէ զամիսն մարտի, իսկ Ա գլխագիրն ցուցանէ զամիսն ապրիլի։

Եօթներորդ գաւազանն ցուցանէ զօր տօնի Զատկաց, ուր ընոյն օրինակ Մ գլխագիրն յայտ առնէ՝ զմարտի ամիսն, իսկ Ա գլխագիրն յայտ առնէ զամիսն ապրիլի։

Ութերորդ գաւազանին դնին Թուականք հինգհարիւրեկի. այսինքն՝ 532 ամաց մեծ շրջանին։

Յ. Զհետ գան ապա հինգ գաւազանք վասն շարժական տօնից. որք քանզի կախեալ կան 'ի տօնէ Զատկին, այնորիկ աղագաւ ըստ այլ և այլ ամաց Թուականի Տեառն, նշանակին 'ի հանդիպոյ աւուրք շարժական տօնիցն՝ յորս անկանին։ Բայց պա՛րտ է ուշադիր լինել նահանջ ամին, զգուշանալով վասն տօնից երկուց ամսոց, այսինքն՝ յունվարի և փետրվարի. յորս առաջին տառիւ կիրակագրոյն նշանակել պա՛րտ է զպատկեր աւուրց տօնից. և ընդ հակառակն երկրորդ տառիւն վարիլ սկսեալ 'ի մարտէ մինչև 'ի վերջ տարւոյն։

Զոր օրինակ՝ 'ի հասարակ ամի 1819. որոյ վերադիրն է 4. և տառ կիրակագրոյն Գ. յայնժամ եօթանասներորդ կիրակէ ըստ նոր տոմարագրին գայ 'ի փետրվարի 7. բուն բարեկենդանն 'ի փետրվարի 21. իսկ Զատիկն յապրիլի 11. Համբարձումն 'ի 20 մայիսի. և այլն։

Բայց յամին 1820, որ է նահանջ ընդ 15 վերադրաւ, և կրկին տառիւ ԲԱ կիրակագրոց. յայնժամ եօթանասներորդ կիրակէն անկանի 'ի 30 յունվարի. և բուն բարեկենդանն 'ի փետրվարի 13, ըստ ցուցանելոյ Բ կիրակագրոյն: Իսկ Զատիկն 'ի 2 ապրիլի, ըստ ցուցանելոյ Ա կիրակագրոյն. զոր պա՛րտ է 'ի գործ ածել սկսեալ 'ի մարտէ նոյն ամին, 'ի պատճառս Զատկին անկանելոյ միշտ յետ նահանջելոյ ամին:

ճա. Սոքա են այս ամենայն կարգաւորութիւնք՝ որովք Գրիգորեան տումարի հաշիւք՝ 'ի դարս բազումս շարունակեն անվրէպ. որպէս ցուցանին 'ի դրութէ կարգի վերադրաց յընդարձակ աղիւսակին. այլև 'ի կարգէ իւրաքանչիւր դարուց, որ յաղիւսակի (մհթ) հաւասարութե ընթացից երկուց լուսաւորաց. ուր հանդէպ ամաց հարիւրաւորաց զհետ միմեանց կարգելոց, նշանակին Տառք ցուցակաց ըստ Թուոց, որք յանդիմանս երևին (ա) յընդարձակ աղիւսակի անդ:

Այլ սակայն 'ի վերայ այսր ամենայնի՝ այս Գրիգորեան ուղղեալ տումարն կարգեալ 'ի ձեռն աղիւսակաց վերադրաց, տակաւին չէ ամենևին ազատ 'ի վրիպանաց՝ որք զհետ գան յետ բազմագոյն դարուցս 'ի հաշիւ արկելոց: Զի 'ի չորեքհարիւր ամս, որ ըստ Յուլեան տումարի առաւելու 3 օր. 1 ժամ. և 20 րոպէ, վասն 11 րոպէիցն՝ որք պակասին յիւրաքանչիւր ամին 'ի 6 ժամուց: Գրիգորեան տումարն բառնայ արդարև զերիս աւուրսն, ոչ առնելով յերիս հարիւրերորդ ամս զնահանջ. բայց մնայ 1 ժամ, և 20 րոպէ, առաւելեալ 'ի չորեքհարիւր ամաց. որ յետ չորեքհարիւր ամաց այն 1 ժամ, և 20 րոպէ, 'ի 7200 ամս առնէ օր մի:

ճբ. Զա՛յս գրիգորեան տումար մտադիւր ընկալան զառաջինն բազումք յարևմտեան ազգաց՝ որ ընդ հնազանդութեամբ հռովմէական եկեղեցւոյ էին կացեալ: Իսկ արքայն գաղղիոյ՝ (Լուիձի չորեքտասաներորդ) որ առասական անուամբ Քրիստոսադաւան արքայ և որդի անդրանիկ եկեղեցւոյ, աշխատ եղև ածել զժողովուրդ իւր 'ի հնազանդութիւն ընդհանուր վճռոյն. ուր միանգամ կարէր տարածել զայն արքայական իշխանութեամբն,

արար 'ի վերջոյ ընդունել զգործածութ՟ին նոր տումարի՝ յամի տեառն 1682։

Այլև լուտերականք և կալվինեանք գերմանիոյ՝ գոլով հպատակեալ ընդ տէրութեամբ հռովմէական կայսեր, յամի տեառն 1700 'ի տումարէ իւրեանց բարձին զմետասան աւուրս 'ի փետրվար ամսեան. այնպէս զի՝ յետ 18 աւուրն փետրվարի յաջորդեցաւ առաջին օրն մարտի։ Իսկ վասն կանոնաւորելոյ զտօն զատկի, ունին քաղել ամ ըստ ամէ յաղիւսակէ Ռուտոլֆինի Քեփլերոսի։ Այժմ առ հասարակ ընդ բոլոր եւրոպիա վարին այսու նոր տոմարաւ առանց ինչ հակառակութեան։

# ՇՐՋԱՆ ԻՆԴԻԿՏԻՈՆԻ

յԹ. Ինդիկտիոնն 'ի տոմարագիտութ՟իս 'ի գործ ածի վասն մասնաւոր ինչ թուականի. կամ՝ էր օրինակ իմն հաշուելոյ զժամանակ առ հռովմայեցիս՝ յետ նուաճելոյ զյունաստան։ (Որովհետև յառաջագոյն հաշուեալ լինէին Ողիմպիական ամք, որ էր միջոց 4 ամաց. յորոյ աւարտիլն հանդիսանայր խաղն, որ կոչէր Ողիմպիական. կարգեալ 'ի Հերակլեայ մերձ 'ի քաղաքն Ողիմպիա 'ի Հեղիդայ գաւառի։)

Միջոց ժամանակի Ինդիկտիոնի է շրջան 15 ամաց. որ յորժամ աւարտէր, սկսանէր նորոգ. և այնպէս առանց ընդմիջելոյ առնէր զնոյն շրջան։

Այս շրջան թուականութեան չունի կախումն ինչ յերկնային շարժմանց, գոլով միայն գիւտ իմն քաղաքական։ Պետաւիոս ասէ՝ թէ ոչ գոյ 'ի ժամանակագրութ՟իս առաւել անյայտ իմն՝ քան զինդիկտիոնն հռովմայեցւոց. այս է՝ թէ երբ իցէ նորա ծագումն, կամ սկիզբն։

Այլք հաստատեն՝ թէ ինդիկտիոնն ոչ այլ ինչ էր 'ի սկզբան սորա, բայց եթէ հարկահանութ՟ի ինչ տարեկան. զորոյ որքանութիւն հրատարակէին յամ՝ տարւոջ։ Բայց թէ ընդէ՛ր այսպէս կոչեցաւ, և վասն է՛ր ամփոփեալ 'ի շրջանս 15 ամաց. և ե՛րբ և առ ի՛նչ պատ-

ճառ կարգեցաւ, ամենեւին անյայտ է ասեն:

Գտանին երեք տեսակք Ինդիկտիոնի՝ յիշատակեալ 'ի հեղինակաց. Ինդիկտիոն կոստանդնուպօլսոյ՝ որ սկսանի 'ի 1 սեպտեմբերի. Ինդիկտիոն կայսերական 'ի 14 սեպտեմբերի: Ինդիկտիոն հռովմէական, կամ պապական, է այն՝ որ 'ի գործ ածի 'ի պապական կոնդակս, և սկսանի 'ի 1 յունվարի:

Բառս Ինդիկտիոն է լատիներէն. և նշանակէ՝ կարգումն, կամ հրատարակումն: Ժամանակ ինդիկտիոնի առ հռովմայեցիս էր այն, յորում զժողովուրդն կոչէին 'ի վճարել զտուրս հարկին. և վասն այսր պատճառի է՝ զի ինդիկտիոնն կայսերական սկսանէր 'ի 14 սեպտեմբերի. վասն զի յայնժամ հաւաքեալ լինէին բերք անդաստանաց, որով ժողովուրդն կարէր դիւրաւ վճարել զհարկն:

### Կանոն գտանելոյ զԹիւ ինդիկտիոնի առաջադրեալ ինչ տարւոյ:

ՃԴ. Շրջան ինդիկտիոնի ենթադրի սկսեալ 3 ամաւ յառաջ քան զծնունդ ք̅ի տ̅ն մերոյ. ուստի յառաջին ամի տեառն մերոյ ինդիկտիոնն համարի լինել 4:

Ապա առ 'ի գիտել ինդիկտիոնի վասն առաջադրեալ ինչ տարւոյ, բաւական է միայն յաւելուլ 3 'ի վերայ նոյն տարւոյն. և զգումարն բաժանել թուովս 15. և որ ինչ մնայ յետ բաժանմանն, այն է թիւ խնդրեալ ինդիկտիոնի: Իսկ քանորդն՝ որ ելանէ 'ի բաժանմանն, ցուցանէ՝ թէ այնքան շրջան ինդիկտիոնի անցեալ է մինչ ցայն առաջադրեալ ամն:

Զոր օրինակ՝ առ 'ի գտանել զԹիւ ինդիկտիոնի 'ի գալ ամի տեառն 1820, յաւել յայն 3. որ լինի 1823. և զայս գումար բաժանեա թուովս 15. յետ բաժանմանն մնայ 8. որ է թիւ ինդիկտիոնի 1820 թուին ք̅ի: Իսկ քանորդն 121, տայ գիտել՝ թէ 'ի ծննդենէ ք̅ի մինչև ցամն առաջադրեալ 1820, անցեալ է շրջան ինդիկտիոնին 121 անգամ:

# ՇՐՋԱՆ ՅՈՒԼԵԱՆ ԱՄԱՑ

յէ. Շրջանս այս է գիւտ Յովսեփայ Սգալիճերի, որ առանձին իմն օրինակաւ պատրաստեալ յուսումն ժամանակագրութե, անկանի 'ի միտս նորա համեմատել զինդիկտիոնն 15 ամաց՝ ընդ արեգակնային շրջանի 28 ամաց. (Թէպէտ և ինդիկտիոնն չունիցի ինչ կապակցութիւն ընդ երկնային շարժմանց): Այլ և համեմատել ընդ շրջանի լուսնական ամաց, կամ՝ որ նոյն է ընդ Թուոյ Ոսկեգրոյն 19 ամաց. բազմապատկելով 'ի միասին զայսոսիկ երիս շրջանս, այսինքն՝ 15. 28. և 19. յորոց արտադրեալն լինի նոր իմն շրջան 7980 ամաց. որ կոչի Շրջան յուլիոսեան կամ յուլեան. վասն զի յարմարէր ոճոյ և շրջանաց Յուլիոսի կայսեր:

Սա է իբրև հասարակ իմն ընդունարան, և հիմն ամենայն Թուականութեանց՝ դիւրաւ վերածելոյ զամս այս ինչ Թուականի՝ ընդ այլում այն ինչ Թուականի, որ խնդրի:

Այս շրջան երևելի և անուանի եղև այսու, զի համեմատ գայ այն նաև ընդ Թուականի Կոստանդնուպօլսոյ, և ընդ շրջանի 'ի գործ ածելոյ 'ի յունաց. Թէպէտ և 'ի նոսին այլազգ հաշուեն արեգակնային՝ և լուսնական և ինդիկտիոնի շրջանք. և Թէև առաջին ամն Թուականի Կոստանդնուպօլսոյ իցէ տարբեր քան զյուլեանն:

Քանզի որպէս և ժամանակագէտք իսկ քննեալ զայս գիւտ Սգալիճերի, իրօք իսկ 'ի վերայ հասին, Թէ Թիւս այս 7980 բովանդակէ զամենայն զուգադիպութիւն վերոյ ասացեալ շրջանաց, այնու օրինակաւ, մինչ զի մի և նոյն Թիւք իւրաքանչիւր շրջանի, որք առեալ 'ի միասին՝ հանդիպին 'ի մի և 'ի նոյն ամն. ոչ կարեն այլ ևս դիպել 'ի միասին 'ի միւս այլ ինչ ամ՝ 'ի միջոցի 7980 շրջանին: Վասն այսորիկ իսկ վճռեալ որոշեցին՝ Թէ այս շրջան յոյժ յարմար է առ 'ի ցուցանել զտարբերութիւն ժամանակացն ամաց, որք գտանին 'ի պատմութիւս յինչ և իցէ երևելի դիպուածս.

որպէս իրօք իսկ առ հասարակ մուծին զնոյն յինչ և իցէ երևելի Թուականութիւնս ամաց ։

### Աւանդ գտանելոյ զԹիւ շրջանիս վասն զինչ իցէ Թուականի ամաց ։

ԺԶ. Առ 'ի գտանել դիւրաւ զԹիւ շրջանիս մեծի 7980, վասն զինչ և իցէ Թուականի ամաց յետ քնի տն մերոյ, կարևոր է գիտել զսկիզբն նորա՝ յորմէ սկսանի. կամք են ասել՝ գիտել զժամանակն՝ յորում համարի սկիզբն առեալ յառաջ քան զամն փրկչին մերոյ. նա մանաւանդ՝ յառաջ քան զարարչութիւն աշխարհի ։ Վասն զի գոլով այս շրջան մեծ յոյժ, իւր առաջին ամն՝ յորմէ սկսանի, զանցանէ յառաջ յոյժ յոյժ, ոչ միայն քան զԹուական փրկչին, այլ նաև քան զսկիզբն՝ զոր տայ սուրբ գիրն արարչութեան աշխարհիս ։ Ապա առ 'ի գիտ առաջադրեալ խնդրոյս՝ գիտցուք ։

Թէ ինդիկտիոնն յառաջին ամի փրկչին մերոյ՝ (որպէս ասացաք) էր 4. Արեգակնային շրջանն 10 ։ Իսկ լուսնական շրջանն՝ կամ որ նոյն է իննևտասներեակն 2. և այսոքիկ ըստ հաշուի նոր տումարին. զի այս յուլեան մեծ շրջան ոչ մտանէ 'ի հաշիւ ըստ հին տումարին ։ Այսու երիւք Թուովք՝ այսինքն՝ 4. 10. և 2. ունիմք բազմապատկել զայլ և այլ գումարս Թուոց ։ Առաջնով զգումարն 6916 ։ Երկրորդաւ զգումարն 4845 ։ Իսկ երրորդաւ զգումարն 4200 ։

Բազմապատկեա արդ զԹիւն 4 ինդիկտիոնին ընդ գումարիս 6916, արտադրեալն լինի 27664 ։

Բազմապատկեա ևս զԹիւն 10 արեգակնային շրջանի ընդ գումարիս 4845. արտադրեալն լինի 48450 ։

Բազմապատկեա ապա և զԹիւն լուսնական շրջանին 2, ընդ երրորդ գումարիս 4200. արտադրեալն լինի 8400 ։ Ապա 'ի միասին յաւելեալ զերիս արտադրեալս, այս է՝ 27664. 48450. և 8400. գումարն լինի 84514. զոր բաժանեալ 'ի ձեռն մեծ յուլեան շրջանիս 7980, մնացեալն 4714, տայ գիտել զսկիզբն յուլեան շրջանի լինել 4714 ամաւ յառաջ քան զծնունդ փրկչին մերոյ ։ Ահաւասիկ օրինակ ։

ինդիկտ". 6916 × 4 = 27664 արեգ". շրջ". 4845 × 10 = 48450 լուսն". շրջ". 4200 × 2 = 8400

| | |
|---|---|
| | 8400 |
| | 48450 |
| | 27664 |
| 7980 | 84514 |
| 10 | 7980 |
| Անայ սկիզբն շրջանի | 4714 |

Ըստ այսմ օրինակի գտեալ զսկիզբն յուլեան շրջանիս, որ որպէս ասացաք՝ է 4714 ամօք յառաջ քան զծնունդ փրկչին։ Եթէ կամիցիս գիտել զթիւ յուլեան շրջանիս՝ յետ թուին քրի յայս ինչ առաջադրեալ ամին. զոր օրինակ՝ յամի տն 1820. բաւական է յաւելուլ ՚ի թիւն 4714, զթիւ 1819 անցեալ ամին։ Գումարն 6533 լինի ամ յուլեան շրջանի համեմատ եղեալ ամի տն 1820։ Զայս օրինակ յայլ զինչ և իցէ թուականս ամաց գտանես։

## Ընդհ։

յէ. Հնար է այլազգ օրինակաւ գտանել զամն Յուլեան շրջանիս զինչ և իցէ տարւոյ։ Բազմապատկեա զթիւ ինդիկտիոնի խնդրեալ ամին ընդ թուոյն 6916։ Զթիւ արեգակնային շրջանի ընդ թուոյն 4845։ Եւ զթիւ լուսնական շրջանին, կամ ոսկեգրոյն ընդ թուոյն 4200։ Յետ այնորիկ յաւել ՚ի միմեանս զերիս արտադրեալս ՚ի բազմապատկութեանց անտի. և զգումարն զայն բաժանեա Յուլեան շրջանաւս 7980. ապա առանց միտ դնելոյ քանորդին, մնացեալն ՚ի բաժանմանէ անտի ցուցանէ զթիւ շրջանին համեմատ առաջադրեալ ամին՝ զոր խնդրեցեր։

Զոր օրինակ՝ եթէ կամիս գիտել՝ թէ որ իցէ թիւ Յուլեան շրջանի, որ համեմատի ամի տն 1820. որոյ շրջան ինդիկտիոնի է 8։ Շրջան արեգական է 9. և Շրջան լուսնի է 16։

Բազմապատկեա զթիւ ինդիկտիոնի 8 ընդ 6916 թուոյն. որոյ արտադրեալն լինի 55328։ Բազմապատկեա և զթիւն արեգակնային շրջանի 9 ընդ 4845

թուոյն, արտադրեալն լինի 43605 ։ Բազմապատկեան և գշրջանն լուսնի 16 ընդ 4200 թուոյն․ որոյ արտադրեալն լինի 67200 ։

Օրինակի աղագաւ ։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ինդիկտիոնի | 8 | | 6916 | | 55328 |
| Բազմապ․ գշրջ․ արեգ․ | 9 | ընդ | 4845 | լինի | 43605 |
| լուսնի․ | 16 | | 4200 | | 67200 |
| | | | | Գումար․ | 166133 |

Զայս գումար բաժանեա 7980 յուլեան շրջանաւ, մնայ 6533․ որ լինի ամ յուլեան շրջանի՝ համեմատ եդեալ ամի տն 1820 ։

# ՑԱՆԿ

ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ· 7
ՏԱՐԻ· . . . . . . . . 10
Ամ լուսնական· . . . . . 12
Ամք հռոմայեցւոց· . . . . 12
Ամք յունաց· . . . . . 15
Ամք հայոց· . . . . . 17
Օրինակ յառաջաշարժութեան ամաց . . . թուականի հայոց· . . . . . . 21
Ամք արաբացւոց և հագարացւոց· . . 27
Ամք հրէից· . . . . . . 27
Ամ Գրիգորեան· . . . . . 30
ԱՄԻՍ· . . . . . . . 30
ՇԱԲԱԹ, ԿԱՄ ԵՕԹՆԵԱԿ· . . 33
ՕՐ . . . . . . . . 34
ԺԱՄ· . . . . . . . 36
ՐՈՊԷ· . . . . . . . 38
ՇՐՋԱՆ ԱՐԵԳԱԿԱՆ ԵՒ ԵՕԹՆԵՐԵԿԱՑ· . 39
Կանոն գտանելոյ զեօթներեակս· . . . 41
Գիւտ եօթներեկաց՝ աղիւսակաւ որ չինի· . 43
Գործածութիւն աղիւսակիս· . . . 43
Աղիւսակ եօթներեկաց ըստ տոմարին հայոց· . 44
Եօթներեակ ըստ տոմարին յունաց· . . 45
Եօթներեակ ըստ նոր տոմարին· . . . 45
Աղիւսակ նորա· . . . . . 46
ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐԵԱԿ, ԿԱՄ ՈՍԿԵԳԻՐ· . . 47
Գիւտ իննևտասներեկաց· . . . . 50
Այլ կանոն յաղագս գիւտի իննևտասներեկաց· . 51
Գործածութիւն աղիւսակիս· . . . 51
Մշտնջենաւոր աղիւսակ իննևտասներեկաց· . 53
ՇՐՋԱՆ ՎԵՐԱԴԻՐԱՑ· . . . 54
Գտանողութիւն վերադրաց ՚ի տոմարագիրս· . 55
Աղիւսակ հին տոմարին· . . . 57

Գործածութիւն աղիւսակին. . . . 63
Յաղագս վերադրաց որ 'ի գործ ժամագրի մերում. 65
Կանոն գտանելոյ զվերադիրս տարւոյ. . . 69
Գիւտ վերադրաց աղիւսակաւն՝ որ զկնի. . 70
Աղիւսակ վերադրաց մշտնջենաւոր ըստ հին տօմարին. . . . . . . 71
Աղիւսակ վերադրաց ըստ տօմարին յուլեանց. . 71
Կանոն գտանելոյ զվերադիրս տարւոյ ըստ նոր տօմարին. . . . . . . 72
Աղիւսակ նորա. . . . . . 72
Կանոն հաշուելոյ զտօն զատկի, և զայլ շարժական տօնս. . . . . . . 72
Այլ օրինակ գտանելոյ զօր տօնի զատկի. . 75
Շրջան ՇԼԲ 532 ամաց. . . . . 78
ԳԻՐ ՏԱՐԻՈՑ. . . . . . 81
Կանոն գտանելոյ զգիր տարւոյ. . . . 82
Գիւտ տարեգրոյն աղիւսակաւն որ 'ի վերոյ. . 84
Միւս ևս աղիւսակ 'ի գիւտ տարեգրոյն. . 84
Աղիւսակ մշտնջենաւոր 'ի գտանել դիւրաւ զվերադիրս, զեօթներեակս, և զգիր տարւոյն. . 88
Գործածութիւն աղիւսակին. . . . 88
ԳԻՒՏ ՀԱՄԱՐԱԿ ԵՒ ՆԱՀԱՆՋ ՏԱՐԻՈՑ. . 94
Գիւտ աւուրց տարեմտից և ամսամտից. . 96
Աղիւսակ վասն գիւտի ամսամտից. . . 98
Գտանել զամսամուտս ըստ նոր տոմարին. . 99
Կանոն գտանելոյ զծնունդ լուսնի. . . 100
Կանոն գտանելոյ զլրումն լուսնի. . . 101
Կանոն գտանելոյ զաւուրս լուսնի. . . 102
Կանոն գտանելոյ զշարժական տօնս . . . 103
Յաղագս շաբաթապահոց. . . . 110
Աղիւսակ պարզատօմարական. . . . 111
Տանուտէր տարւոյն. . . . . 116
ԾՌԱԶԱՏԻԿ. . . . . . 117
ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ. . . . 120
Առաջին կերպաւ հանելոյ հասարակածին. . 121
Երկրորդ կերպաւ հանելութեան ծննդեան լուսնի. . 123
Անդեղութեանց պատճառելոց յերկուց կերպակաց աստի. . . . . . . 124
Նշանակ ուղղելոյ զառաջին կերպակն. . . 125

Ընդհատութեան շրջանի արեգական, կամ կիւրակա-գրոյն . . . . . . . 126

Կանոն ուղղելոյ զհաւասարականն գարնայնոյ միշտ յե-րում կայէ . . . . . . 127

Աշտանակ բառնալոյ զերկրորդ Հրեշտակն . . 128

Տոմար Գրիգորեան . . . . . 130

Գործածութեան աղիւսակի վերադրաց ըստ նոր տոմարի . . . . . . 134

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԱՂԻՒՍԱԿԻ ՎԵՐԱԴՐԱՑ . . . . 135

Ապացոյց և ևս ընդարձակ աղիւսակ վերադրաց . 137

ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՔ ԿԱՐԴԻ ՎԵՐԱԴՐԱՑ . . 137

Աղիւսակ (համառօտութե) ընթացից արևու ընդ լուսնի . . . . . . . 139

Գործածութեան աղիւսակիս համառօտութե վերադրաց . . . . . . . 140

Պատճառ կազմութեան աղիւսակիս . . . 140

Կանոն գտանելոյ զչորս վերադրաց յայս ենչ ամ . 144

ԱՂԻՒՍԱԿ ԶԱՏԿԱԿԱՆ ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ ըստ նոր տոմարագրութեան . : . . 151

ԱՂԻՒՍԱԿ ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՑ շարժական տօնից ըստ նոր տոմարագրութե . 153

ՇՐՋԱՆ ԻՆԴԻԿՏԻՈՆԻ . . . . 156

Կանոն գտանելոյ զթիւ ինդիկտիոնի առաջար-կեալ ինչ տարւոյ . . . . . 157

ՇՐՋԱՆ ՅՈՒԼԵԱՆ ԱՄԱՑ . . . 158

Կանոն գտանելոյ զթիւ շրջանիս վասն զինչ և էցէ թուականի ամաց . . . . . 159

[illegible]
[illegible]
[illegible]

# ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ ՎԵՐԱԴԻՐԱՑ

## ՈՍԿԵԴԻՐ

| | գ | դ | ե | զ | է | ը | թ | ժ | ժա | ժբ | ժգ | ժդ | ժե | ժզ | ժէ | ժը | ժթ | ա | բ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ՎԵՐԱԴԻՐՔ** | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Վ | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 8 | 19 |
| Ս | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 7 | 18 |
| Ւ | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 6 | 17 |
| Ջ | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 5 | 16 |
| Պ | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 4 | 15 |
| Չ | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 3 | 14 |
| Ո | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 2 | 13 |
| Շ | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | 1 | 12 |
| Ն | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | * | 11 |
| Յ | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 29 | 10 |
| Մ | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 28 | 9 |
| Ճ | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 27 | 8 |
| Ղ | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 26 | 7 |
| Ձ | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 25 | 6 |
| Հ | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 24 | 5 |
| Կ | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 23 | 4 |
| Ծ | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 22 | 3 |
| Խ | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 21 | 2 |
| Լ | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 20 | 1 |
| Ի | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 19 | * |
| Ժ | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 18 | 29 |
| Թ | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 17 | 28 |
| Ը | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 16 | 27 |
| Է | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 15 | 26 |
| Զ | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 14 | 25 |
| Ե | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 13 | 24 |
| Դ | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 12 | 23 |
| Գ | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 9 | 20 | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 11 | 22 |
| Բ | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 8 | 19 | * | 11 | 22 | 3 | 14 | 25 | 6 | 17 | 28 | 10 | 21 |
| Ա | 1 | 12 | 23 | 4 | 15 | 26 | 7 | 18 | 29 | 10 | 21 | 2 | 13 | 24 | 5 | 16 | 27 | 9 | 20 |

[illegible]

# ԱՂԻՒՍԱԿ ԶԱՏԿԱԿԱՆ ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ

## ԸՍՏ ՆՈՐ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

| Եօթնե-րեակ | Շրջան Ներադրաց | Բուն Բարե-կենդան | ԶԱՏԻԿ | Համբարձումն | Հոգեգալուստ |
|---|---|---|---|---|---|
| Դ. | իգ ·<br>իբ · իա · ի · ժթ · ժը · ժէ · ժզ ·<br>ժե · ժդ · ժգ · ժբ · ժա · ժ · թ ·<br>ը · է · զ · ե · դ · գ · բ ·<br>ա · * · իթ · իը · իէ · իզ · 25 · իե · իդ · | Փետրվ. 1<br>8<br>15<br>22<br>Մարտ. 1 | Մարտ. 22<br>29<br>Ապրիլ. 5<br>12<br>19 | Ապրիլ. 30<br>Մայիս. 7<br>14<br>21<br>28 | Մայիս. 10<br>17<br>24<br>31<br>Յունիս. 7 |
| Ե. | իգ · իբ ·<br>իա · ի · ժթ · ժը · ժէ · ժզ · ժե ·<br>ժդ · ժգ · ժբ · ժա · ժ · թ · ը ·<br>է · զ · ե · դ · գ · բ · ա ·<br>* · իթ · իը · իէ · իզ · 25 · իե · իդ · | Փետրվ. 2<br>9<br>16<br>23<br>Մարտ. 2 | Մարտ. 23<br>30<br>Ապրիլ. 6<br>13<br>20 | Մայիս. 1<br>8<br>15<br>22<br>29 | Մայիս. 11<br>18<br>25<br>Յունիս. 1<br>8 |
| Զ. | իգ · իբ · իա ·<br>ի · ժթ · ժը · ժէ · ժզ · ժե · ժդ ·<br>ժգ · ժբ · ժա · ժ · թ · ը · է ·<br>զ · ե · դ · գ · բ · ա · * ·<br>իթ · իը · իէ · իզ · 25 · իե · իդ · | Փետրվ. 3<br>10<br>17<br>24<br>Մարտ. 3 | Մարտ. 24<br>31<br>Ապրիլ. 7<br>14<br>21 | Մայիս. 2<br>9<br>16<br>23<br>30 | Մայիս. 12<br>19<br>26<br>Յունիս. 2<br>9 |
| Է. | իգ · իբ · իա · ի<br>ժթ · ժը · ժէ · ժզ · ժե · ժդ · ժգ ·<br>ժբ · ժա · ժ · թ · ը · է · զ ·<br>ե · դ · գ · բ · ա · * · իթ ·<br>իը · իէ · իզ · 25 · իե · իդ · | Փետրվ. 4<br>11<br>18<br>25<br>Մարտ. 4 | Մարտ. 25<br>Ապրիլ. 1<br>8<br>15<br>22 | Մայիս. 3<br>10<br>17<br>24<br>31 | Մայիս. 13<br>20<br>27<br>Յունիս. 3<br>10 |
| Ա. | իգ · իբ · իա · ի · ժթ ·<br>ժը · ժէ · ժզ · ժե · ժդ · ժգ · ժբ ·<br>ժա · ժ · թ · ը · է · զ · ե ·<br>դ · գ · բ · ա · * · իթ · իը ·<br>իէ · իզ · 25 · իե · իդ · | Փետրվ. 5<br>12<br>19<br>26<br>Մարտ. 5 | Մարտ. 26<br>Ապրիլ. 2<br>9<br>16<br>23 | Մայիս. 4<br>11<br>18<br>25<br>Յունիս. 1 | Մայիս. 14<br>21<br>28<br>Յունիս. 4<br>11 |
| Բ. | իգ · իբ · իա · ի · ժթ · ժը ·<br>ժէ · ժզ · ժե · ժդ · ժգ · ժբ · ժա ·<br>ժ · թ · ը · է · զ · ե · դ ·<br>գ · բ · ա · * · իթ · իը · իէ ·<br>իզ · 25 · իե · իդ · | Փետրվ. 6<br>13<br>20<br>27<br>Մարտ. 6 | Մարտ. 27<br>Ապրիլ. 3<br>10<br>17<br>24 | Մայիս. 5<br>12<br>19<br>26<br>Յունիս. 2 | Մայիս. 15<br>22<br>29<br>Յունիս. 5<br>12 |
| Գ. | իգ · իբ · իա · ի · ժթ · ժը · ժէ ·<br>ժզ · ժե · ժդ · ժգ · ժբ · ժա · ժ ·<br>թ · ը · է · զ · ե · դ · գ ·<br>բ · ա · * · իթ · իը · իէ · իզ · 25 ·<br>իե · իդ · | Փետրվ. 7<br>14<br>21<br>28<br>Մարտ. 7 | Մարտ. 28<br>Ապրիլ. 4<br>11<br>18<br>25 | Մայիս. 6<br>13<br>20<br>27<br>Յունիս. 3 | Մայիս. 16<br>23<br>30<br>Յունիս. 6<br>13 |

